




891.99


28953.

F-24 Лягушка, Up.

Синеголовка из Киргизии:
2n. 504.

659 176 608







S. ԱՂԴԱՍԱՐՁԱՆ

ՎԻ. 1562

Օ ԱՐԱՎԵՆԵՐԻ ԱԾԽԱՐՁՈՒՄ



ՊԵՏԵՐԱՅ



A.M. 1562

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Գիտական պահպան

339.

891.99-93 U.S. ԲԱԼԴԱՍԱՐՅԱՆ

F-24

ԹՎԱԿԱՆ 1981 թ.

ՊԱՐԱՎԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

28353

11
A 27102



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱՎՈՒՔՈՒՆ

ՍԵՐԵԿԱՆ

★

1933

Պատ. խմբագիր՝ Յեղ Զարենց
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանիյան
Մըբ. Առ Հակոբյան յիշ Վ. Մաթևոսյան
Հքառ. Ան 2402, Գլավիլս Ան 7971(ը)
Պետհատի առաջան
Պատվեր Ան 8219, Տիրաժ 2000
Փարմատ 62X84, 1 Թնբրեամ 58400 տպ. Աշ.

Հանձնված ե աշտազրության 16 հոկտ. 1933 թ.
Առողադրված ե ապագրեկու 30 հունիսի 1933 թ.

Հոկտեմբերերյան հեղափոխության ժամանակ մակեդոնական ճակատում կռվող ռուսական եքսպեդիցիոն բանակն ապստամբեց դաշնակից պետությունների ղեմ և միացավ Պետրովգրադի Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհրդի որդան Ռազմահեղափոխական կոմիտեյին:

Ֆրանսիական զինվորական նախարարությունը, վոր դեկավարում եր ամբողջ դաշնակից բանակները, արյան մեջ խեղղեց ոռուս եքսպեդիցիոն բանակի ապօտամբությունը: Բալթազարը, վոր Փրանսիական զինվորական նախարարության կողմից կցված եր ոռուսական բանակին, անմիջապես յետ կանչվեց:

Յերկու չափաթը դեռ չեր լրացել, ինչ Բալթազարը վերադարձել եր արևելյան ճակատից, յերբ մի գիշեր, ուշ վերադառնալով իր բնակարանը, սեղանի վրա գտավ մի գեղին ծրաբ: Անմիջապես բանալով ծրաբը, Բալթազարը կարդաց հետևյալը՝ «Հայտնում ենք ձեզ, վոր դուք ուղարկվում եք Աֆրիկայի ճակատում գործող զինվորական ուժերի ընդհանուր հրամանատարի տրամադրության տակ: ամսույս 20-ին կլինեք Թուլոն՝ «Ժան-Ժակ Ռուսսո» զրահակիրով մեկնելու համար: Ձեր սպառավորը կուղեկցի ձեզ: Հետևապես; անհապաղ անցեք զինվորական նախարարություն, ստանալու անհրաժեշտ թղթերը»:

Ստորագրված՝

Զինվորական նախարար Ժորժ Կլեմանսոն:

Սույն պաշտոնական հրահանդը մահու չափ ծանր աղղեց Բալթազարի վրա. նա հազիվհազ կարողացավ

իրեն դցել բազկաթոռի մեջ և կրկին ու կրկին կարգաբ
զեղին ծրարով ստացած դրությունը։ Ամեն ինչ պարզ
եր, վորոշ և, վճռական, ստորագրված դինվորական նո-
խարարի կողմից։ Աւրեմն մի քանի որից պետք և չի
դեպի արարական աշխարհը։ Բայց ինչո՞ւ։

Բալթաղարը վոչ մի կերպ չեր կարողանում հաշո-
վել նախարարի վորոշման հետ. նրան թվում եր, վոր իբր
վերաբերմամբ կատարվում և մի զգվելի անորդարու-
թյուն։

«Յես կրողոքեմ», — մատծեց Բալթաղարը և վերց-
նելով գլխարկը, համարյա վաղելով դուրս յեկավ բնա-
կարանից ու իրեն նետելով առաջին հանդիպած տաքովի
մեջ, տվեց զինվորական կլուրի հասցեն։

«Նախքան բողոքելը անհրաժեշտ և խորհրդակցել
ընկերներիս հետ», — այս մտքով Բալթաղարը մտավ
Շանզելիքեյի զինվորական ակումբի վոսկեղոծ դահ-
մեճը։

Թեե կես դիշերը վաղուց անցել եր, բայց կայազորի
բոլոր սպաները դեռ այդտեղ ելին։

Համաշխարհային պատերազմը, վոր արևելքից մին-
չեւ արևմուտք գերեզմանոցների յեր վերածել աշխարհը
և ծածկել սե քողով, կարծես այդ բոլորը վոչ մի նշա-
նակություն չեր ունեցել շփայցած ու դոռող սպաների
համար։ Նրանք, հարբած իրենց «Հաղթությամբ», ա-
վելի և ավելի անբարտավան եյին դառել։

Բալթաղարն այդ խառնիճաղանճ միջավայրում
զբաղված եր իր ծանոթներին մինտոելով, յերբ հանկարծ-
ականջին հասավ մի ծակող ձայն, վոր բարձրագոչ ա-
սում եր.

— Մենք թույլ չենք տա վորեւ մեկին վիրավորելու
մեր նիկերական յեռագույնը։ Եեթե յերեկ մենք մեր
վոտքերի տակ ջախջախեցինք գերմանական յերկդլխա-
նի արծիվը, այսոր պատրաստ ենք ամբողջ Աֆրիկան
Հրի ու սրի ճարակ դարձնելու, յեթե այդ վայրենի բի-
կոները հանդինեն ապստամբել մեր դեմ։

Բալթաղարն ակամայից ավելի և ավելի մոտեցավ

ՀՀայրենասեր» ճառախոսին և նրանք հանկարծ դեմ առ
գեմ կանգնեցին:

Ճառախոսը շփոթվեց. կարճ կտրեց ճառը, մոտե-
ցալ զարեջրի սեղանին, դատարկեց հաստափոր գա-
գաթը, մի քանի անկատ խռոքիր փոխանակեց Բալթա-
գորի հետ ու հեռացավ:

Բալթազարն իմացավ տմեն ինչ. —Աֆրիկան ապրա-
տամբել ե, Փրանսիական կառավարությունն շատապ
զորքեր և փոխադրում ապստամբությունը ձնշելու: Խո-
տում են Ռմարի աշխաթների մասին, վոր արդեն դրա-
վել են մի շարք ռազմադիտական նշանակություն ունե-
ցող կետեր և սպառնում են գրավել Ռուսը:

«Ուրեմն բողոքելն ավելորդ ե», —մտածեց Բալ-
թազարը և գուրծ յեկավ զինվորական ակումբից, վոր-
տեղ վխառում եցին միայն ալիոնովի հերոսները:

Վերադառնալով կրկն իր բնակարանը, Բալթազա-
րի բոլոր ջանքերը զուր անցան քնելու. մի տարորինակ
անհանդատություն եր զգում նա: Ծխախոտի առաջին
տուփն արդեն զատարկվել եր, բայց նա վոչ մի կերպ
չեր կարողանում հանդստացնել իր բորբոքված նյարդե-
րը: Նրա մտքերը թռչում եցին ավելի արագ, քան յեր-
բեիցե: Բալթազարը մերժ իրեն յերեակայում եր ար-
դեն Աֆրիկայում, շրջապատված հազարավոր անմեղ
դիմակներով, մերժ անդրադառնում եր Վերդենի հար-
միր սպանդանոցը, արեւելյան ճակատը, և հիմա Շան-
զելիզեյի զինվորական ակումբը, վորտեղ «Հերոսը»
անողոք սպառնալիքներ եր տեղում բերբերների, մավ-
րերի և տուարեգների հասցեյին, վոր հանդզնել են խան-
գարել Փրանսիական բուրժուազիայի բորսայի աշխա-
տանքները:

Բայց ո՞վ եր այդ գաճաճը, վոր ոդի մեջ շարունակ
ձոնեցնում եր իր վիրավորված ձեռքը, վորը նա «զո-
հել» եր հայրենիքի փրկության համար:

Բալթազարն եր միակ կենդանի վկան, վոր տեսել
եր, թե ինչպես ե վիրավորվել նրա ձեռքը: Ավոկրյան
անդառում «Հերոս» Դյուպոնի գունդը պետք ե հարձակ-

ման դիմեր. այդ դուք չեր զալիս «Հայրենասերին», վորովհետև մահն անխուսափելի յեր, հետեւաղես, առանց տպանմվելու, նու ձախ ծեռքը վաթաթում և թաց շորերով և աջով կրակում ու վիրավորում և ծեռքը, վորպեսզի չմագնակցի պատերազմին և հիմա զանազան մուրհակներ և ներկայացնում ֆրանսիական կառավարությանն իր «անձնազոհ» աշխատանքների համար:

Հետևյալ առավույան, յերբ Բալթազարի արար սպասավոր Մուսան թեյի բաժակը ձեռքին ննջարան մտավ, նա դատավ Բալթազարին նիրհած ըսպիկաթուի մեջ:

Եերկու խոսքով Բալթազարը պատճեց Մուսային յեղելությունը և պատմիրեց պատրաստվել վաղը չեմ յուս որը մեկնելու համար:

— Ծուիա, — ասաց Մուսան Ժպտալով:

Նախաճաշից հետո Բալթազարի առաջին գործը յեղավ զինվորական նախարարություն վնալ՝ ճանրորդության համար անհրաժեշտ թղթերն ստանայու:

Իսկ Մուսան, մանկական ժպիտը թուխ դեմքին, արարական մելոդիաներ մզմզալով, ճանապարհորդության պատրաստություն եր անսնում: Նրա ուրախությունն անսահման եր. յերկար տարիներից հետո վերջապես նրան հաջողվում է կրկին վճռք զնել իր ծննդավայրը, վարաեղ հավիտենական սրեն և թագավորում:

Զինվորական նախարարության մեջ Բալթազարը հանդիպեց իր ին ընկերներից մեկին, վոր նախարարության մեջ յուղոտ պաշտոն ուներ. Բալթազարն ուղեց իմանալ, թե ինչպես յեղավ, վոր իրեն նշանակեցին Աֆրիկա:

Պաշտոնյան ժպտաց:

Բալթազարը պնդեց:

— Յեկ ոպերայի սրճարանը, կընթրենք միասին և կիսունք: Ժամը 8-ին քեզ կապասեմ, — ասաց Բալթազարի ընկերը և մտավ հարեան սենյակը:

Քիչ վերջը պաշտոնյան դուրս յեկավ, ձեռքին բռնած մի կապոց զանգան թղթեր:

— Սրանք բոլորն ել Աֆրիկա յեն մեկնում, —ասաց
պաշտոնյան Բալթազարին:

— Բայց այսուամենայնիվ ասա խնդրեմ, ինչպե՞ս
յեղալ, վոր ինձ ել նշանակեցին, —կըկին հարցապնդեց
Բալթազարը:

— Կապիտան Դյուպոնն առաջարկեց քո թեկնածու-
թյունը:

— Կապիտան Դյուպոնը, —բացականչեց Բալթա-
զարը:

— Այո, կապիտան Դյուպոնը, ի՞նչ կա վոր, —ասաց
միանգամայն միամիտ տոնով պաշտոնյան:

— Յերեկոյան ամելի ընդարձակ կիսուենք, —ավե-
լացրեց նաև անհայտացալ:

Բալթազարը սրբեց ճակատի քրախնքը և համբ
քայլեցով թողեց նախարարությունը:

Վորքան ժամանակ եր, վոր Բալթազարը դուրս եր
յեկել զինվորական նախարարությունից, չեր հիշում,
բայց վոտքով, մասմոլոր նա արդեն անցել եր բուրքուր
Սենժերմենը, Մոնպարնասը, կրկին վերադարձել եր
Սեն-Միշել, անցել Ռիվոլի, Համաձայնության հրապա-
րակը, և վերջապես, արդեն մեծ բուլվարների վրա յեր:

Աննկարաբքելի անհամըերությամբ նա անընդհատ
նայում եր իր ժամանույցի ալաքին՝ ստողելու, թե ժա-
մի 8-ը յե՞րս պետք ել լինի: Ինքնաբերարար նա մտով
մի սրճարան, պատվիրեց մի բաժակ սուրճ, վառեց
ծխախոտը և թաղվեց մտքերի փոթորկալից ծովի մեջ:

«Հազարապետ Դյուպոնը միջոցների մեջ խորու-
թյուն չի զնում ասպարեղից հեռացնելու ինձ», — մտա-
ծում եր Բալթազարը: — Աֆրիկան ալստամընել ե. նա
այլևս չի ուզում տանել ավազակ տերերի ծանր ու ժան-
դառ լուծը: Յեկ Փարիզը չափազանց անհանդիս ե.
Ալժիրի և Արանի հանքերի ակցիաներն ընկել են, բոր-
սայում տիրում ե մեծ շփոթ, Ֆրանսիական բուրժու-
ազիան շտապով գորաբանակներ ե տեղափոխում Աֆրի-
կա, արյան մեջ խեղդելու ապստամքությունը:

Մանր վերքերը դեռ կապուած, մնաքում եր Փարի-

զը, որոցվելով։ Հետղհետե ավելի և ավելի եյին դդալի դառնում ֆրանսիական խմբերիալիզմի «կառաջեղ հաղթանակի» հետեանքները։

Նոր հարուսաները, վոր կապիտալ եյին դիզել միւնավոր զոհերի ջախջախված վուկրների դնով, Շնայդեր ավտոների մեջ ոլանում եյին աջ ու ձախ, իսկ քայլայլած ու հյուծված ժողովուրդը տիտուր ու տրատուց մտածում եր, թե ինչպես ճեռք բերի իր որվա պարենը։

Ցերեկոյան ժամը օլին Բալթաղարը մտավ ոսկերայի սրճարանը։ Նախարարության պաշտոնյան արդեն սպասում եր։ Անցնելով մի քանի դահլիճ, նրանք վերջապես առանձնացան մի անկյուն։

Բալթաղարն իմացավ, վոր կապիտան Դյուտունն այժմ պաշտոնավարում ե զինվորական նախարարության մեջ գաղութային բաժնում և նա պահանջել ե, վոր Բաթաղարը գնա Աֆրիկա։

— Գիտես, շատ մեծ դիրք ունի կապիտան Դյուտունը. զինվորական նախարարը լուրջ հաշվի յե առնում նրա կարծիքը։ Նրան եր հանձնարարված կազմել Աֆրիկա մեկնող սպաների ցանկը։ Իհարկե, այդ բոլորի մեջ մեծ դեր ե խաղում ե կապիտան Դյուտունի կինը, վոր դասված ե Փարիզի առաջնակարգ գեղեցկուհիների շարքը։

Ընթրիքը վերջացրել, հավանյան սիզար եյին ծխում, վոր Բալթաղարը դառնալով, հարցրեց սեղանակցին։

— Ուրիշ ովքե՞ր են մեկնում Աֆրիկա «Ժան-Ժակ Ռուսո» զրահակալիքով։

— Մի խումբ սպաներ և գեներալը՝ իրենց ընտանիքով և տիրահռչակ Մորիսը։

— Ո՞վ ե Մորիսը, — հարցրեց Բալթաղարը զարմացած։

— Զե՞ս ճանաչում, նրա մասին շատ են դրել մայրաքաղաքի որաթերթերը։

— Վոչ, չեմ ճանաչում։

— Նրա պատմությունը յերկար ե, նա մեղադրվում է

Ե իրքեւ բայց չեիկ. ոռուսական հեղափոխության ժամանակ նաև մտածում եր ապօտամբեցնել բանակը և արշավել Փարիզի վրա: Թեև մի քանի անդամ դատավարություն տեղի ունեցավ, բայց չկարողացան հաստատել: Նույնպես ասում են, վոր պատերազմի ժամանակ կուպեր եր պահպաննել մի գերմանուհու հետ: Բայց և այնպես նախարարության կարծիքն այն ե, վոր նա բայց չեիլ ե և դավաճան:

— Բայց ինչու այդպիսի մի վտանգավոր բայլ-չեիկի ուղարկում են Աֆրիկա:

— Նրա անհատական գործի վրա կարմիր թանաբով յերեք խոչ և դրված:

— Ի՞նչ են նշանակում այդ խաչերը:

— Մահ, — ամենայն անտարբերությամբ պատասխանեց զինվորական նախարարության պաշտոնյան:

— Այսուհետեւ դժվար և նրան վնասել, ուժեղ փառեր չկան, իսկ այնահեղ, Աֆրիկայի մի անկյունում, կզնդակահարեն և մայրաքաղաքի թերթերում ել կհայտարարեն, վոր Մորիսը հերոսաբար ընկալ հայրենիքի համար: Յեվ դա նրա համար կլինի ամենից պատվարեր մահ:

Շամպայնի ազդեցութան տակ զինվորական նախարարության պաշտոնյան սկսեց մի առ մի նկարագրել Աֆրիկայի ապստամ բության մանրամասնությունները:

— Ապստամ բությունը բանկվել ե նույնիսկ արարական գորարանակներում, վորի պատճառով՝ արգենգնդակահարված են մի քանի աչքի ընկնող սպաներ, — ասաց պաշտոնյան և ավելացրեց: — պետք ե զգույշ լինել, ամեն տեղ բազմաթիվ լրտեսներ են վխառում:

Ուշ գիշեր եր: Բալթազարը, սեղմելով բարեկամի ձեռքը, բաժանվեց նրանից և մտախոհ վերադարձավ իր ընակարանը: Բալթազարն արդեն մոռացել եր Աֆրիկա մեկնելու կարգադրությունը, այժմ նրա ուղեղում պատվում եր միայն Մորիսը: Ո՞վ ե այդ խիզախ սպան, — մտածում եր նա և կարծես ուրախ եր, վոր կապիտան Դյուլպոնն իրեն Աֆրիկայի ուղարկում, վորովհետեւ նա

սուիթ կրանենա . տեսնելու մահվան դատապարտված
բայց և ի կիրակին:

Տուն վերտպառնալով, Բալթաղարը դտավ ծառա-
յին սաստիկ դրաղված ճանապարհորդական պայուսակ-
նելը լցնելով:

— Դու պատրա՞ստ ես, Մուսա, — հարցրեց Բալ-
թաղարը ծխամորճը վառելով:

— Պատրաստ եմ, — պատասխանեց Մուսան Ժըպ-
տալով: — Բայց ինչպիս յերեսում ե, դուք շատ ել գուն
չեք Աֆրիկա զնալու համար:

— Վոչ, Մուսա, յես վոչ մի ցանկություն չունեմ
Աֆրիկա գնալու:

— Աֆրիկան գեղեցիկ ե:

— Բայց շատ տաք ե:

— Այո, տաք ե, բայց Աֆրիկայի արելը հավասար
կերպով տաքացնում ե բոլորին՝ թե դժբախտին և թե
յերջանիկին:

— Դու դժբա՞խտ ես, Մուսա, — հարցրեց Բալթա-
ղարը, նստելով բաղկաթոսի վրա:

— Դժբախտ եմ:

— Ինչո՞ւ.

— Ինչպես կարող եմ յերջանիկ լինել. մենք յեր-
ջանիկ լինելու իրավունքից զրկված ենք, վորովհետեւ
մեր թշվառության չնորհիվ միայն հարուստները կա-
րող են յերջանիկ լինել, — ասաց Մուսան և բաժակը ձեռ-
քին դուրս յեկավ:

Մուսան շատ լավ ծանոթ եր Բալթաղարին և առա-
ջին անգամը չեր, վոր նա այդպիսի արտահայտություն-
ներ եր անում: Մուսան Սահարայի «ազատ» քաղաքացի
յի: Արդեն լրացել եր 10 տարի այն որից, յերբ Փրան-
սիական հրամանահարությունը նրան բռնի «կամա-
վոր» արձանադրեց յերկրորդ Միքայելների գնդում.
Մուսան 10 տարի շարունակ պատերազմներում եր յե-
ղել. նա մասնակցել եր Մարտկույի, Թունիսի, Սենե-
գալի և Հետո համաշխարհային պատերազմին, վիրա-
գործել եր մի քանի անգամ, և զրեթե հաշմանդամ դր-

ուել: 10 տարի յեր, վոր Մուսան Ալֆայի անապատում
թողել եր իր կնոջն ու յերեխաներին և զնացել պաշտպա-
նելու տիրողների ու շահագործողների հայրենիքը:
Չնայած նրա բազմաթիվ դիմումներին՝ իրեն աղատե-
լու դինվորական ծառայությունից, վորակեսվի հնարա-
վորություն ունենա վերադառնալու իր ընտանիքի մոտ,
կասավարությունը նրան չեր աղատում: Եերկար տա-
րիներ շարունակ շփում ունենարավ Փրանսիացի կովկած
բանիկորների հետ, Մուսան բաշական յուրացրել եր դա-
սակարգացին պայքարի իմաստը: Եերբ նա իմացավ
Հոկտեմբերյան հեղափոխության մասին, ամեն որ
խնդրում եր Բալթազարին իրեն սպատմել, ինչ վոր կար
լրազրերում այդ ուղղությամբ, և ամեն որ ամենայն
համբերությամբ Բալթազարը կարդում և թարգմանում
եր նրան խորհուրդների յերկրում կատարված անց
ու դարձի մասին: Մուսան հազիվ 45 տարեկան կլիներ,
բայց թունավոր դազերը, շրապնելից ստացած բազմա-
թիվ վերքերը և 10 տարվա տաժանակիր, չարքաշ կյան-
քը խորը կերպով ծերության դրոշմ ելին դրել նրա թուխ
դեմքին:

Մուսայի գնալուց հետո Բալթազարը կըկին անդքա-
ղարձավ Մորիսին՝ վոչ մի կերպ չեր կարողանում մտքից
հեռացնել այդ խիզախ սպային: Մորիսը նրա համար
դառել եր մի պահանջ. նա զգում եր, վոր կլանիլում և
Մորիսով, նա նույնիսկ միքանի անդամ փորձ արեց մո-
ռանալ նրան, բայց անհնար յեղավ:

— Մորիսն անպայման արտակարգ մարդ ե, նա սովո-
րական մահականացու չե, նա մեկը չե այն բազմաթիվ-
ներից, վոր ապրում են սողալով, մուրալով կամ խընդ-
ըելով, —խոսում եր ինքն իրեն հետ Բալթազարը և
ծխում ծխամորմը: Նա մի աներեակայելի ցանկու-
թյուն եր զգում որ առաջ տեսնել Մորիսին, վորին խա-
շելով Սահարայի անապատն են ուղարկում դնդակահա-
րելու և ապա «Հերոսացնելու» նպատակով: «Այստեղ
դժվար ե նրան վնասել, վորովհետեւ բացակայում են
փաստերը», —հիշեց իր բարեկամի խոսքերը, վոր ասել

Եր նա այնքան պաղարյուն, անտարբեր կերպով, կարծես խնդրի առարկան մի մարդ չեր, այլ մի խլուրդ, կամ նույնիսկ մի աննշան ու չնչին անշունչ առարկա, վորին կարելի ցե ազբակույտի մեջ գցել տոանց խղճի խայթի:

Այս բոլորը Բալթաղարին թվում եր անրնական, անարդար և նույնիսկ զարհուրելի:

Զինվորական ատյանն առհասարակ մեղավորին արդարացնելու սովորություն չունի, և այդ ատյանը, յեթե չի կարողացել Մորիսին չարդարացնել, դա նշանակում է, վոր Մորիսը մաքուր է, ինչպես ծյունը: Յեկայդ անմեղ մարդու գործի վրա արդեն մահվան կնիքն է դրված: Նա վոչ մի հանցանք չի գործել, հետևապես ինչո՞ւ Փրանսիական հանրապետական «դեմոկրատիկ» կառավարությունն այդքան անողոք և այդ սպայի նկատմամբ:

Հետեւյալ որը առավոտյան ժամը 7-ին, Բալթա-
զարը Մուսայի հետ արդեն կայարանում եր:

Յերբ նրանք դրավիցին իրենց տեղերը ճեպընթա-
ցում, Բալթազարը կրկին թաղվեց իր մտքերի մեջ:

«Կատրիան Դյուպոնն ինձ քշում և ծարավների աշ-
խարհը, վորովհետեւ յես միայն դիտեմ, թե ինչպես նա
«զոհեց» իր ձեռքը հանրապետական ֆրանսիան փրկելու
գերմանական յունկերներից», —զայրացած, դառնա-
ցած ու վշտացած մտածում եր Բալթազարը և միջոցներ
եր վինտուում անզայման վրեժինդիր լինելու Դյուպոնից
և հասարակության սեփականություն դարձնելու Դյու-
պոնի կատարած կեղծիքը:

Բայց Մորիսը, Մորիսի անունը հաղթում եր ամեն
ինչ: Կրկին Բալթազարը հափշտակվեց Մորիսով. նա
անհամբեր եր շուտ Թուլոն հասնելու, վոր ժամ առաջ
տեսնի այլ խսկական հերոսին:

«Ես կմտերմանամ նրա հետ, հետո կհայտնեմ
նրան ֆրանսիական կառավարության ստոր վորոշումը
և կաջակցեմ նրան մի կերպ ազատվելու դրանից», —այս
մտքերի մեջ եր Բալթազարը, վոր հետզհետե մի տարո-
րինակ հողնածություն զգալով, հենվեց վագոնի կար-
միր թավշապատին և փակեց աչքերը:

Լիոնը վաղուց եյին անցել, բայց Բալթազարը դեռ
չեր արթնացել:

— Տարասկոն, Տարասկոն, Իսպանիա մեկնողները
թող իջնեն, —հոգնած ձայնով յերգելով, մի վագոնից
մյոււն եր անցնում յերկաթուղու պաշտոնյան: Այդ ժայ-
նից Բալթազարը բացեց իր աչքերը, և սաստիկ ծարավ
զգալով, վորոշեց ցած իջնել մի բան խմելու:

Թուլոնի կայտրանն եր:

Ճանապարհորդներն արագ-արագ իջնում եյին և
կտրելով քաղաքի յերկար փողոցները, ցրվում եյին ոչ
ու ձախ:

Բալթաղարը Մուսայի հետ անմիջապես ուղեղորդեց
զինվորական նավահանգիստ, վորի մուտքը խիստ կեր-
պով պահպանվում եր:

Նավահանգստում Բալթաղարը հանդիպեց բազմո-
թիվ ծանօթների և ընկերների: Այսաւել եր և զեներալ
Ժերվեն իր յերկու աղջիկների՝ Ալիսայի և Ժյուլիտի
հետ, և բոլոր այն սպաները, վորոնք մեկնում եյին Աֆ-
րիկա «քաղաքակալրթելու, վայրենիներին»:

Բայց Մորիսը չկար:

Հատուկ նավերով պարոնայք սպաները տեղափոխ-
վեցին զրահակիրը, վոր զարդարված եր զանգան մեծու-
թյամբ դրոշակներով. յերաժշտախումբն անընդհատ
նվազում եր զանազան մարշեր ի պատիվ սպաների:

Շատ չանցած, յերկաթե ամրոցը քաշեց խարիսխը,
բարձրացրեց ծովակալի դրոշակը և թնդանոթների յոթ
հարվածներով նավահանգիստը դղբդացրեց ու կատաղի
վիշապի սկս մռնչալով, դուրս սողաց նավահանգստուի
նեղ անցքից, բռնելով Աֆրիկայի ուղղությունը:

Բոլորը հավաքված եյին զրահակիրի ընդարձակ և
վոսկեղոծ դաշկիճում: Նավապետը պաշտոնական հա-
մազդեստով և զանազան ձևականությամբ, պարոնայք
սպաներին ներկայացնում եր զրահակիրի սպայական
կաղմը:

Գեներալ Ժերվեն իր կողմից ներկայացրեց Աֆրիկա
մէկնող սպաներին: Այդ ձևականությունն ավարտելուց
հետո, սպաներին առաջնորդեցին իրենց կայուտները,
վոր նախորոք արդեն համարակալված եյին յուրաքան-
չյուր սպայի համար առանձին: Ծովակալը վոչինչ չեր
խնայել, վոր ճամփորդող սպաները վայելեն ամեն ուն-
ակի հարմարություններ:

Սպաների առաջին գործը յեղավ հանել իշենց խակի
համազգեստները և հագնել սպիտակ համազգեստներ,
ինչպես պահանջում և զբահակրի որմնքը: Այդ բոլոր
ձևականությունները չափազանց ծանծըալի ելին Բալ-
թաղարի համար: Նա հայացքով արեն տեղ լինուում եր
Մորիսին, բայց նա չկար:

Բալթաղարը բարձրացավ նավի տախտակամածի
վրա և այդտեղից դիտում եր ծովը:

Ծովին անհանգիստ եր և կտտաղած, ալիքները,
զարնվելով ամբողի պողպատե պատերին, փոշանում
ելին: Զրահակիրը սրանում եր արագրնթաց և նրա չորս
ծիններույղներից քուլա-քուլա դուրս ժայթքող բարձր
ծուխը սփովում եր Միջերկրականի վրա: Զրահակիրի
զեկավար անիվը պտտում եր իր ամբողջ թափով և փրբ-
փուրե ճանպարհ կազմում զրահակիրի համար: Պողպատէ
ամբոցը, կարծես արհամարհական հայացք գցելով ծովի
զայրացած ալիքների վրա, անվրդով և տառնց տատան-
վելու շարունակում եր իր ճանապարհ:

Բալթաղարը խորասուղված եր իր մաքերի մեջ,
հենված ճաղերին, դիտում եր Միջերկրականի անսահ-
ման տարածությունը, յերբ հանկարծ նրան մոտեցավ
մի գեղեցկատեսիլ յերիտասարդ սպա, բարեւեց և ասոց.

— Դուք ինձ չե՞ք հիշում, մենք հին ծանոթներ ենք:

Բալթաղարը զարմացած նայեց խոսակցին, պրապեց
հուշերը և հիշեց այդ սպային, վոր սպիտակ ու վոսկե-
զոծ համազգեստի մեջ ավելի քան գեղեցիկ եր:

— Այո, այո, մենք ձեզ հետ հանդիպել ենք Վերդենի
ճակատում, — ասաց Բալթաղարը, ամուք սեղմելով գե-
ղեցիկ սպայի ձեռքը:

— Դուք 132-րդ բանակումն եյիք, մեզ միացաք
304 համար բլուրի վրա հարձակման ժամանակ, — ավե-
լացրեց Բալթաղարը:

— 17 հազար հոգով խրամատներ մտանք, միայն մի
քանի հազար վիրավորներով՝ կարողացանք այնտեղից

զուրս դաշտ, —վրա բերեց սպան առքորդինակ տոնով, վորե
մեջ կար և՝ զայրուցթ, և՝ զզվանք, և՝ հաստչանք:

Սպան և Բալթազարը տեղափորվեցին յերկար նստա-
բանի վրա, կողք-կողքի և սկսեցին վերհիշել համաշ-
խարհային սպանդի գրվագները:

Բալթազարը վողիվորված սկսեց վերհիշել Ավոկ-
քյան անտառում տեղի ունեցած ճակատամարտերը:

— Հիշո՞ւմ ես արյունոտ անտառը, վորի յուրաքան-
չյուր ծառն իր վրա բազմաթիվ մարդկացին դիսկների
մասնիկներ եր կրում, կարծես ամբողջ անտառը մի դի-
վային տոնածառի յեր վերածվել, միայն այն ապրե-
րությամբ, վոր նրանք փոխանակ գույնդույն իրերով
զարդարվելու, զարդարված եյին հազարավոր յերիտա-
սարդների ջախջախված գտնվերով: Տեսարանը քստմնելի
յեր, սարսափելի և դժոխային... Յեղ այդ դիսկազարդ
ծառերի շուրջը բազմաթիվ վարձկան դահիճներ դա-
րան մտած, իրար եյին հոշուում, կարծես նրանք պար
եյին բռնել մահաչունչ կաղնիների շուրջը, —ասաց գեղե-
ցիկ սպան, վեր կենալով: —Ներիր ինձ, խոնավ և, յես
ուզում եմ ցած իջնել, —ավելացրեց նա և գնաց:

Բալթազարը դիտում էր հետացող սպային, վոր մո-
տեցավ մեծ կամարին, վորի վրա վոսկեղոծ տառերով
գրված եր. «Հարդանք հայրենիքին»: Ըստ որենքի, յու-
րաքանչյուր զինվորական, յերբ անցնում է այդ կամարի
տակից, պետք է զինվորական բարե տու և անցնի: Բայց
Բալթազարը շատ պարզ նկատեց, վոր գեղեցկատեսիլ
սպան անցավ կամարի տակից և հարդանք չմտառուցեց:
Այդ նկատեցին և մյուս սպանները, նրանցից մի քանիսը
զայրացած, նույնիսկ մի յերկու քայլ առաջ անցան ու
խիստ նայեցին «անդիսցիսլին» սպայի հետեկց, վոր
դնում եր առաջ:

Բալթազարը գիշերը շատ անհանդիստ եր. նա
մինտուում եր Մորիսին:

— Յերեի այս նավով չպիտի դա, —մտածում եր

Բալթաղարը և շատ եր ցավում, վոր այդ տարորինակ մարդուն տեսնելու բախտը չպիտի ունենա: Պառկած մահակալի վրա, նա անընդհատ մտածում եր այն հանդուզն բայց նիկի մասին, վոր ծրագրել եր ապստամբեցնել բանակը և արշավել Փարիզի վրա:

Այլևս անհնար եր Բալթաղարի համար իր խցում յերկար մնալ, ուստի դուրս յեկավ տախտակամած առավոտյան արշալույսը դիտելու:

Ծովը խաղաղ, հարթ, ինչպես ապակի, կարծես յերկար և անհավասար մենամարտից հետո նիրհում եր անվրդով. վոչ մի ալիք, վոչ մի շարժում, միայն հսկա զրահակիրը մոնչալով, իր սուր ծայրով ճեղքում եր հոգնած և անզոր ծովի կուրծքը:

Հնչեց նախաճաշի զանդը. սպաները հավաքվեցին ընդարձակ սեղանատունը: Բոլորը գրավել եյին իրենց տեղերը, յերբ հանկարծ ծանր քայլերով ներս մտավ գեղեցկատեսիլ սպան: Նրա մուտքը հաղթական եր, և մի տեսակ ծանր ու ճնշիչ տպավորություն գործեց բոլոր սպաների վրա:

Սպաները թեթև շփոթից հետո, սկսեցին հեգնական միմիկաներով իրար նայել:

Բալթաղարը զարմացած դիտում եր այդ բոլորը, իսկ գեղեցիկ սպան անվրդով և հանդիսա նախաճաշում եր:

Բալթաղարը հիացած նայում եր գեղեցիկ սպային, բայց վոչ մի կերպ չեր կարողանում հիշել նրա անունը, ուստի և դիմելով իր մոտ նստած սպային, հարցը եց.

— Ինչպե՞ս ե այս սպայի անունը:

— Զգիտե՞ս:

— Վոչ:

— Համենայն դեպս մեծ բան չես կորցնում:

— Ինչո՞ւ:

— Բայց նիկ ե, դավաճան, ոռւսական աղենտ:

— Անո՞ւնը:

— Մորիս:
— Մորիս, —բացականչեց Բալթազարը շփոթված.
նա հազիվ կարողացավ իրեն զապել:
«Մորիս, Մորիս, Մորիս», —կրկնում եր մտքի մեջ
Բալթազարը: Նրա սիրոտն սկսեց ուժդին բարախել:
Ակամայից ձեռքը սեղմեց սրտին, շփեց ճակատը և
սկսեց կրկին դիտել Մորիսին: Նա ավելի քան գեղեցիկ
էր, վարդագույն այտերով, մաքուր սափրոված դեմքով:
Նա իր ինքնավտահ և իր վրա համարում ունեցող մար-
դու հատուկ ձեերով պատկառանք եր ազդում:

Մորիսն ամենայն հանդարտությամբ վերջացրեց
նախաճաշը, բարձրացավ տեղից և մի արհամարհական
խիստ հայացք դցելով շուրջը, դանդաղ քայլերով թո-
ղեց սեղանատունը:

Մորիսի դուրս գնալուց հետո տիրեց մի տեսակ
ծանր լուստթյուն:

Բալթազարը վորոշեց անմիջապես զուրս դալ Մորի-
սի հետեւից, բայց նրա մոտ նստած եր գեներալ Ժերվեյի
աղջիկ ժյուլետան և նա ստիպված եր նրան զբաղեցնել:
Ժյուլետան և Բալթազարը հին ծանոթներ եյին, նրանք
յերկար տարիներ միասին զբոսնել եյին Փարիզի սա-
ղարթախիտ պարտեզներում, նույնիսկ նրանց մեջ յեղել
եր մի անցողակի ռոման, վորը հետզհետե սառել ու հայ-
վել եր: Բայց մտերմական կապի հետքերը դեռ վերջնա-
կանապես ջնջված չեյին վոչ մեկի և վոչ ել մյուսի մեջ:
Ժյուլետան նկատել եր, վոր Բալթազարի ամբողջ ու-
շադրությունը գրավել և Մորիսը: Դառնալով Բալթա-
զարին, ասաց.

— Շատ գեղեցիկ յերիտասարդ ե այդ պարոնը:

— Ո՞վ, —հարցրեց Բալթազարը շփոթված:

— Լեյտենանտ Մորիսը:

— Այո, ժյուլետա, չափազանց գեղեցիկ ե:

— Բայց ափսոս վոր այդ յերիտասարդը համառ ե

և ինչպես ասում են, անժիտ գաղափարներով և տաք-ված:

— Ինչպե՞ս, — հարցրեց Բալթազարը և շատ գոհ եր, վոր խոսակցության նյութը Մորիսն եր. նա մեծ ցանկություն ուներ մանրամասն իմանալու Մորիսի ամբողջ կյանքը:

— Հայրս շատ ե խոսում նրա մասին և չափազանց վրդոված ե, վոր Փրանսիական բանակում այդպիսի մտայնությամբ սպաներ կան:

— Իսկ ի՞նչ ե նրա հանցանքը, ի՞նչի մեջ են մեղադրում նրան:

— Բայց եիկ ե և պատերազմի ժամանակ մտերմական հարաբերության մեջ ե յեղել մի գերմանուհու հետ, հակառակ ե կառավարության և այլն և այլն:

— Ինձ վոչինչ հայտնի չե, — ասաց Բալթազարն անփույթ կերպով:

— Իսկ յես այդ բոլոր խոսակցությանը մի սենթի արժեք չեմ տալիս և հորս հետ միշտ վիճում եմ լեյտենանտ Մորիսի համար:

Քիչ վերջը անցան դահլիճ: Սպաները խումբ-խումբ նստած բամբասում և վատարանում եյին լեյտենանտ Մորիսին, վոր կամարի տակից անցնելիս զինվորական հարդանք չմատուցեց հայրենիքին: Հաղարապետ Մարտանն աշխատում եր հանդստացնել «Հայրենասեր» սպաներին, գտնելով, վոր զինվորական ետիկային հակառակ և այդպես անողոք լինել մի յերիտասարդ սպայի վերաբերմամբ:

— Նա իր անտակտ վարմունքի համար կենթարկվի նկատողության, — ասաց Մարտանը և գուրս գնաց:

Բայց պարոնայք սպաները չբավարարվեցին գեներայի տված բացատրությամբ և սկսեցին զանազան ածականներ շպրտել լեյտենանտ Մորիսի հասցեյին:

— Բայց եիկ, դավաճան, — ասաց գնդապետ Հերմոնը:

Հենց այդ վայրկյանին վարագույրը յերկու մասի
բաժանվեց և դռների մեջ յերեաց լեյտենանս Մորիսը:

Տպալորությունը ցնցող եր, բորբոքված սպաները
ցրվեցին:

Իսկ Մորիսը հաստատ քայլերով ու մեղմ ժպիտը՝ յե-
րեսին, մոտեցավ Բալթազարին և Ժյուլետային:

— Կարելի՞ յե նստել:

— Ենդրում ենք, — պատասխանեց Ժյուլետան, մեղմ
և սիրալիք ժպտալով:

— Բայց մի՞թե դուք բայցեկից չե՞ք վախենում, —
ասաց Մորիսը հեզնական ակնարկ նետելով սպառների
կողմը և տեղավորվելով բազկաթոռի մեջ:

— Մենք բոլորս ել բայցեկիկ ենք, — ասաց Ժյուլե-
տան ծիծաղելով:

— Բայց դավաճան:

— Դրանք խոսքեր են, վոր մասնավորապես պատե-
րազմի ժամանակ շատ եժան են ծախվում: Յեթե դուք
պատիվ ունեք կրելու այդ գեղեցիկ համազգեստը, դա
ապացույց ե, վոր դուք դավաճան չեք, — պատասխանեց
Ժյուլետան, հովհարը շարժելով:

— Դուք կարծո՞ւմ եք, որիորդ:

— Ես համոզված եմ:

Բալթազարը լուռ եր. նա կուղեր մենակ լինել Մորի-
սի հետ: Բայց թե ինչ պիտի ասեր, ինչպես պիտի սկսեր
խոսակցությունը, այդ մասին դժվարանում եր վորեւ
վորոշում տալու:

Քիչ վերջը Ժյուլետայի մայրը խնդրեց Ժյուլետային
երեն ընկերանալ և նա գնաց: Բալթազարը մնաց յերես
առ յերես Մորիսի հետ: Յերկուսն ել լուռ ծխում եյին:
Ո՞վ պետք ե խզեր այդ տաղտկալի լուռությունը:

Մորիսը ջղային եր, այդ յերեսում եր պարզ: Բալ-
թազարը վորոշեց խզել լուռությունը:

— Մորիս, հոգնա՞ծ ես:

— Վոչ:

— Բայց ջղային ես:

— Կենդանի մարդը ջղեր ունի, նրանք չեն կարող չաշխատել մանվանդ յերբ զգում ես, կամ մտածում:

— Ինչո՞ւ յես մտածում:

— Ինչո՞ւ յեմ մտածում, — Հարցը Առիսը զարմացած: — Մարդ եմ, ապրում եմ, բանականություն ունեմ, տեսնում եմ, տրամարանում եմ, գտնվում եմ մի թունավոր ճահճում, ուր վխտում են միայն կոկոսող գորաեր. կարելի՞ յե չմտածել, — պատասխանեց Առիսը և արագ քայլերով դուրս դնաց:

Բալթազարը մնաց մենակ դահլիճում: Ծխում եր հանդարտ և դիտում բերանից դուրս թողած բաց-կապտագույն ծուխը: Նա հանկարծ հիշեց զինվորական նախարարության մեջ յուղոտ պաշտոն ունեցող բարեկամի խոսքերը. «Այնտեղ նրան կարժանացնեն զնդակի և մայրաքաղաքի թերթերը կհայտարարեն, վոր լեյտենանտ Առիսը հերոսարար ընկալ հայրենիքի համար»: Բալթազարը ցատկեց բազկաթոռից, անմիջապես դուրս յեկավ դահլիճից և բարձրացավ տախտակամածի վրա: Այնտեղ վոչվոք չկար, բացի լեյտենանտ Առիսից: Բալթազարը վճռական քայլերով մոտեցավ Առիսին, վոր հենված ճաղերին, լուռ ու մտախոհ դիտում եր ծովը: Բալթազարին թվում եր, վոր նա խոսում է ծովի հետ, կամ աշխատում է թափանցել նրա առասպելական գաղտնիքները:

Բալթազարը մոտեցավ նրան:

— Ի՞նչ ես անում, Առիս:

— Դիտում եմ ծովը և...

— Յեվ ի՞նչ:

— Յեվ այստեղ խորտակված յեղբորս դիակը...

— Յե՞րբ և ինչպես...

— Պատերազմի ժամանակ, — ասաց Առիսը, կրկին հայացքը հառեց այն կետին, ուր խորտակվել եր նավը 1500 զինվորներով, վորոնց մեջ եր և Առիսի յեղբայրը:

Բալթազարը լուռ եր։ Մի քանի բոպե յերկուռն ել,
հենված ճաղերին, լուռ դիտում եյին ծովլը։ Հանկարծ
Մորիսը դառնալով Բալթազարին, ասաց.

— Դու վոչինչ չե՞ս տեսնում ծովի մեջ։

— Վոչ։

— Ինչպես, ասաց Մորիսը, — դու չե՞ս տեսնում այն
հազարամոր դիակները, վոք ծովի հատակում թաղված
են տղմի մեջ և անիծում են մեզ ու այս զզվելի աշ-
խահը։

— Մե՞զ ինչու։

— Ավելի մեղ, — պատասխանեց Մորիսը ջղային։ —
Աշխարհը կերառղը, տնօրինողը և կազմակերպողը մենք
ենք, ուրիշ խոսքով ամրագլ չարիքի արմատը մենք ենք։
Մենք կույր ենք, տղետ և անդիտակից, մենք անձնասեր
ենք և գերի մեր հաճույքներին։ յերբ մեղ տալիս են ինչ
վոր անհրաժեշտ ե մեր ֆիզիկական գոյությունը պահ-
պանելու համար, այն ժամանակ մենք գոհ ենք և այդ
աննշան վարձատրության համար մենք պատրաստ ենք
գործելու աշխարհիս ամենասոսկալի վոճիրները։ Յել
մեր գործած յեղեռնի համար փոխանակ մեր ձեռքերը
շղթաներ անցնելու, զարդարում են մեր կուրծքը զանա-
զան գույնի ժապավեններով, մեզ հազցնում են վուկե-
զոծ համազգեստներ և տալիս «Հերոս» տիտղոսը։ Այս
բոլորը կա, բայց մենք չենք տեսնում, չենք զգում և շա-
րունակում ենք մնալ կույր գործիք մեղ վարձողներէ
ձեռքերում։ Տիրողները որն ի բուն հոլովում են «Հայ-
րենիք» բառը, և այդ բառի համար ստիպում են մեզ մեր
մաքուր ձեռքերը թաթախել մեր հարազատ յեղբայրների
արյան մեջ։ Արդյոք այդ վո՞ր ազատությունն և պահան-
ջում, վոր Փրանսիացի բանվորն իր դաշույնը խօթի գեր-
մանացի բանվորի կուրծքը։ Ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ
հայրենիք և այդ, ո՞վ և այդ հայրենիքի տերը, ո՞վ և
յերջանիկ այդ հայրենիքում։ Յեվ ո՞վ և կողոպտում,
տրբում, հղփանում հայրենիքի բարիքներից և ո՞վ և

քաղցած և ծարավ թափառում մի կտոր հաց գտնելու
համար: Յեզ վերջապես այդ «հայրենիք» կոչված վայ-
րերում ո՞վ ե աշխատում և ով ե ուտում, ո՞վ ե կռվում
և ով ե հավաքում կռվի արդյունքները:

Բայթաղարը լուռ եր և մտախոհ, իսկ Մորիսը ջղա-
յին շրթունքներով արագությամբ ներս եր ծծում ծխա-
մորճի թանձր և առատ ծուխը:

— Մորիս, զնանք կայուտա, այնտեղ յերկար կխո-
սնէք, այստեղ անհարմար ե, նավաստիները կարող են
մեզ լսել, — ասաց Բայթաղարը:

— Թողի լսեն, — բացականչեց Մորիսը, յես արդեն
նրանց համար եմ խոսում: Յեզ վերջապես ժամանակ ե,
վոր այդ մարդիկ հասկանան, վոր իրենք վարձված-
դահիճներ են և ուրիշ վոչինչ:

Քիչ անց Ժյուլետան մոտեցավ Մորիսին: Բայթա-
ղարն ուղարկելով Ժյուլետայի ներկայությունից, ներո-
ղություն խնդրեց և իջավ իր խուցը, պառկեց անկողնի
վրա և սկսեց մտածել: Բայթաղարն իրեն չպիտաղանց
հողնած եր զգում: Մորիսի արտահայտած մտքերը
միանգամայն ջարդ ու փշուր եյին արել Բայթաղարին:

— Ավելի լավ ե քնեմ, — մտածեց Բայթաղարը և փա-
կեց աչքերը:

Մութ և ամպամած գիշեր եր։ Պարսնայք սպաները վաղուց եյին առանձնացել իրենց խուցերը և քնել հանդիստ։ Ամեն ինչ խաղաղ եր նավի վրա, բացի ահարկումնքնաներից, վոր գղրդոցով պտտում և առաջ եյին մղում շարժական ամրոցը։ Քնած եյին բոլորը, բացի հնոցապաններից, վորոնք աղամային մերկության մեջ, դժոխային կըտկի առաջ անընդհատ ածուլս եյին շղթրտում բորբոքված հնոցների շիկացած վորովայնը և իրանքետերից պարզում ջրի շշերը։

Բոլորովին ապարդյուն անցան Բալթաղարի ջանքերը՝ քնելու։ Ամբողջ յերեք ժամ եր, վոր նա գալարվում եր անկողնում, բայց քնել չեր կարողանում։ Մորիսը ինչպես մի արձան, ցցված եր նրա առաջ ու խանդարում եր նրա անդորրը։

Բալթաղարը մի աննկարապելի ցանկություն ուներ կրկին տեսնելու Մորիսին։ Նա չեր կարողանում հեռանալ նրանից։ Անմիջապես հաղնվելով, բարձրացավ տախտակամած։ Այստեղ վոչվոք չկար, բացի գիշերապահ նավաստիներից, վոր հրացանները ձեռքներին, անընդհատ յետ ու առաջ եյին դնում։

Մի ժամ կար, վոր Բալթաղարը մենակ, հենված նավի ճաղերին, հայացքը հառել եր անորոշության մեջ և հանդարտ ծխում եր իր ծխամորճը։

— Գնամ Մորիսի մոտ, — մտածեց Բալթաղարը և ուղեվորվեց լեյտենանտի խուցը։

Բալթաղարը գտավ Մորիսին ջղային և մտախոհ։ Նա նստած եր բազմոցի մեջ և ծխում եր։

Բալթաղարի այցելությունը լեյտենանտ Մորիսի համար անսպասելի յեր: Նա քիչ շփոթվեց, բայց անմիջապես իրեն իշխելով, հայտնեց իր ուրախությունը Բալթաղարի այցելության համար:

— Չեմ կարողանում քնել և վորոշեցի քեզ մոտ դաւ, — ասաց Բալթաղարը նստելով:

— Նատ ուրախ եմ, յես կարծում եյի, վոր դու յել ինձանից խորչում ես, իրբե դավաճանից, բայց ուրախ եմ, վոր իմ կասկածներն իրականության չեն համապատասխանում:

— Գիտե՞ս, սիրելիս, ինձ համար վոչ մի նշանակություն չունի, թե ինչ են մտածում իմ մասին: Առհասարակ իմ շրջապատն ինձ չի հասկանում, կամ ավելի շուտ՝ յես չեմ կարողանում նրանց հետ հաշտվել. իմ մեջ բանականությունն ե ղեկավար հանդիսացողը, իսկ ինձ ատողների մեջ՝ ստամոքսը: Բնական ե, վոր այս յերկու տեսակետները յերբեք չեն կարող հաշտվել իրար հետ: Միթե մեր ամրող դերը կայանում ե նրանում, վոր կուրորեն պաշտենք մի փալասի կտոր, վոր կոչվում ե յեռաղույն: Ել բավական ե, վորքան մեղ իրաբեցին և մեր արյունից բաղանիքներ կազմեցին, — ասաց Մորիսը վճռական և շարունակեց ավելի բորբոքված:

— Ասա ինդքեմ, ո՞ւր եք դուք գնում, ո՞ւր են գնում պարոնայք սպաները: Կողոպտելու, սպանելու, բռնաբարելու և արյան մեջ խեղդելու Ռեֆների ապստամբությունը, կամ թե կախաղան բարձրացնելու Ռմարին, վոր մերժում ե ճանաչել Փրանսիական կառավարության զաղբելի որենքները...

Մի ըոպե տիրեց լուռություն:

Բալթաղարը մտածում եր հեռանալ, վոր Մորիսը շատկելով անկողնու վրայից, կանգնեց որորվող սենյակի մեջտեղը և ասաց.

— Ինձ դավաճան են անվանում: Ինչո՞ւմն ե կայանում իմ դավաճանությունը, նրանում, վոր «հայրենիք»

կոչված արյունաբռու գազանը լափեց իմ մետաղադորձ բանվոր հորս, յերեք յեղայրներիս, և նույնիսկ մորս, հասկանում ես, նույնիսկ մորս, —ասաց Մորիսը հաղիվ զսպելով իր՝ արցունքները:

— Ինձ դավաճանն են անվանում, վոր պատերազմի ժամանակ յես նամակազրություն եմ ունեցել մի գերմանուհու հետ: Սպասեք մի բոպե, —ասաց Մորիսը, արագությամբ մոտեցավ պայտասակին, հանեց գըքի ձևով մի շրջանակ, վորի մեջ կար յերկու նկար՝ մեկը մի ալեգարդ և պատկառելի կին եր, իսկ մյուսը՝ մի չքնաղու գեղեցիկ որիորդ: Վերցնելով ալեգարդ կնոջ նկարը, շերմադին համբուրեց:

— Մայրդ յե՞րբ ե մեռել, —հարցը Բալթաղարը:

— Մայրս, կորցնելով իր հարազատներին, այլևս չկարողացավ տանել այդ ծանր վիշտը և խելազարվեց, հասկանում ես, խելազարվեց և յես ստիպված եյի նրան փոխադրել խելազարանոց: Ֆրանսիան խլեց ինձնից ամեն ինչ և այսոր ել, ինչուս մի թունավոր ոճ, աշխատում ե ինձ խայթել:

Բալթաղարը լուռ եր և մտախոհ: Կայուսում տիրում եր խորը լուռաթյուն, լսվում եր միայն ահարկու մեքենաների խուլ դղրդոցը:

Մորիսն իր գանգրահեր գլուխը հենած առողջ ձեռքերին, լուռ և անընդհատ ծխում եր: Մորիսի յերիտասարդ կրծքի տակ տեղի յեր ունենում արդեն այն ապրատամբությունը, վորը նա նախատեսում եը ֆրանսիայի ներկա կարգերի դեմ:

— Վո՛չ, այլևս լոել և հանդուրժել, —դա նշանակում ե հանցանք գործել:

Հանկարծ Մորիսը վոտքի կանգնելով, ամրող ուժով աղաղակեց.

— Ռոբեսպիերի և Դանտոնի ժամանակվա գիլյուտինը կրկին պետք է տեղափորել պլաս լա կոնկորդում. մահամերձ բուրժուազիան այլևս իրավունք չունի ապրե-

լու. նրան պետք է փաթաթել իր յեռագույնի մեջ, վորպիս պատահն, և իջեցնել խորը գերեղման:

Ընկճված և համարյա ուժասպառ, Մորիսը նկարը ձևաքին մոտեցալ Բալթազարին.

— Նայիր այս յերիտասարդ կնոջ նկարին. սա այն գերմանուհին ե, վորին յես սիրել եմ և վորին խոսք եմ տվել ամուսնանալ: Պատերազմից առաջ՝ յես գնացել եյի Մյունիսեն գեմաներեն սովորելու, ապրում եյի սրանց տանը: Ամբողջ ընտանիքով բանվորներ են. պարզ և համեստ. մենք սիրեցինք իրար, սիրեցինք անկեղծ, առանց հետին մտքերի և խոսք տիվինք ամուսնանալ: Մի քանի շաբաթ հետո ստացա մի նամակ իմ մորից. մայրս գրում եր, վոր «քաղաքական կյանքը խանդարված ե, վերադարձիր անմիջապես, յես վախենում եմ, վոր հանկարծ պատերազմ հայտարարվի և դու չկարողանաս վերադառնալ ու քեզ այդտեղ գերի պահեն»: Յերկու որ եր ստացել եյի մորս նամակը, վոր պատերազմի ուրիշականը իր հրեշային կմախքացած դեմքով արդեն սալառնում եր մարդկության գլխին: Յես թողի Մյունիսենը, խոստանալով իմ սիրածին, վոր միայն մահը կարող ե մեզ բաժանել: Շվեցարիայի սահմանը նոր եյի անցել, վոր ընդհանուր զորակոչը հայտարարվեց. և ճիշտ ժամին ներկայանալու համար փոխանակ Փարիզ գնալու, անմիջապես անցա նիմ, վորտեղ եր իմ կայազորը: Այդ ժամանակ յես քաղաքական բոլոր խնդիրներն ընդունում ե կրկնում եյի այնպես, ինչպես պատվաստում ե մեզ յուրացնել եր տալիս բուրժուազիան:

Յերկու որից իմ բանակն արդեն սահմանի վրա յեր և յես իմ ամբողջ ուժով կովում եյի իմ սիրածի յեղբայրների դեմ: Յես ծանրապես վիրավորվեցի կրծքից. արյունհոսությունը չեր դադարում, բժշկական գերադադույն խորհուրդն ինձ նշանակեց Շվեցարիա բուժվելու: Մի շաբաթից յես արդեն Լողան եյի և առաջին գործս յեղավ հայտնել իմ նշանածին, վոր յես վիրավոր-

ված եմ և այժմ զտնվում եմ Լոգան բժշկվելու համար։
Տաս որ չանցած, Հանկարծ ինձ տեսնելու համար Լոգան
յեկավ նշանածու։ Մենք յերջանիկ եյինք. մենք միան-
դամայն մոռացել եյինք, թե նույնիսկ պատերազմ կա;
Բայց մեր յերջանկությունը յերկար չտեվեց. մի դեղե-
ցիկ որ ինձ ձերբակալում և բերում են Փարիզ ու բան-
տարկում։ Զինվորական ատյան. մեղաղարտի աթոռին
նստած եմ յես. մեղաղբում են ինձ, վոր յես Հարաբե-
րության մեջ եմ յեղել զերմանական լրտեսների հետ և
վորոնց հայտնել եմ մեր հայրենիքի զինվորական գաղտ-
նիքները։ Դատապաշտպանու վերջապես կարողացավ
հաստատել, վոր յես վոչ մի դավաճանական քայլ չեմ
արել. յեղածը սոսկ յերիտասարդական մի ռոման է,
վոր սկսվել և պատերազմից առաջ։ Յերկար և տան-
ջալից հարցաքննություններից հետո, վերջապես ինձ
ազատեցին։ Վերադարձա բանակս, բայց բանակում
«հայրենասեր» սպաներն արդեն ինձ նայում եյին, վոր-
պես հայրենիքը ծախողի վրա։

Եվեցարիա յեղած ժամանակ յես ծանոթացա լե-
նինի գաղափարակիցների հետ։ Դատավարության ժա-
մանակ այդ մասին յեղան ակնարկներ, բայց դատա-
պաշտպանու կարողացավ այդ կետն աննշան թողնել,
մանավանդ, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը
դեռ տեղի չեք ունեցել։ Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունը ցնցեց աշխարհը. բնական և, վոր առաջին հեր-
թին այդ հեղափոխության արձագանքներն ավելի ու-
ժեղ պետք ե հնչեյին խրամատներում։ Միլիոնավոր
զինվորներ, վորոնք իրենց մորթու վրա արդեն զգացել
եյին տիրող դասակարգի դաժան լուծը, հակվեցին դե-
պի ուսւական հեղափոխությունը և պահանջեցին վերջ
դնել պատերազմին։ Բանակները վորոշեցին անմիջապես
պատզամավորություն ուղարկել գերազույն սպայա-
կույտը, վոր հայտնի խրամատների կամքը. պատզա-
մավորության նախագահը յես եյի։ Յերբ Փրանսիական

կառավարությունն այդ իմացավ, ցրեց պատղամավորությունը, իսկ ինձ ձերրակալեց: Կրկին բանտ, զինվորական ատյան: Դարձյալ դատապաշտպաններ, դարձյալ ձանձրալի հարցաքննություններ, և դարձյալ անմիտ ճառեր: Այս անգամ ինձ մեղադրում են իրեւ բայց չեիկի, վոր հրահանդ եմ ստացել Լենինից ապստամբություն պատրաստելու: Կրկին ու կրկին հոլովեցին ժնե, լողան, գերմանուհի, լենին, բայլշեփզմ, նիշելիզմ, անիշխանականություն, հայրենադավություն և այլն և այլն... Վոչ մի փաստ, հետեվապես զինվորական ատյանը վորոշեց ինձ ազատել: Կրկին բանակ, և այս անգամ ավելի խիստ հալածանք իմ դեմ: Պարոնայք սպաներն ինձ բոյկոտի եյին յենթարկել. ինձ հետ խոսելը կամ բարեելը համարվում եր մահացու հանցանք, իամ ուրիշ խոսքով, համազոր եր հայրենադավության: Պատրաստվում եր մեծ ճակատամարտ. սպայակույտը մի դադանի գրությամբ հրամայել եր իմ բանակի հրամանատարին, վոր ինձ պահի միշտ առաջին գծի վրա, յերեկ սպանվելու համար: Հրամանատարը ճշտությամբ կատարեց գերազույն հրամանը: Ահեղ ճակատամարտ եր, և յես անրնդհատ առաջին գծի վրա եյի, բազմահազար գիտակների և վիրավորների մեջ: Վերջապես ծանր կերպով վիրավորվեցի: Թե բանակը և թե գերազույն սպայակույտը չափազանց գոհ եր, մանավանդ, վոր բժշկական մարմինը հայտնել եր, վոր դրությունս անհուսալի յե. և իսկապես, յես վազուց մահացած կլինեյի յեթե չլինեյի աֆրիկյան արարների և սենեղալցիների բանակում: Բանակն ամբողջապես ինձ հետ եր և նրանք դիտեյին բոլոր անց ու դարձը: Յես սկսեցի ընկնել մի հիվանդանոցից մյուսը, և այդպես ամիսներ: Արդեն թողել եյի հիվանդանոցները, յերբ ցանկալի զինադադարը տեղի ունեցավ: Հանկարծ իմ բանակը հրաման ստացավ անմիջապես մեկնել Քոյլոն և մնալ այնտեղ, մինչև վոր «թշնամին» համաձայնվի բավարարել մեր

բոլոր պահանջները։ Քոլոնում հանդիպեցի նշանածիս
յեղբորը։ Նա գերմանական բանակի սպա յեր։ Նա ան-
միջապես լուր տվեց իր քրոջը, վոր յես գտնվում եմ
Քոլոնում և նշանածս Քոլոն յեկավ։ Քոլոն քաղաքը
«անհյուրընկալ» ընդունելություն ցույց տվեց մեզ և
ուժեղ կերպով դիմադրում և ցույցեր եր կազմում մեր
դեմ։ Մենք դիմել եյինք ծանր և անտանելի ռեսլրեսիս-
ների։ բանտերը լցրել եյինք «կասկածելի» անձնավո-
րություններով, վորոնց թվում և իմ նշանածի յեղբո-
րը, վորին մեղադրում եյին կայարանը պայցեցնելու
առասպելի մեջ։ Նշանածս Քոլոնում եր. մենք տեսնվում
եյինք, բայց ինձ հետեւում եյին։ Յերկու որ հետո, առավո-
տյան ժամը 3-ին, ձերբակալում են նշանածիս և բան-
տում գնդակահարում յեղբորը, իսկ ինձ զինվորական
հսկողության տակ ուղարկում են Փարիզ։ Կրկին
բանտ. . . Յերբ այս անդամ ել աղատվեցի բանտից,
առաջին գործո յեղավ վնտուել նշանածիս։ Բայց իդուր,
Փրանսիացիք նրան թունավորել եյին իբրև լրտեսու-
հու։

— Բավական ե, — Հանկարծ բացականչեց Բալթա-
գարը և տեղից վեր ցատկեց։

— Մորիս, յես քո ընկերն եմ և քեզ հետ. տուր
ձեռքու։

Յերկու ընկերներն ամուր սեղմեցին իրար ձեռք և
Բալթագարն ավելացրեց։

— Դու գիտե՞ս, թե ինչու յեն քեզ Աֆրիկա ուղար-
կում։

— Գիտեմ, — ասաց Մորիսը հուզված։

— Ինչո՞վ կարող եմ քեզ ոգնել. յես պատրաստ եմ,
թեկուզ դա լինի և իմ կյանքի գնով։ Ասա, Մորիս, ի՞նչ
կարող եմ անել քեզ համար, պահանջիր, Մորիս, յես
ուղում եմ, վեր դու ինձ վրա ծանր, շատ ծանր պար-
տականություններ դնես։

— Շնորհակալ եմ, — պատասխանեց Մորիսը և սեղ-
մեց Բալթագարի ձեռքը։

Կարմիր և վառ արշալույսը դանդաղ բացվում եր. հեռուն սահուն ծովի մակերեսը փայլում եր կանաչ-վարդագույն լույսով։ Մեղմ քայլերով միջանցքից անցնում եյին հերթապահ նավաստիները։ Նավը դեռ քնի մեջ եր։ Բնած եյին բոլորը, բացի հնոցապահներից, վորոնք մերկ մարմնով անընդհատ ածուխ եյին շպրտում կատաղած զաղանի շիկացած վորկորը։

Բալթաղարն առավոտյան շատ ուշ արթնացավ։ Յերբ նա բացեց աչքերը, անմիջապես չփեց ճակատը, ժարմինը և զդուշությամբ դիտեց շքեղ կայուտի իրերը, կարծես ուզում եր համոզվել՝ քնա՞ծ և թե արթուն, արդյոք յերազ չե՞ր այն բոլորը, արդյոք կինեմատոդրաֆի մեջ չե՞ր տեսել Մորիսի պատմությունը։ «Վոչ, իրականություն ե, տիսուր իրականություն», —մտածեց Բալթաղարը և սկսեց հագնվել։

Յերբ արդեն պատրաստ եր թողնելու կայուտը, ակամայից նայեց մեծ հայելուն. զարմացած սկսեց վոտքից մինչև դլուխ դիտել իրեն. շքեղ եր վոսկեզոծ համաղեստի մեջ։ «Յերբ մենք մարդ ենք սպանում, փոխանակ մեր ձեռքերը շղթայելու, վոսկեզոծ համազգեստ են հաղցնում և մեր կուրծքը զարդարում գույնզգույն ժապավեններով», —հիշեց Բալթաղարը լեյտենանտ Մորիսի խոսքերը և համարյա վազելով դուրս յեկալ կայուտից։

Բալթաղարն անմիջապես բարձրացավ տախտակամած, վորպեսզի մաքուր ողում քիչ թարմանա։ Մեծ յեռուզեռ եր տիրում թնդանոթների շուրջը. բազմաթիվ

նավաստիներ զբաղված եյին փայլեցնելով թնդանոթները. իսկ հերթապահ սպան հսկում եր աշխատանքին։ Մի ուրիշ խումբ նավաստիներ յերկար խողանակներով լվանում եյին նավը։

Բալթաղարն անցավ նոսվի հետին մասը. այնտեղ եղ ֆյուլետան։

Յերբ ժյուլետան տեսալ Բալթաղարին, անմիջապես վագելով մոտեցավ նրան։

— Գիտե՞ս, լեյտենանտ Մորիսը չափաղանց անհանգիստ և ջղային ե. նա ամբողջ գիշերը չի քննել, և այդ ինձ շատ մեծ մտահոգություն և պատճառում։

— Ինչպե՞ս չես վախենում հորդ հանդիմանություններից։

— Վոչ, չեմ վախենում, —պատասխանեց ժյուլետան դայրացած։ Մեզանից ամեն մեկն ունի իր սեփական համոզումները և կարծիքը. հորս կարծիքը իմ կարծիքը չե։

Բալթաղարին մեծ հաճույք պատճառեց ժյուլետայի շեշտակի տոնը։ Նա մի քոպե մտածեց, վոր գուցե ժյուլետայի սերը կարողանա փրկել Մորիսին։

— Իրավունք ունես, ժյուլետա, յես լեյտենանտ Մորիսի անձնավորության վրա վոչ մի կասկած չունեմ։

— Իսկապե՞ս, —համարյա հեվալով հարցրեց ժյուլետան։

— Յերդվում եմ պատվովս, —պատասխանեց Բալթաղարը վճռական տոնով։

— Տուր ձեռքդ, իմ սիրելի Բալթաղար, չե՞ վոր մենք շատ հին ծանոթներ և բարեկամներ ենք, չե՞ վոր կարժամանակ, վոր վոչ դու և վոչ ել յես անտարբեր չեյինք իրար հանդեպ . . .

— Ահա իմ ձեռքը։

Ժյուլետան յերկու ձեռքերով ամուր բռնած Բալթաղարի ձեռքը, ասաց.

— Բալթաղար, իմ թանգաղին բարեկամս, յեկ քեզ հետ միասին ոգնենք Մորիսին, փրկենք նրան. նա վոչ

մի հանցանք չունի: Յերդվիր, Բալթազար, յերդվիր մեր
նախակին ուբող, վար դու չես զլանա ունելու Մորիսին:

— Յերդվում եմ, Ժյուլետա:

— Այս, դու վորքան բարի յես, վորքան ուժեղ ե քո
ասպետական հոգին. Բալթազար, իմ աննման Բալթա-
զար...

Հեռվում յերեսում եյին աշխարհիս յերբորդ մասի
ափերը. զրահակիրը դանդաղացրեց իր արագությունը.
մի քանի դույնողույն դրոշակներ բարձրացրեցին: Թնդա-
նոթածգերը զրադված եյին թնդանոթների ծածկոցները
հանելով: Ամեն ինչ պատրաստ եր ոմքակոծությամբ
վողջունելու Աֆրիկայի ափերը: Նավը թեքվեց նավա-
հանգստի ուղղությամբ: Քիչ վերջը զրահակիրը մտավ
Ալժիրի նավահանգիստը, վոր 1830 թ. գտնվում է ֆրան-
սիական բուրքուազիայի ճանկերում: Զրահակիրը սա-
հում եր մեղմ ծովի վրա, դանդաղ աշխատում եր միայն
մեկ մեքենա: Զրահակիրն արտակարդ փայլ եր ստա-
ցել: Նա սահում եր դանդաղ, բայց հաղթական: Սուլեց
զրահակիրը:

Խարիսխը շառաշելով ընկավ: Նավահանգստի բեր-
գերից սկսեցին վորոտալ թնդանոթները, վողջունելով
զրահակիրի մուտքը:

Նավապետն իր սպաներով կանգնած եր հրամանա-
տարական պոստում, զինվորական բարեկի կանգնած:
Եերդի թնդանոթները լուեցին և հանկարծ զրահակիրի
թնդանոթներն սկսեցին վորոտալ: «Ժան-Ժակ Ռուստ»
զրահակիրը 21 հարվածներով վողջունում եր քարիլնե-
րի և բեղուինների «ազատ» յերկիրը:

Տաք զեփյուռը շոյում եր զրահակիրի պողպատե պա-
տերը: Արևը պսպղում եր, լիառատ լույս սփռելով: Իսկ
նավահանգստի շուրջը տարածված եր Ալժիր քաղաքը,
թաղված փարթամ բուսականության մեջ: Քաղաքի
ձախ կողմը, մի բլուրի վրա, ընկած եր արարական
խղճուկ թաղամասը փոքրիկ տուփերի պես տներով.

բայց սվաղած սպիտակ կրով։ Քաղաքն արևելյան վո-
չինչ չունի, նա կառուցված և նորագույն վոճով։ Միակ
հուշարձանը, վոր հիշեցնում և Արարիան, դա փոսի մեջ
ընկած մզկիթն և իր փառահեղ և մողայիկ մինարեյով։

Նավը դատարկվում եր։ Բալթազարն ուղեց վերջին
անգամ տեսնել Մորիսին, բայց իզուր։ Նա ամբողջ նավը
պտտեց, բայց Մորիսը չկար։ Շտապ նավահանգիստ ի-
ջավ, անցավ յերկար նավամատուցը, սակայն Մորիսը
վոչ մի տեղ չկար։ Զղային և զայրացած Բալթազարն
արագ անց ու դարձ եր անում Մորիսին գտնելու հա-
մար, վոր հանդիպեց Ժյուլետային։

— Ո՞ւր և Մորիսը, — հարցրեց Ժյուլետան։

— Փնտոռում եմ, — պատասխանեց Բալթազարը։

— Յես տեսա, վոր նա նավից իջավ։ Հազիվ մի
րոպե կանգնեցրի և տվի նրան իմ հասցեն, և նա անհայ-
տացավ, — ասաց Ժյուլետան սաստիկ շփոթված։

Վերջին անգամ Բալթազարը սեղմեց Ժյուլետայի
ձեռքը, խնդրեց տեղյակ պահել իրեն Մորիսի մասին։
Նրանք բաժանվեցին։

Ալժիրի զինվորական հրամանատար դեներալ Լիո-
տոնը մի բարձրահասակ և հեղ դիմագծերով ծերունի
յեր։ Նա ընդունեց Բալթազարին և հայտնեց, վոր պետք
և մեկնել Որան։ Հենց այսոր։

Բալթազարը յերեկոյան գնացքով մեկնեց Որան՝
Ալժիրիայի գլխավոր նավահանգիստներից մեկը։

Որանում Բալթազարը հրահանդ ստացավ անմիջաւագեստնեկնել Սիդի Բելաբես, իսկ այնտեղից՝ Շանզի: Յերկու որ Շանզիյում մնալուց հետո, Բալթազարը շտապ ուղարկվեց Բեդո:

Բեդոն Որանի նահանդի ամենածայրագույն գյուղաքաղաքներից մեկն ե, Մարոկկոյի սահմանի վրա. աղջաբնակչությունը բազկացած ե արաբներից, հրեաներից և իսպանացիներից:

Բալթազարը կայարանից անմիջապես գնաց բերդը, ուր բանտարկված եյին մոտ 2000 զինվորներ: Բեդոնը ֆրանսիական զինվորների համար նույնն ե, ինչ վորցարական բռնակալության համար Սիրիը: Ֆրանսիայի զանազան մասերից անդիսցիւլին զինվորներին ուղարկում են հանքերում աշխատելու 3-5 տարի. համաճարակներն այդ միջավայրի անբաժան մասն են կազմում: Տիֆը կոտորում ե անխնա, իսկ բանտարկյալները կմախքացած դիակներ են, վոր հազիվ հազ են կարողանում ստվերի պես պտտել տաք ավագի վրա: Բոլորն ել հալված, մաշված և գունատված են: Նիհար և բարակ վոտքեր, դալկացած և յերկարացած դեմքեր, խոր ընկած և մարած աչքեր, վոր չես կարողանում հասկանալ՝ արդյոք տեսնո՞ւմ են նրանք, թե՝ վոչ: Նրանք ապրում են վրանների տակ, հսկա լազերում, ամուր կերպով շրջապատած փշալարերով և շուրջը ամրացրած բազմաթիվ գնդացիրներով: Բոլորն ել բացառապես յերիտասարդներ են: Լազերի շրջապատումի միանգամայն բացակայում ե վորեւ բուսականության հետք՝ քարքարոտ մի բլուր, վոր բաժանված ե մի անկենսու-

նակ գետակով, վորը ծույլ-ծույլ հաղիվ հազ հոսում է : Իսկ լադերի վրա իշխում և «համբավավոր» բորջը : Դժվար եր սառնարյուն կերպով դիտել թշվառների այդ բանակը : Նբանց կյանքն այնքան ծանր եր, անտառնելի և սարսափելի, վոր հաճախ բահերով ու թիյերով անձնասպանության եյին դիմում կամ մեկն իր ունեցածը ամբողջությամբ տալիս եր մյուսին և պայտատում, վոր իր գանգը ջախջախի : Մատնությունը միանդամայն բացակայում եր նրանց կենցաղում : Ամեն որ լադերից հանում եյին մի քանի դիակներ . ո՞վ սպանեց, ինչո՞ւ սպանեցին, —վոչ վոք վոչինչ չեր հայտնում : Ջարհուրելի եյին բանտարկյաների բանտերը . դրանք չափազանց խորը, մութ ու խոնավ խուցեր են, վոր գանվում են բերդի տակ . ինչպիսի սողուն ուզեք, այդ խուցերում կարելի յե գտնել : Բանտարկյալը յերը այդ խուցն ե ընկնում, նա համոզված կարող ե լինել, վոր այլևս այնտեղից դուրս չի գալ . ֆեոդալական «ուրլիեթներն» (մոռացվածներ) են այդ խուցերը, կամ թե փաղիշահների ու ոուլթանների վատթարագույն գնդանները :

Բանտարկյալը մեռնում է այդ մութ ու խոնավ խուցում, դիակը չարաթներով մնում է այնտեղ, հոշոտվում է դանազան սողունների կողմից, վորզնում, նեխում ու քայքայլում, և վոչ վոք պարտք չի համարում խուցերը գոնե մաքրելու այդ այլանդակ դիակներից : Այնպիսի խուցեր կային, վորոնց մեջ մի քանի այդպիսի քայքայ-ված դիակներ կարելի յեր գտնել :

Բալթագարի հրամանով մաքրեցին խուցերը և այնտեղից հանեցին Ա դիակ, կամ ավելի շուտ մարդկային մարմնի զանազան մասեր :

«Ահա սրանք են ֆրանսիական դեմոկրատիկ հանրապետության անհատի անձեռնմխելիության «արդարադատ» որենքները», —մտածեց Բալթագարը և կրկին մտքով սլացավ Մորիսի մոտ :

— Մորիս, դու իրավունք ունես, — մըմնջաց Բալթաղարը և թողեց այդ քստմնելի վայրը:

— Ինչ ծանր հանցանք եք գործել դուք, վոր ձեզ յենթարկել են նմանը չտեսնված ինկվիզիցիայի, — Հարցրեց Բալթաղարը մի բանտարկյալից:

— Իմ ամբողջ հանցանքը կայանում է նրանում, վոր դժբախտություն ունեյի սիրելու մորս, — ասաց Հաղիվ Հազ վստաքի վրա կանգնելով այդ բաղմահար կենդանի դիակներից մեկը:

— Մայրս մահամերձ եր, — շարունակեց բանտարկյալը, — իսկ յես գտնվում եյի ճակատում, պահեստի լազգերում: Հեռագիր ստացա, խնդրեցի կալիտանին յերեք որ արձակուրդ տալ, վորպեսզի զնամ մորս դիակը հողին հանձնեմ. կալիտանը մերժեց: Բայց յես գնացի, թաղեցի մորս ու կրկին վերադարձա բանակ. և այդ «մահացու» հանցանքի համար ինձ 5 տարով աքսորել են այստեղ, — ասաց բանտարկյալը և քսվելով պատին, բնկավ դետին:

— Դուք ի՞նչ հանցանք եք գործել, — հարցրեց Բալթաղարը յերկրորդին:

— Յես... Յես շատ մեծ հանցանք եմ գործել, յերկու տարի յեղել եմ շարունակ առաջին գծում, վիրավորվել եմ յերկու անգամ. վերջին անգամ յերբ Հիվանդանոցից գուրս յեկա և տուն գնացի, կնոջս գտա մի սպայի հետ: Յես հարձակվեցի սպայի վրա և ջարդեցի քիթ ու բերանը և դրա համար 5 տարով այստեղ ուղարկեցին, ասելով, վոր դու իրավունք չունես սպայի վրա ձեռք բարձրացնելու, թեկուղ դու նրան դտնում ես և կնոջդ անկողնում:

Մի ըոպէ բանտարկյալները դաղագեցին և նրանց մարած աչքերն այնպիսի սոսկալի և զարհուրելի կատաղություն եր արտահայտում, վոր կարծես հենց հիմա լինը ուղերդը ուղը պիտի հանեն:

Բալթաղարը բարվոք համարեց հեռանալ այդ մի-
ջավայից: Բայց յերկու քայլ հաղիվ եր արել, վոր մի
ուրիշ բանտարկյալ թևը բռնեց.

— Յես ել հանցանք ունիմ, արդյոք չե՞ք կամենա
ինձ լսել:

— Ի՞նչ հանցանք, — հարցրեց Բալթաղարը:

— Իմ հանցանքս այն ե, վոր ձգտում եմ ճանաչել
ձեր հայրենիքը:

— Ինչպե՞ս:

— Շատ պարզ ե, ձեր հայրենիքն իմ հայրենիքը
չե. այդ հայրենիքը ձեղ համար արքայություն ե, իսկ
ինձ և ինձ նմանների համար անտանելի դժոխք: Լոռում
եք, դժոխք, ավելի սարսափելի, ավելի գաղանային,
քան թե այս միջնադարյան մարդկային սպանդանոցը,
վոր փոլած ե արարական բերդի շուրջը, այրող ավաղի
մեջ: Յես ձեր հայրենիքում ծնված որիցս կուշտ չեմ
յեղել, չնայած, վոր աշխատել եմ որական մինչև 12
ժամ: Յեկայսոր ձեր հայրենիքի տերերն ինձ ստիպում են
գնալ պատերազմի և սպանել հայրենիքի թշնամիներին.
իսկ յես վոչ մի թշնամի չունեմ, վորովհետեւ յես
վտանգված հայրենիք չունեմ: Յես Փրանսիացի յեմ,
բայց իմ հայրենիքն այստեղից շատ հեռու յե. իմ հայ-
րենիքը կենինի հայրենիքն ե:

Բալթաղարն առանց խոսելու անմիջապես թողեց
նրանց և հեռացավ:

Անհայրենիք բանտարկյան ստիպել եր Բալթաղա-
րին կրկին և կրկին մտածելու Մորիսի մասին: Բալթա-
ղարը, փակված բերդի բաղմաթիվ սենյակներից մեկում,
մտածմունքների մեջ եր ընկել, յերբ հանկարծ լսեց մի
ահռելի հրացանաձգություն:

Հրացանաձգությունը հետզհետե ավելի և ավելի
սաստիկանում եր, ամեն կողմից դինված պահակները
վազում եյին աջ ու ձախ: Բալթաղարն անմիջապես
դուրս յեկավ և վազեց հրացանաձգության վայրը:

— Բանտարկյալներն ապստամբել են, —առաց յենթասպան շտապ հրահանգներ արձակելով:

Եերդի թնդանոթները պատրաստվում եյին իրենց մահաշունչ վոռնոցով սարսափահար անել անպաշտպան բանտարկյալներին: Բալթազարը հրամայեց դադարեցնել հրացանաձգությունը: Արդեն կային 35 սպաննաձներ և 90 վիրավորներ:

— Ինչո՞ւ յեք ուզում փախչել, —հարցրեց Բալթազարը մի բանտարկյալի:

— Փախչելու հույսը չունենք. մենք դիտմամբ կազմակերպեցինք այս ցույցը, վոր մեզ զնդակահարեն: Հետեամբես մինք մեռնելու մասին ենք մտածում և վոչ թե փախչելու, —ասաց բանտարկյալը և իր հասակով մեկ գետին փուլեց: Նա արդեն հասել եր իր նպատակին. վիրավոր կրծքից դանդաղ հոսում եր նրա կյանքի վերջին հեղուկը: Տեսարանն անտանելի յեր:

Դիակները բաժանեցին վիրավորներից և կողք-կողքի շարեցին փշալարերի տակ: Յեկ լագերը կրկին ոտացավ իր մեռելային պատկերը:

Նույն գիշեր Բալթազարը յեղելությունը հայտնեց Ալժիր, ընդհանուր հրամանատարին: Իսկ նրանք պատասխանեցին՝ անմիջապես շքանշանի ներկայացնել այն զինվորներին, վորոնք հերոսաբար կարգը վերականգնեցին: Գիշերը մնում եր անփոփոխ, լուսինն եր, վոր մերթ ընդ մերթ ցույց տալով իր աղոտ յերեսը, դարձյալ թագնվում եր ամպերի տակ:

Բալթազարը բարձրացավ աշտարակի վրա՝ դիտելու «վերականգնած» կարգը. ճախ կողմում ընկած եր Մարովի լեռնաշղթան, իսկ նրա լանջերի վրայից անցնում եր ուղտերի քարավանը: Խորը քնի մեջ եր թաղված քաղաքը, վոր իր կեղտուառությամբ և խեղճությամբ փայլում եր: Բերդի դիմացը՝ լազերի աջ մասում բազմաթիվ ուրվականներ զբաղված եյին դանդաղ և թույլ ձեռքերով փոսեր փորելով, իրենց «յերջանիկ» բախ-

տակիցներին այնտեղ փոխադրելու համար։ Յերեկը
նրանք հանքեր են փորում, գիշերը՝ զերեղմաններ։
Յեվ այդ հրեշային տեսարանի դիմաց կանգնած եր
հաղթական բերդն իր ութ աշտարակներով և վորոնց
վրա Սահարայից փչող քամիները ծածանում եյին Փրան-
սիական յեռագույնը։

Յերկու շաբաթ անց Բալթաղարը հրահանգ ստացավ Թիարեթ մեկնելու։ Տիուր տպաղորության տակ Բալթաղարը Բեղոնը թողեց։ Յերկաթուղին սուլելով կարում եր Բեղոյից դեպի Թիարեթ ձգվող անմշակ և վայրի դաշտերը։

Յերկաթուղու սուլոցները վոչ մի տեղ արձագանք չեյին դանում։ Լուռ եր շրջապատը, ամայի և մեռած։ Դաշտերում այս ու այնտեղ բարձրացած բույսերն արեվեց խանձված, մահամերձի պես դեմքերը հառել եյին դեպի յերկինք, կարսեծ մի կաթիլ ջուր եյին աղերսում։ Վոչ մի աղբյուր և վոչ մի գետ, ամայի, անմարդարնակ անապատ։

Յերբեմն հանդիպում եյին արհեստական ավազանների, լիքը տաք և հոտած ջրերով, վորոնց չուրջը խմբված արաբները կրոնական լվացվելու արարողություններ եյին կատարում ու Մահմեդի հզորությունը փառաբանում։

Մութ դիշեր եր. Մարոկկոյի լեռներից սև ամպերը չլում եյին դեպի ալֆայի դաշտերը։ Յերկաթուղին շարժվում եր դանդաղ և մոնչալով կարում եր շարունակ լայնածավալ ալֆայի դաշտերը։ Ամեն տեղ դիզված եյին ալֆայի հսկա դեղերը, վորոնց մեջ պառկած ալֆաքաղող արաբ բանվորներն իրար պատմում եյին նախնիքների քաջագործությունները, կամ զանազան հեքյաթներ իմամների ու սրբերի կյանքից։ Արաբն ապրում և անցյալով ներկան ծանր և տիսուր. Փրանսիա-

կան բուրժուազիայի արյունոտ և արճիճե թաթը շատ
պինդ և բռնել բերբերների և քարիլների կոկորդից:
Ապստամբություն, ապստամբություն և դարձյալ ապրու-
տամբություն... Այդ բոլորը հաղարավոր արարների
կյանքով, բայց դարձյալ արյունաբրու դաղանի ճանկերը
դեռ մնում են խրված արարական աշխարհի սրտի մեջ:

Ամբողջ յերկու որ ու գիշեր տաղտկալի և անհե-
տաքրքիր ճամբորդությունից հետո, Բալթազարը հա-
սով Թիարեթ, վորը յերկաթուղու վերջին կայարանն
եր: Այստեղից բացվում և Սահարայի լայնածավալ
վազային անսահմանությունը:

Բալթազարին հրահանգված եր մնալ առայժմ
Թիարեթում, մինչև նոր կարգադրություն: Բալթազա-
րի առաջին գործը յեղավ Մուսային ստիպելու, վոր
թողնի իրեն և վերադառնա իր ընտանիքի մոտ: Շատ
մեծ դժվարությամբ Բալթազարը բաժանվեց իր ամե-
նից հավատարիմ բարեկամից և ընկերոջից:

Մուսան աչքերը սրբելով, հրաժեշտ տվեց Բալթա-
զարին:

Թիարեթը զինվորական կարեոր ամբություն և,
ընկած մի բլուրի վրա, հանդիսանալով Սահարայում
գործող զորաբանակներին ողնության հասնող առաջին
կայսնը, հսկա զորանոցներով և զինվորական մեծ
պահեստներով:

Բալթազարը Թիարեթում իմացավ, վոր հյուսի-
սային Աֆրիկայի ապստամբ աշխաթները հետզհետե
միանում են և արդեն պատկառելի թիվ են կազմում:
Թիարեթի քաղաքազորը հրահանգ եր ստացել պատ-
րաստ մնալու. ապստամբություն եր պատրաստվում
կոստանդինի նահանգում և արդեն Մարսելից շտապ
կարգով յերկու զորաբանակ փոխադրված եր ապրու-
տամբության վայրը:

Բալթազարը նոր հրահանգ ստացավ ավելի առաջ
գնալու մինչև Աֆրիու, վոր գտնվում եր անապատում:

Յերկու որ Բալթազարը կտրելով մացառներով շրջապատված անմշակ դաշտերը, հասավ Բելարեսի բողջը. այդունք նա պետք է սպասեր քարավանին, Աֆլու դնալու համար: Բելարեսի բողջը մի փոքր իջևանի պես եր, մի քանի զենքի պահեստներով: Կառուցված եր ալֆայի լայնածավալ դաշտերի մեջ, մի հսկա ջրհորի էռդքին, վորի չուրջը տարածված եյին բազմաթիվ դեղնագույն և ցածր վրաններ, վորոնց տակ պատսպարվում եյին հարյուրավոր ալֆա քաղող բանվորներ, բոլորն ել հալված, մաշված և այրված: Ամեն ինչ մեռած եր այդտեղ, նույնիսկ ուղտերը, վոր հազիվ-հաղ շնչելով, յերկարացրել եյին իրենց անհամաշափ վզերը տաք ավազի վրա նրանք նմանում եյին ցամաքած նավահանդսուի և տղմի մեջ խրված առօդառտանավերի: Համառորեն քիչ հեռու ցցված եյին յերեք ծառերի կմախքներ՝ ծարավից այրված ու մեռած, իսկ դրանց դիմացը սև հողով կառուցված եր մի ընդարձակ սրճարան. և ճակատին գրած՝ «Յերկնային դրախտ»: Դա միակ մխիթարության վայրն եր այն հաղարավոր արար, սպանացի և հրեա գործավորների համար, վոր որվա տաժանակիր աշխատանքից հետո այնպիսի թափով եյին գրոհ տալիս նրա վրա, ինչպես ծարավից տանջված հոտը կվազեր գեպի ջուրը:

Անտանելի յե ալֆայի անապատը, նա ավելի տաղտկալի յե, քան ավազի անապատը, ուր յերբեմն կարելի յե հանդիպել փարթամ ու ջրառատ ովազիսների և կտոմ նույնիսկ հաստաբուն թզենիների, վորոնք սնվելով անձրեսի ջրերից, իրենց սաղարթախտ տերևների տակ պատսպարան են տալիս ճանապարհորդներին: Ալֆան միշտ միենույն կոշտ խոտն և, անդույն, զուրկ բուրմունքից և առանց հրապույրի, և վորոնց մեջ վիստում են դանապան թունավոր սողուններ ու ընկած են մարդկային կմախքներ:

Ճանջվածների և արհամարհվածների աշխարհն և

այդտեղ, ծարավների աշխարհն և այդտեղ, ուր գիշերը տաք քամին եւ խանձում, իսկ ցերեկը ցիկոնն և տակն ու վրա անում դժբախտների խարխուլ վրանները:

Հյուսիսում ընկած եր մի ամայի լնոնաշղթա, թաղված ամպերի մեջ. բայց ամեն ինչ քնած եր այդ տիսուր աշխարհում, ուր քուն ավելի խորն և, քան մահը:

Ահա որվա տաժանակիր աշխատանքից հետո վերադառնում են ալֆա քաղողները. տիսուր և ընկճիած, կոչտացած ձեռքերով ու զզզզված շորերով. հոկամասսա յե. դա, վոր գալիս ե լուռ, մտախոհ, զրջազգեստներն անփույթ կերպով ուսերին դցած. դալիս ե դեպի «Յերկնային դրախտ» խմելու և հաղեցնելու անտանելի ծարավը, հարբելու և անապատից փչող հովերին հանձնելու իր տառապանքները:

Գալիս են նրանք շարունակ գրեթե մերկ մարմիններով և ալֆայից պատրաստած լայնեղր զլիստրկներով: Աղմուկ, գոռում-գոչում խառնում են իրար: «Յերկնային դրախտը» տոնական կերպարանք և ստանում: Քաշքում են նստարանները, սեղանները և ջրի բաղմաթիվ գալաթները: Անհամբեր են նրանք, ջղային և չար աչքերով: 12 ժամ անընդհատ աշխատել են նրանք անապատի մեջ, յուրաքանչյուր քայլափոխում կռիսի մղելով թունավոր սողունների հետ:

Աշխատանքը վերջացած ե. դալիս են և ուղաների յերկար քարավանները, բերելով գործավորների քըրտինքով քաղված խոտը. բարձր գեղերը կանգնում են իրար մոտ. իսկ մի ուրիշ քարավան ել տանում ե ալֆան գեղի ծովափ, լցնելու շահագործողների լայն շտեմարանները:

Բալթազարը հեռու նստած մի անկյունում, դիտում եր և մտածում:

«Ի՞նչ են սրանք, վոչ այլ ինչ, յեթե վոչ տաժանակիր

աշխատանքի դատապարտված դժբախտ արարածներ, հեռու մարդկային կյանքից, հեռու ընության գեղեց-կությունից, կարված աշխարհից և ընկած անազատի այս անհյուրընկալ և տիտուր անկյունը. ամբողջ որեւ-րով չարաշար աշխատանք, միայն մի կտոր չոր հացի համար»:

Այդպիսի պարագաներում ալկոհոլը կատարում է իր դերն ավելի քան բավարար կերպով. ուտելու մասին վոչվոք չի մտածում, միայն զանազան գույնի վատ տեսակի թունավոր հեղուկներ են, վոր հոսում են տուատ և շարունակ: Ահա մեկը հանեց կիթառը, լարեց այն և իր խուլ ձայնով սկսեց մխիթարել բազմահազար բանվորներին:

Արար, իսպանացի, խտալացի, հրեա թե Փրանսի-ացի, հավասար են արեի տակ տաժանակիր աշխատանքի մեջ. հավասար են և «Յերկնային դրախտում»:

Հետզհետե ալկոհոլի ազդեցության տակ նրանք հանգստացած են զգում իրենց և աշխատում են մոռացության տալ իրենց անտանելի ցավերը: Ամեն մարդ ուղում եր յերգել և ուրախանալ, բոլորն ել պոռում եյին և ծխով ամպամած ողը թնդացնում իրենց աններգաշ-նակ ձայներով:

Արարը յերգում եր իր մելոդիան, հրեան և իսպանացին՝ իրենցը: Յերգում են տարբեր լեզուներով, բայց միենույն հոգով և միենույն նպատակի համար. նրանց յերգն ուրախության յերգ չե, այլ տառապանքի և կատաղի վրեժինդրության յերգ:

Հետզհետե փայլում են նրանց դեմքերը, նրանք նույնիսկ ծիծաղում են, կատակներ անում, բայց բռնազրուսիկ: Ահա կրկին լցվեցին գավաթները և դատարկվեցին անմիջապես: Կարծես վառվում է նրանց ներսը յերկաթե մի հնոց, վորին վոչինչ չի հագեցնում կամ մեղմացնում նրա անտանելի ծարավը: «Յերկնա-յին դրախտը» հետզհետե ավելի աղմկալից և դառնում -

մեկը պարում ե, մյուսը վիճում, իսկ յերրոքդը հար-
բած հանում ե իր դանակը և ընկերոջ կուրծքը խրում:
Ընկնում ե նա անշնչացած, կարմիր արյունը ներկում և
անդույն ավաղը. բայց դա պատճառ չե, վոր կիթառ
դադարեցնի հնչելու իր չորացած ձայնը:

Մի քանի հոգի մոտենում են անշնչացած դիակին,
դուրս են տանում նրան, ավաղի մեջ մի փոս փորում և
մեջը տեղավորում ու կրկին վերադառնում շարունա-
կելու իրենց անմիտ կյանքը:

Մահը ծարավների աշխարհում սարսափ չի աղ-
դում. արդեն բոլորն ել մեռած են:

Գերեզմաններ անդամ գոյություն չունեն այդ աշ-
խարհում. յուրաքանչյուր դիակ միայն մի քանի ժամ
կարող ե հանդիսաւ ունենալ տաք ավաղի մեջ: Դիշերը
լուսնի փայլուն չողերի տակ բորենիներն արշավում
են, փոքում գերեզմանները, լափում դիակները և ալ-
ֆայի թփերի տակ ցրում նրանց հոգնած վոսկորները:

Փչում ե սամումը և լցնում փորած դերեզմանները
և ընդմիշտ կորցնում նրանց հետքերը:

Ուշ դիշեր ե. բոլորը հարրած ու հոգնած թափ-
վում են աջ ու ձախ ավաղի վրա և քնում: Քնում են
նրանք անդիտակից և իրենց կամքից անկախ: Արշա-
լույսը բացվում ե, իր կարմիր չողերը սփռելով ալֆա-
յի լայնածավալ անապատի վրա: Հոգնած ու թմրած
բանվորներին արթնացնում են մտրակներով և աքացի-
ներով ու քչում դեպի անապատ, դեպի տաժանակիր աշ-
խատանք:

Բալթազարն ստիպված եր յերկար սպասել «Յերկ-նային դրախտում», մինչև վոր կգար քարավանը։ Ար-դեն յոթ որ եր, ինչ Բալթազարը դտնվում եր ալֆայի լայնածավալ դաշտերում, վոր հանկարծ այնտեղ յեկան յերկու արար յենթասպաներ։ Առաջին հայացքից նրանք չափաղանց դժուհ եյին, այնտեղ դտնելով Բալթազա-րին։ Ամբողջ որերով նրանք առանձնանում եյին ալ-ֆայի դաշտերում և յերկար խորհրդակցում ալֆա քա-ղող բանվորների հետ։ Յերբեմն դալիս եյին նրանց մոտ դանաղան արարներ, մնում նրանց հետ նույնիսկ որե-րով և կրկին մեկնում։ Ո՞վքեր են նրանք, ի՞նչ գործի համար են յեկել այդտեղ և ի՞նչ այցելուներ են նրանք ընդունում։

Համ հաճախ եր Բալթազարը մտածում այս ուղղու-թյամբ, բայց վոչ մի կերպ չեր կարողանում հասկա-նալ. յերկու յենթասպաները պարզ կերպով խույս եյին տալիս Բալթազարի աչքերից։

Անցավ մի շաբաթ ևս, մի տաք որ, յերբ արգեակը կանգնած զենիթում ալֆայի դաշտերն եր ուղղել իր շիկացած ասեղները և Բալթազարը հազիվ շնչելով պառ-կած եր մահճակալի վրա ու մտածում եր Մորիսի մա-սին, դուռը բացվեց և մի բարձրահասակ մայոր ներս մտավ։ Բալթազարը թիկն ընկնելով բարձերի վրա, ա-ռանց շարժվելու նայում եր նորեկին։ Իսկ մայորը ևս իր կողմից մնաց քարացած սենյակի դռան առաջ, անսպասելի կերպով տեսնելով Բալթազարին։ Բալթա-զարն իր համազգեստը հանել եր, հետևապես մայորը

չգիտեր զինվորականը ի՞նչ աստիճան ուներ և վո՞ր բանակից եր: Նա սի քայլ անելով առաջ, հարցրեց.

— Ձեզ չե՞մ խանդարում:

— Ամենեին, — պատասխանեց Բալթաղարը, վսաքի կանգնելով:

— Թույլ տվեք ծանոթանալու, — ասաց նորեկ զինվորականը, դիրք ընդունելով:

— Մայոր Եղմոն, հարավային Աֆրիկայի գարնիդոնի բժշկապետ:

— Կապիտան Բալթաղար, — պատասխանեց Բալթաղարը, համազգեստը հաղնելով. Բալթաղարին հենց առաջին հայացքից թվում եր, վոր մայոր Եղմոնը շատ ել գոհ չեր այդտեղ իրեն հանդիպելու համար:

Քիչ անց յեկան արար յերկու յենթասպաները, խսեցին արարերեն և Եղմոնը նրանց հետ դուքս յեկալ. Բալթաղարը զարմացած դիտում եր, թե ինչպես նրանք խոսելով, կտրում եյին ալֆայի դաշտերը:

Բալթաղարը կրկին մնաց մենակ: Մտավ «Յերկնային դրախտ» մի բան խմելու և այն մտադրությամբ, վորպեսզի սրճարանապետից տեղեկանա Եղմոնի մասին:

Սրճարանապետուհին տարիքն առած մի հաստափոր խսպանուհի յեր, կյանք շատ տեսած. Մադրիդում դրազվում եր անչափահաս աղջիկների միս ծախելով և նրա տունը բավական հաջողություն ուներ, բայց «չար» բախտը չժպտաց նրան և զանազան խրթին գրամաների ու ռոմանների պատճառով կյանքի կատաղած ալիքները նրան գցել եյին Ալֆայի անապատը: Ասում են, վոր նա թունավորել ե իր բազմաթիվ ամուսիններին և մի կիթառ նվազող յերիտասարգ խսպանացի կոնտրարանդիտուի հետ փախել Ալժիրից: Յերաժիշտ բանդիտը շատ չանցած թողել ե իր «սիրուհուն» և կապվել մի ուրիշ հետ. իսկ կինը նախընտրել ե նոր «կամերցիա» ու ել անապատում:

Հաստիթիկ Նինան (այդպես եր սրճարանապետունու անունը) չկարողացավ լիովին բախարարել Բալթազարի հետաքրքրությունը, միայն ասաց, վոր Եղմոնն արար-ների մեջ հանրածանոթ ե և նրան շատ են սիրում: Հետո ավելացրեց, վոր համախ ե լինում Բելաբեսի բոր-ջում: Նրան նույնիսկ գիտեն համարյա բոլոր ալֆա քսո-դող րանդորները:

Աշխատանքը վերջացել եր. Ալֆա քաղողները քրտինքը սրբելով, իրար յետելից «Յերկնային դրախտ» ելին մտնում, յերբ հանկարծ ներս մտավ Եղմոնը:

Եղմոնի մուտքը մի արտակարգ ուրախություն պատճառեց ալֆա քաղողներին: Անմիջապես համախմբվեցին նրա շուրջը և իրենց ճաքքած ու կտրատ-ված ձեռքերով ամուր սեղմում ելին նրա ձեռքը...

Յերեկոյան Եղմոնը շատ ուշ վերադարձավ բորջը: Հոգնած եր ու քրտնած: Բալթազարն անհամբեր սպա-սում եր նրան:

— Ինչպես յերեւում ե, հոգնած եք, — հարցուից Բալ-թազարը:

— Դատարկ բան ե, — պատասխանեց Եղմոնը:

— Բայց ասեք խնդրեմ, դուք վո՞րտեղից եք յեկել և ո՞ւր եք դնում, — հարցը Եղմոնը, նստելով մահա-կալի վրա:

— Փարիզից եմ գալիս. իսկ թե վերջնականապես ուր եմ գնալու, դեռ ինձ հայտնի չե:

— Յեթե մինչեւ այստեղ յեկել եք, դա նշանակում ե, թե ձեզ Աֆլու յեն ուղարկում:

— Զիտեմ, բայց սպասում եմ քարավանին՝ ա-ռայժմ Աֆլու դնալու համար:

— Յես ել եմ սպասում քարավանին, Աֆլու դնալու համար, — պատասխանեց Եղմոնը:

— Ուրախ եմ, վոր անապատը մենք կկտրենք միա-սին. անտանելի տիսուր ե անապատը և ձանձրալի հանա-պարհորդությունը, — ավելացրեց Բալթազարը:

— Վայր նավով եք յեկել.

— «Ժան-Ժակ Ռուսաստան» զբահակրով:

— «Ժան-Ժակ Ռուսաստան» զբահակրով, — Հարցը Եղմանը ներքին խոռվառ, բայց Բալթազարը պարզ նկատեց այդ:

— Իսկ վո՞ր բանակում եք դուք:

— Յես ոռւսական կորպուսում Եյի, ինձ յետ կանչեցին, յերբ ոռւսական բանակն ապահամրեց և մերժեց կովել:

Եղմոնը վեր կացավ մահմակալից, կանգնեց սենյակի մեջտեղը և ասաց.

— Դուք ասացիք, վոր ձեր անունը Բալթազար եք:

— Այո, —պատասխանեց Բալթազարը զարմացած: Եղմոնն ուղիղ նայում եր Բալթազարի աչքերի մեջ և մեղմ ժպտում:

— Բայց ինչին վերագրել ձեր այդ տարրորինակ հարցաքննումը, — Հարցը Բալթազարը, նույնպես ժպտալով:

— Վոչինչ, հենց այնպես: Ինձ թվում ե, վոր յետ ձեղ ճանաչում եմ, կամ ավելի շուտ՝ լսել եմ ձեր մասին:

— Ի՞մ մասին... Յես չափազանց հասարակ մահմանացու յեմ և չեմ կարծում, վոր դուք իմ մասին լսած լինեք, —պատասխանեց Բալթազարը ծխամործը վառելով:

— Ձեր մասին ինձ ասել ե իմ բարեկամներից մեկը:

— Իսկ ո՞վ ե այդ բարեկամը:

— Իսկապես չեմ հիշում վորն ե ասել, բայց և այնպես ձեր անունն ինձ անծանոթ չե:

Քիչ հետո կը կին յեկան յերկու արաք յենթասալաներն և Եղմոնը նրանց հետ դուրս գնաց:

Պարզ գիշեր երև այնպիսի մի լույս եղ սվորված: Րորջի շուրջը տարածված ալֆայի լայնածավալ դաշտերի վրա, վոր կարծես ժամը յերեկոյան հինգը կամ վեցը

չիներ, մինչդեռ ժամը առավոտյան արդեն յերեքն երէ
Բայց Բալթաղարը քնած չեր: Նրան սաստիկ հետաքրքը
բաւմ եր Եղմոնը: Ո՞վ ե նա, վո՞րտեղից յեկավ, ո՞ւր
զնաց յենթասպաների հետ, վո՞րտեղ պետք ե լսած լինի
իր մասին:

Յերկու որ հետո Եղմոնը վերադարձավ Բելաբեսի
բորջը հողնած և մտազրաղ. իսկ յենթասպաները Եղ-
մոնի հետ չեյին:

— Ծանր ե անապատում աշխատելը, — ասաց Եղ-
մոնը համազգեստը հանելով:

Բալթաղարը լուռ դիտում եր Եղմոնին. նա բարձ-
րահասակ, ալիքանման մազերով, փայլուն և խորհրդա-
մուր տչքերով գեղեցիկ մի յերխասարդ եր:

Հետեւյալ որը նրանք արթնացան շատ ուշ: Նախա-
ճաշից հետո Բալթաղարն առաջարկեց Եղմոնին միասին
զրոսանք կատարել:

— Ուրախությամբ յես կընկերանամ ձեղ, միայն
մի պայմանով:

— Յել ի՞նչ ե այդ պայմանը:

— Վոր դուք ինձ մանրամասն պատմեք ոռւսական
քանակի ապստամբության բոլոր անց ու դարձերը:

— Միթե այդ ձեղ հետաքրքրում ե:

— Զափազանց, — պատասխանեց Եղմոնը, ատրճա-
նակը կապելով:

— Կաշխատեմ ձեղ բավարարել, իսկ թե վորքան
այդ ինձ կհաջողվի, չեմ կարող յերաշխավորել, — Ժըպ-
տալով պատասխանեց Բալթաղարը և նրանք Եղմոնի
հետ թողին բորջը և ուղեվորվեցին դեպի հյուսիսում
ընկած լեռները:

Բալթաղարն ամենայն մանրամասնությամբ պատ-
ժեց Եղմոնին ոռւսական բանակի հեղափոխության ոմ-
բողջ մանրամասնությունները, միևնույն ժամանակ
սաստիկ քննաղատեց Փրանսիական կառավարության

ձեռք առած հակամարդկային բոլոր այն միջոցները, վոր դործուկրում եր դեներալ Գամբետան:

Եղմոնը լսում եր լուս և միենաւյն ժամանակ չափազանց զարմացավ, վոր Բալթազարն ուժեղ կերպով հարձակվում ե Փրանսիական կառավարության վրա:

— Զգույշ պետք ե լինել, Եղմոն, — մտքի մեջ ինքն իրեն թելազրեց Եղմոնը և աշխատում եր իրեն ակտոր բեր ցույց տալ դեպի Բալթազարի նկարադրած դազանային վայրենությունները, վոր կատարել եր Փրանսիական դեներալը: Եղմոնի անտարբերությունը շփոթեց Բալթազարին և հանկարծ նա կանգ առավ և հիշեց զինվորական նախարարության մեջ յուղոտ պաշտոն ստացած բարեկամի թելաբությունները. «Զգույշ պետք ե լինել. ամեն տեղ վիստում են բարձմաթիվ լրաւոներ»: Բալթազարն աշխատում եր իր անողոք քննադատությունները Փրանսիական կառավարության հասցեյին հետզհետեւ մեղմացնել: Այդ նկատեց Եղմոնը և մտքի մեջ ծիծաղում եր և հաճախ խօսակցության մեջ կրկնում Բալթազարի նախատական՝ խոսքերը՝ ուղղած Փրանսիական կառավարության հասցեյին:

Բալթազարն իրեն չափազանց վատ եր զգում. նա արդեն համոզված եր, վոր Եղմոնը հենց այն բազմաթիվ լրտեսներից մեկն է, վորոնք վիստում են ամեն տեղ:

Բալթազարի մեջ արթնացավ մի աննկարագրելի ատելություն դեպի Եղմոնը. նա բացարձակապես խույս եր տալիս Եղմոնից և խօսափում նրա հետ վորեն խոսակցություն ունեալուց: Եղմոնն այդ բոլորը նկատում եր պարզ կերպով. և սպասում եր հետեւանքներին:

Կրկին զանազան խորհրդավոր արար այցելուներ յեկան Եղմոնի մոտ. նա նըանց հետ եր լինում որերով. և վերադառնում եր բորջ շատ ուշ գիշերին:

Բալթազարը մտածում եր մի վորեւ թակարդի մեջ ըռնի Եղմոնին, վորպեսզի իր հայտնած մտքերը Փրան-

միական կառավարության մասին չկարողանա ուրիշներին հաղորդել: Այդ ել նկատեց Եղմոնը և շարունակում էր մտքի մեջ ծիծաղել:

— Ի՞նչ յօւր ունեք արարական ապստամբությունից, — հարցրեց մի որ Բալթազարն Եղմոնից: Եղմոնը խոկույն հանկացավ Բալթազարի հարցաքննության իմաստը և ժամանակացած ապստամբության:

— Յես այնքան զրադված եմ անսպատռում իմ պաշտոնով, վոր վոչ մի տեղեկություն չունեմ, — ապստամբանեց Եղմոնը և հանկարծ անցավ ուստական բանակի ապստամբության:

Բալթազարը ցնցվեց, կանգնեց վուտքի և խիստ տոռնով ասաց.

— Պարսի մայոր, յես կարծում եյի, թե պարեկեցած մարզու հետ դործ ունեմ, բայց ինչպես տեսնում եմ, սխալված եմ, և չափազանց ցավում եմ, վոր յես ինձ թույլ եմ տվել ձեզ հետ անկեղծ խոսելու:

Եղմոնը հանգարտ նայելով Բալթազարին, ասաց.

— Դուք ինչի՞ մասին եք խոսում և ի՞նչ եք ուղում ասել:

— Յես ուզում եմ ասել, վոր դուք լրտես եք, — ասաց զայրացած Բալթազարը և ձեռքը տարտվ դեպի ատրճանակը:

— Դուք ուզում եք ինձ մատնել, կարող եք:

Եղմոնը մի բոլե ցնցվեց, բայց զսպելով իրեն ասաց.

— Թողեք հանգիստ ձեր ատրճանակը, դուք այն դործածել չգիտեք:

— Ինչպես, — բացականչեց Բալթազարը, մի քայլ առաջ դնալով:

— Յեթե դուք կապիտան Բալթազարը չինեյիք, ձեր այդ խոսքերի համար արդեն խառնել եյի ձեր լյաբութը: Բայց ուրախ եմ, վոր դուք կապիտան Բալթազարն

եք և այդպիսով ինձ ազատում եք այդ վտարիկ վենավարժությունից, —ասաց Եղմոնը դուրս գնալով:

Բալթաղարը մնաց սենյակում մենակ կանդնած, ձեռքը տարճանակի վրա:

— Սա ի՞նչ է նշանակում վերջապես, —ասաց վոյրացած Բալթաղարը և պառկեց անկողնու վրա:

Հինգ որ եք անցել Բալթաղարի և Եղմոնի մեջ տեղի ունեցած կոնֆլիկտից: Բալթաղարը պահում եր իրեն վիրավորված և պաշտօնական: Իսկ Եղմոնն այնպես կարծես վոչինչ չեր յեղել: Յերկու սպաներն ապրուի եյին միասին, բայց չափազանց ոտար միմյանց համար: «Հարկավոր է կոնֆլիկտը հարթել և վերջ տալ այս կոմեդիային», —մտածեց Եղմոնը և ուզում եր խոռել, վոր հանկարծ ներս մտան դարձյալ նույն յերկու յենթասպաները:

Խոսեցին արարերեն, կարծ. և Եղմոնը նրանց հետ դուրս գնաց:

Տաք գիշեր եր, ամբողջ անապատի մեջ վոչ մի չոսանք չկար, իսկ դանազան միջատներ հանդարտ և ապահով իրենց թափանցիկ թերը շարժելով, թռչուտում եյին բորջի յերկաթապատ լուսամուտի ցանցերի շուրջը: Կես գիշերը վաղուց եր անցել, բայց Բալթաղարը վոչ մի կերպ քնել չեր կարողանում: Անհնար եր պառկել անկողնի մեջ: Քրտինքը հոսում եր առատությամբ և ամբողջ ծածկոցները թաթախում դորշ աղաղի մեջ: Անապատը խորը քնի մեջ եր, քնած չեր միայն հաստլիկ իսպանուհին, վորի կոշտ ձայնը մերթ ընդմերթ դեռ լսվում եր «Յերկնային դրախտից»: Բալթաղարը դուրս յեկավ բորջի դռան առաջ, քիչ շունչ քաշելու: Նայում եր նա կարմրած հորիզոնին և մտքով թռչում դեպի Փարիզ: Ահա նախարարության մեջ յուղու պաշտոն ստացած իր բարեկամի կոսկիտ դեմքը ցցվեց իր աչքի առաջ. և ակամայից նա անդրադարձավ

դեպի Սղմոնը։ Նրա համար անհնար եր այլևս հիշել
յուղու պաշտոն վարող բարեկամին, առանց Սղմոնի
և Մորիսի։

«Ինչու յես մոռացա նրա պատվերը չե՞ վոր նա ինձ
պատվիրել եր զգույշ լինել, իսկ յես անդգուշաբար ինձ
մատնեցի։ Միևնույնն եւ Սղմոնն անպայման ինձ կղա-
վաճանի։ Նա հենց այդ բաղմաթիվ լրտեսներից մեկն ե»։

Մտածում եր Բալթաղարն այսպես և սաստիկ ջղայ-
նանում, վոր չի կարողացել իրեն զսպել։

Բալթաղարն անդրադարձավ Մորիսին և հիշեց նրա
հանդուզն գեմքը, միառմի մտաբերեց բոլոր այն խոս-
քերը, վոր ասել եր նա շարժական ամրոցի որորվոյ
սենյակում։

Բայց ինչո՞ւ չինել Մորիսի նման, ինչո՞ւ վախենալ և
ինչո՞ւ մտածել, վոր Սղմոնը կարող է ինձ մատնել։ Ինչո՞ւ
յես պիտք եւ թագանեմ իմ կարծիքը և ի՞ մտքերը։ Չե՞ վոր
յես համածոյն եմ Մորիսի արտահայտած գուղտիար-
ների հետ։ Յես ի՞նչ չահ ունեմ պատերազմներից կամ
լայնածավալ Աֆրիկան նվաճելուց։ Հայրս ատաղձա-
դործ մի արհեստավոր եր, վոր յերբեք կուշտ չի յեղել իր
ամբողջ կյանքում։

Բալթաղարի աչքի առաջից անցավ, ինչպես կինոյի
մի ժապավին, իր ամբողջ մանկությունը։ Նա հիշեց այն
սկ ու թշլառ որերը, վորոնց յենթակա յեղավ իր մայրը
հոր մահից հետո։ Բալթաղարն ավելի և ավելի խորա-
ցավ, հեռացավ հեռու, հեռու... դեպի իր մանկու-
թյունը։

«Թշլառ ու աղքատ յերեխա եյի, աչքս միշտ հա-
րեանների յերեխաների վրա։ Մինչև այսոր դեռ իմ
մտքից դուրս չի յեկել, թե ինչպես շքեղ եյին հազնվում
ժանը, Ալֆրետը և բոլոր իմ դասընկերները, նրանցից
կոչվոք չեր ուկում ինձ մոտ նստել, վարովհետեւ յես
աղքատ եյի, յես նոր չորեք չունեյի և յես միայն չոր ու
կոշտ հաց եյի ծոմում։ Մայրս տանջվում եր մեզ հա-

մար, նաւ լիտացք եր անում կամ զանազան հարաւառների զոները և լուսամուտները լվանում: Հաճախ մայրս վերադառնալով մեծատունների մոտ աշխատելուց, պրպահում մի վորեն քաղցրեցնենի կառք կամ սպառգ եր ընդում: Նա տալիս եր ինձ այդ հարուստից ստացած վըշրանքը և թաց աչքերով նայում, թե ինչպիսի տիտրժակով յես կուլ եյի տալիս այդ համեղ վշրանքները: Մեռէ եր քոյլը, զիմուկը մնացել եր մասս անկողնու վրա, իսկ մենք փող չունեցինք թաղելու: Մայրս նույնպիս հիվանդ՝ ջախջախված մայրական զգացմունքների մեջ, բավարարվում եր միայն աղի արցունք թափելով, մինչդեռ հենց այդ բոպեցին մեր հարեւան տանը խրախնձանք եր»:

«Ինչո՞ւ յեն մեղ ուղարկում Աֆրիկա կողոպտելու, սպանելու, բռնաբարելու և արյան մեջ խնդղելու ոիջոների տալստամբությունը կամ կախաղան բարձրացնելու Ամարին, վոր մերժում և ճանաչելու Փրանսիական կառույթառության որենքները: Եղմոնն ինձ մատնելու յե, թող մատնի: Բուրժուազիան իր թշնամիների շարքում կարող է նշել և իմ անունը»:

Նոր եր Բալթազարն իր այս յեղբակացությանն հանդել, յերբ վերադարձավ Եղմոնը:

— Բարի յերեկո, — ասաց Եղմոնը, Համազգեստը Հանելով:

— Բարի յերեկո, — պատասխանեց Բալթազարը:

— Դուք զեռ քնած չեք:

— Ինչպես աեսնում եք՝ վոչ: Շատ տաք ե, անհնարին և քնել, — պատասխանեց Բալթազարը ծխումործք վառելով:

— Իսկապես վոր տաք ե, բայց յես այնքան հոգնած եմ, վոր կարծեմ տոթի աղղեցությունը չպիտի զգամ, այնպիս և քունս տանում:

— Դե բարի գիշեր, — ասաց Եղմոնը և անմիջապես հանվելով, մտավ անկողին: Բալթազարը մնաց կանդ-

նած սննդակում, ծխամորճն ատամների մեջ սեղմած: Նա զարմացած նայում եր Եղմոնին և մտածում, —«ինչ չո՞ւ նա անմիջապես քննեց»...

Հետեւյալ որը Եղմոնը շատ շուտ արթնացավ և անմիջապես զուրս յեկավ:

Բալթաղարը, վոր ամբողջ գիշերը չեք կարողացել քննել, միայն տուավոտյան արշալույսը բացվելու ժամանակ հոգնած ու թմրած փակել եր աչքերը: Յեվ յերբ արթնացավ, Եղմոնն արդեն հեռու յեր: Նա վերադարձավ միայն յերեսու որ հետո:

Նոր եր վեր կացել Բալթաղարը և սկսել հագնվել, վոր մի արար ներս մտավ մոխրագույն բուռնուոխ մեջ փաթաթված:

— Կապիտան Բալթաղար, — հարցըց արարական ակցենտով:

— Յես նմ, — պատասխանեց Բալթաղարը զարմած:

Արարն առանց խոսելու ծոցից հանեց մի նամակ և տվեց Բալթաղարին: Մինչ Բալթաղարը զարմացած և շփոթված նամակի ծրարն եր պատուում, արարն անհայտացավ:

Բացելով նամակը, Բալթաղարը կարդաց հետեւ վյալը.

«... Իմադա, վոր Բելարեսի բորջում սպասում ես քարավանին. ցավում եմ, վոր իմ մասին յերկար տեղեկություններ չեմ կարող տալ...» Վորտե՞ղ եմ, ի՞նչ եմ անում՝ կիմանաս հետո: Այդ շրջանում ե դոնվում Եղմոնը, մտերմացիր և ոգնիք նրան: ինչ վոր անես նրա համար, դա միննույնն ե, վոր անում ես ինձ համար: Նամակս այրիր»:

Մորիս:

Բալթաղարն ամբողջ մարմնով սկսեց դողաւ: մի քանի անգամ նամակը կարդալուց հետո անմիջապես վառեց լուցկին և այրեց: «Ի՞նչ ե նշանակում այս, — մտա-

Տեց Բալթաղարը:— Ուրեմն Եղմոնը Մորիսի ընկերն է, ուրեմն նրանք յերկուսն ել զբաղված են միւնույն դործով: Բայց ի՞նչ գործ ե դա, ի՞նչ են ուղում անել նրանք»:

Այժմ պարզ յեղավ Բալթաղարի համար Եղմոնի խորհրդավոր այցելուների և նրա որերով բորջից ահայտանալու կապատակը:

Բալթաղարը խղճի խայթ զգաց, վոր Եղմոնին ընդունել և լրտեսի տեղ և նրա վրա նույնիսկ ատրճանակ ե քաշել:

Եղմոնը վերադարձավ չտիաղանց մտահոգված: Նրահետ յեկել եյին և մի խումբ արարներ 10 ուղտերով: Եղմոնը գտավ Բալթաղարին ուրախ արամադրության մեջ և դարձացած հարցընց ուրախության պատճառը:

— Խոսմ են՝ յերկու որից քարավանն այսուեղ կիխնի: Դա ինձ ուրախություն և պատճառում:

— Վոչ, չորս որից, — պատասխանեց Եղմոնը, նոտելով մահճակալի վրա:

Բալթաղարը վորոշել եր անպայման ներողություն ինդքել Եղմոնից, նրան լրտես անվանելու համար, բայց և նույնպես վորոշել եր վոչ մի խոսք չհայտնել Մորիսի նամակի մասին:

— Պարոն Եղմոն, թույլ տվեք ներողություն խնդրել ձեզանից, վոր յիս ձեղ լրտես անվանեցի, — առաց Բալթաղարը չափաղանց հուզված:

— Յե՞րբ, ի՞նչ, դուք իդուր եք ուշաղբություն դարձնում այդպիսի դատարկ բաների վրա. յես արդեն նույնիսկ մոռացել եմ այդ բոլորը: Հա, բայց ինչն ասի՞ս ձեզ համոզվելու, վոր յես լրտես չեմ, — ասաց Եղմոնը, պառկելով անկողնու վրա:

Բալթաղարը շփոթվեց ու կմկմաց.

— Հենց այնպիս, իմ նախազգացումներս ինձ ստիպեցին համոզվելու, վոր դուք ընդունակ չեք այդպիսի ստոր գործ կատարելու:

— Զեր նախաղղացումները ձեզ չեն խաբում, կապիտան, կարող եք վստահ լինել:

Բելարեսի բորջը թողնելու ժամանակը մոտենում եր. արդեն հաստատ լուրեր կային, վոր անապատը կարող քարավանը հեռու չեր:

Եղմոնը սաստիկ զրաղված եր. բորջ եյին գալիք բեռնավարված փոքրիկ քարավաններ և դնում անհայտ ողջությամբ:

— Դեղորայք են այս բոլորը, — ասաց Բալթաղարին մի որ Եղմոնը: Բալթաղարը լուռ եր, նա վոչինչ չասաց:

Մի դիշեր Բալթաղարը և Եղմոնը բորջի սենյակում միասին թեյ եյին խումում: Այդ որը վոչ մի արար այցելու չեր ունեցել Եղմոնը: Բալթաղարը մի արտակարդ ցանկություն զգաց խոսել Եղմոնի հետ և մտերմանալ:

— Մայոր Եղմոն, յես ուզում եյի ձեզ հետ խոսել մի բանի մասին:

— Խեղբեմ, — ասաց Եղմոնը թեյի դավաթը սեղանի վրա դնելով:

— Դուք ի՞նչ տպալորություն եք ստացել ինձանից և ինչ եք մտածում իմ մասին, — հարցրեց Բալթաղարը:

— Ինչո՞ւ յե ձեղ հետաքրքրում իմ կարծիքը ձեր մտածին. դուք աղնիվ մարդ եք և ուրիշ վոչինչ:

— Միայն այդքա՞ն:

— Ուրիշ ի՞նչ կուզեյիք, — ասաց Եղմոնը ժպտալով:

— Յես գիտեմ, թե դուք ինչով եք զբաղված այս-
տեղ:

— Կարող ե պատահել:

— Վոչ թե կարող ե, այլ հաստատ գիտեմ:

— Դուք սպասնո՞ւմ եք ինձ:

— Ամեննեին:

— Ուրիշ՞մն...

— Ուրմեն ուզում եմ ձեզ ոգնել:

— Ինձ ողնե՞լ, — հարցրեց զարմացած Եղմոնը:

— Այո, ձեղ ողնել: Յես գիտեմ, վոր դուք Մորիսի-

ընկերն եք, —ասաց Բալթազարը, ծխախոտի մնացորդը
դեն շպրտելով:

— Դուք չեք սխալվում, բայց չգիտեմ, թե ձեր ող-
նությունն ինչ սահմաններում պետք է լինի:

— Ես խռատացել եմ Մորիսին՝ նրան ոգնու, ևոյ-
նիսկ յեթե այդ ոգնությունը լինի իմ կյանքի գնով:

— Այդ բավական չե. մեր դործն անհատական հա-
մակընքի վրա հիմնված չի կարող լինել. այսուել աշ-
խարհաբացքի և գաղափարի խնդիր ե դրված։ Յեթե
դուք լիովին չեք աղասադրված ձեր հին ասպետական
միբերայիզմից գուք չենք կարող մեզ ոգտակար լինել։

— Կաշխատեմ, —պատասխանեց Բալթազարը:

— Տուր ձեռքդ:

Յերկու սպաներն ամուր սեղմեցին իրար ձեռք:

Քարավանն արդեն յեկել եք, հետեւյալ դիշեր նրանք
պետք ե թողնեյին Բելարեսի բորջը։

— Գիտես, յես ստիպված եմ ուրիշ ուղղությամբ
գնալ, —ասաց մի որ Եղմոնը։ Հետեւալեն դուք մե-
նակ պետք ե դնաք Աֆլու։ Նոր հրահանդ և տեղեկու-
թյուններ եմ ստացել. իմ այն շրջանում լինելն անհրա-
ժեշտ ե։

— Զտիպազանց ցավում եմ, վոր մենք միասին չխետք
ե կտրենք անապատը, —ասաց Բալթազարը. դառնա-
ցած։

— Վոչինչ, կհանդիպենք։ Բայց յես պետք ե խնդրեմ
ձեղանից, վոր ձեր հսկողության տակ մնան 15 ուղու-
բեւնավորված։ Ձեզ հետ կլինեն յերեք արար. նրանք
ձեզ կհայտնեն, թե վորտեղ պետք ե մնան այդ ուղարերը։
Միայն պետք ե դդույշ լինել. դրանք դենքեր են, վոր
մենք ուղարկում ենք ապստամբ աշխաթներին։ Դիտեք,
կավիտան Բալթազար, յես գիտեմ ձեր մասին և հա-
մոզված եմ, վոր դուք մեզ չեք դավաճանի, հետեւալես
յես միանգամայն վստահ ձեր հավատարմության վրա,
պիտի խնդրեմ, վոր դուք կապ պահանեք ինձ հետ։

— Բայց ինչպես, — Հարցը Բալթաղարն ուրա-
խացած :

— Իմ սուրհանդակները ձեղ կդանեն, ուռք միա-
միտ յեղեք :

— Բայց վորտեղ և Սորիսը :

— Այդ չեմ կարող ասել. Հետո իհարկե կիմանաք,
բայց դուք նրան չեք տեսնի: Յեկ մի հետաքրքրվեցեք:

— Մայոր Եզմոն, յես ուրախ եմ, վոր դուք վստա-
հանում եք ինձ, և յես ձեղ պատվո խոսք եմ տալիս
ձեղ հետ լինել իմ ամբողջ եյությամբ:

‘ Յերկու սպաները կըկին. Ղերմագին սեղմեցին մի-
մյանց ձեռք:

Լուսնյակ, պարզ գիշեր եր. Սահարայի յերկնականարի վրա փայլում եյին բյուրավվոր սպազուն առտղեր: Ամեն ինչ խաղաղ եր, ամեն տեղ խորհրդավվոր լուռթյուն եր տիրում:

Ալֆայի դաշտերը հետղհետե նոսրանում եյին և սկսվում եր Սահարայի ավաղոտ սահմանները: Բալթաղարը և Եղմոնն անմիջապես հանեցին իրենց կոչիկներն ու գուլսղաները և սկսեցին կտրել Սահարայի փարուն և տաք ավաղը մերկ վոտքերով. անհնար և կոչիկներով կոխկրտել ավաղը. վոտքերը խրվում են ավաղի մեջ, ման զալը դառնում և հոգնեցուցիչ. անսպատը կարելի յե կտրել միայն վոտքի մատների աջակցությամբ: Եղմոնը և Բալթաղարը հրաժարվեցին ուղտ նստելուց. դա չափազանց դժվար և ծովային հիվանդություն և առաջացնում. այդ կենդանին կարող և ծառայել միայն արարներին, վորին նրանք չափազանց վարժ են:

Քարավանը շարժվեց, ուղտերի յերկար շարքը կազմվեց: Առջևից գնում եյին վալատները. նրանց հետ և այն կազմը, վոր հետեւում և կողմնացույցին և հսկում ողերեւութային գործիքների գործածմանը: Սահարայում ճանապարհորդելը վերին աստիճանի վտանգավոր ե. յեթե դուրս գալու կետից մի փոքր աջ կամ ձախ ընթանա քարավանը, նա այլևս տեղ չի հասնի և դատապարտված կինի ծարավից վոչնչանալու: Հատուկ ճանապարհներ կան, պիտի այնտեղից անցնել, իսկ այդ ճանապարհները չեն յերեւում, վորովհետու ցիկլոնը կամ սամումը բլուրանման ավաղակույտեր և տեղափոխում:

աշից ձախ և անհայտացնում վորես ճանապարհի հետք:
Վալալաղները և ուղիրեւութային մեքենաներ վարող-
ները չափազանց ջղային եյին և անընդհատ քննում եյին
դործիքները: 500 ուղարկող շարքով գնում եյին իրար
հետևեց անապատի մեսելային լոռությունը խանգարե-
լով իրենց զանգակների ներդաշնակ զողանջով: Ուղտա-
պանները, յերկար փայտերը թեսերի տակ դրած, ուրախ
ժաղիտն իրենց թուլի դեմքերին, նվազում եյին սրինդը
և յերդում արարական մելամաղձու մեղեդիներ:

Արշալույսը բացվում եր, արեւելքը վառվում եր ալ
կարմիր գույնով, հեռվում կարծես ավազի վրա կարմիր
թափիշ եր փռված: Քարավանը կանգ առավ. ուղտա-
պանները հավաքվելով, չողեցին փափուկ և տաք ավազի
վրա ուղիղ շարքերով, կողք-կողքի. մարաքուն բարձ-
րացավ ուղտի վրա և սկսեց անուշ ու դողդողջուն ձայ-
նով յերգել առավոտյան աղանք:

Հայատացյալները մեռելային լոռության մեջ և հա-
մաչափ շարժումներով խոնարհվում եյին փխրուն ավազի
վրա և բարձրանում, մրմնջալով իրենց աղոթքը:

Արեն արդեն այրում ե. քարավանը վերջնականա-
պես կանգ և առնում, արեւ մայր մտնելուց հետո ճա-
նապարհը շարունակելու համար: Վեցերորդ որն եր,
ինչ Եղմոննը և Բալթազարը թողել եյին Բելաբեսի բոր-
ջը. նրանք հասան մումամ Շումա:

— Այստեղ մենք կրածանվենք, — ասաց Եղմոնը, —
յես պիտի ե գնամ տարբեր ուղղությամբ:

Քարավանը կրկին շարժվեց, բայց առանց Եղմոնի:
Նրա հետ մնացին 25 ուղտ և մոտ հիսուն մարդ: Քարա-
վանը շարժվում եր. նա նմանում եր տաք յերկրներ չփող
կրունկների յերամներին, վոր կռկռալով կտրում են յեր-
կար տարածություններ:

Բալթազարը գնում եր քարավանի հետ տիրուր և
մտախոհ: Եղմոնն այժմ գրավել եր իր մտքի մեջ այն
տեղը, վոր հատկացված եր Մորիսին: Եղմոն և Մորիս—

Դրանք նույն անձնավորություններն եյին Բալթադարի համար:

Սահաբայի յերկարությամբ ընկած եր շարժական առլազի բլուրների մի չղթա. քարավանը համարյա անցնում եր այդ շարժական բլուրների վրայից. ուղտապահները շախաղանց անհանգիստ եյին. արևն արտակարդ կերպով այրում եր. ուղտերը նույնիսկ ջղայնության նշաններ եյին ցույց տալիս. ողերեւոթային հետազոտությունը նախառահանում եր սոսկալի փոթորիկ և անձրեւ. Բարոմետրն ընկել եր: Վարագները քարավաններ քաշում եյին դեպի ավաղի բլուրների գագաթները: Ամեն ինչ կատարվում եր շտապ: Աղմուկը, սուլոցը, բացականչությունները խառնվել եյին իրար. բոլորն սպասում եյին մի դժբախտ պատահարի:

Հանկարծ ուժեղ քամի բարձրացավ: Յերկնակամարը ծածկվեց ևն ամպերով, արեւ խավարեց. վորոտն ու կայծակն ահռելի դղրդոցով ոմբակոծում եյին անսպասը: Անձրեն սկսվեց. բայց ի՞նչ անձրեւ. յերկինքը պատուվեց և գետերի պես ջուր եր հոսում անապատի վրա: Պատապարվելու վոչ մի հնար չկար: Անձրեւ հետըզնեան ավելի և ավելի յեր սասականում: 10 բոպե չանցած լայնուծավալ անապատը փոխվեց պղտորս ովկիսնոսի. ջուրը շարունակ բարձրանում եր, ուժեղ պառույտներ գործելով: Մոլեռանդ նրաները ձեռքերը քսելով թուխ ու ճվաճե յերեսներին, աղոթք եյին մրմնջում:

Զուրը բարձրանում եր... Շարժական բլուրները հետզհետե փլզում եյին ուղտերի վոտքերի տակ: Յեթե վորեե կենդանի ընկնի այդ պատովող ջրի հորձանքի մեջ, ազատվելու վոչ մի հնար չի լինի: Արաբները սոսկումով նայում եյին բարձրացող ջրին և սարսափահար բացականչություններ անում: Զուրը դեռ շարունակում եր բարձրանալ...

Վերջապես հետզհետե անձրեւ մեղամացավ և դադարեց. սարսափահար ուղտապահների դեմքերը կրկին

փայլել սկսեց . տաս բոռե հազիվ կար , ինչ դադարել եք
անձրեւ և արդեն մի կաթիլ ջուր չեր մնացել ովկիանու-
սի վերածված անսապատռամ : Ահա դարձյալ պսպղուամ
և այրող արեւ և քարավանի վոտքերի տակ չոր ու ցա-
մաք ավազի անսահմանությունն և փոված :

Քարավանն իջավ ավազի բլուրներից և սկսեց շա-
րունակել իր յերկար ու ճանձրալի ճանպարհորդությու-
նը : Վերջապես քարավանը կանգ առավ ջրհորի մոտ :
Ու զտապանները մեծ վոգեվորությամբ չողեցնուած եյին
ուղարերը կլոր շրջանակի ճեռվ , բեռները ցած եյին վերց-
նուած ու վրաններ ամբացնուամ :

— Յերկա՞ր սկեաք և սպասել այստեղ , — արցընէց
Բալթազար քարավանի առաջնորդին :

— Մինչեւ բոլոր ուղաբերին ջրենք ու ջրի տիկերը
լցնենք , — պատասխանեց առաջնորդը :

Տասնյակ մարդիկ զրադված եյին ջրհորը մաքրե-
լով . անընդհատ փչող քամիները լցրել եյին ջրհորը :

Պատրաստուած եյին ջրի տիկերը :

Մոտ 50 մետր խորությամբ և չափազանց լայն
ջրհորը պատրաստ եր : Յերկու ուղտապան իջեցրին
ջրհորի հատակը և կախեցին տիկերը : Տաս որ շաբունակ
ջուր եյին քաշուած ջրհորից և խմացնուած ուղտերին : Յերբ
ամեն ինչ վերջացրին , քարավանը կրկին առաջ շարժվեց
զանգեր խփելով և սրինգներ նվազելով : Յերկար տաղտ-
կալի տարածություններ կտրելուց հետո , քարա-
վանն առավոտյան արշալույսին թիքեց իր ուղղությունը
և մտավ յերկու քարքարոս բլուրների մեջ :

Հեվալով և զանգեր խփելով քարավանը վեր
բարձրացավ ու կանգ առավ :

Քարավանը հասել եր Աֆլու . գորշ ավազից հետո
բացվեց մի չքնաղ տեսարան . սաղարթախիտ պտղատու
ծառեր , աներևակայելի բուսականություն , ծաղիկ-
ներ , կանաչ գետակներ և աղբյուրներ : Այդ բոլորն այն-
պիսի հմտությամբ և գեղեցկությամբ եր պատրաստ-
ված իրար մոտ , վոր կարծես արհեստական լիներ :

Աւղապապանները թողնելով ուղտերը, փաղում ու չողում եյին սառը աղբյուրի ափին, խմում, խմում եյին ու խմում սառը և համեղ ջուրը, ըմացվում, դեմում եյին պարզ ջուրը, կրկին լվացվում և կրկին խմում: Կարծես նրանց համար ուխտատեղի լիներ աղբյուրը, արդեն ջուրը պաշտամունքի առարկա յեւ արարի համար. ծարավների աշխարհում միտի սրբությունը ջուրն եւ:

Նրանք յերգվում են ջրի վրա, նրանք իրար մաղթում են ծարավ չմնալ: Ծարավից տանջվելը և ծարավից մեռնելն արարի համար ամենից սոսկալի պատիժն եւ, վորից նա զարհուրում եւ:

Աւղապապանները ջուրը սիրելով, ջուրը փաղաքշելով և չուրը չոյնելով եյին զրադված, յերբ բարեկարդ խճուլու վրա յերեաց ուղտերից բազկացած մի հեծեւազոր, վոր գալիս եր սրբնթաց:

Դա Աֆլույի ցեղապեսն եր իր հետեւորդներով. գալիս եր կապիտան Բալթաղարին դիմավորելու և քարավանին իրավունք տալու ովազիսը մտնելու:

Յեղապետն իջավ իր շքեղ ուղտից և մոտոնալով կապիտան Բալթաղարին, բարի գալուստ մաղթեց:

Յեղապետ Բեն Ալին հաղթանգամ և պարթե հասակ ուներ, չսփառանց թուխ յերես, խուճուճ մորուշ, փայլուն աչքեր ու թավ հոնքեր և ուսերի վրա նա հպարտությամբ կրում եր կարմիր ծիրանին, ի նշան ցեղապետության և կրծքի վրա փայլում եյին պատվանշանները:

Այցելության ձևականությունը վերջանալուց հետո, Բալթաղարը թողեց քարվանը և ցեղապետի հետ մեկնեց ովազիսը:

Յետղետե բլուրից իջնում եյին դեսլի Աֆլու:

Հեռվում արդեն յերեռում եր Աֆլուն, շքջապատված բարձր բարդի ծառերով, իսկ քաղաքը կիսալուսնաձև ուարածվում եր բարդիների մեջ: Յեղապետը Բալթաղարին առաջնորդեց ամբողը: Աֆլույի բերդն անապա-

ուի ռազմագիտական նշանակություն ունեցող ամենից մեծ և ամուր բերդերից մեկն եւ նա բաղկացած եւ 8 բակից և չորս կողմից շրջապատված եւ անառիկ պարիսպներով, իսկ պարիսպների բարձր աշտարակների վրա ծածանվում ելին Փրանսիական բուրժուազիայի գույները:

Բերդի գրադարանի դահլիճում սպասում եր Բալթազարին գարնիզոնի հրամանատարն իր սպաներով: Նա չափազանց սիրալիք ընդունելություն ցույց տվեց Բալթազարին և անմիջապես նրան առաջարկեց իր համար նախորոք պատրաստած բնակարանը:

Բալթազարի նոր բնակարանը յերկու հարկեց բաղկացած մի չքնաղ վիլլա յեր, արաբական վոճով, կառուցված մի շատ զեղեցիկ պարտեզի մեջ: Իսկ Բալթազարի շքախումբը կազմում եր 50 հեծելազոր և մի տասնյակ այլ ծառաներ: «Մեր տերերը բավարարում են մեր պահանջները և մեզ դարձնում իրենց կամակատարները», հիշեց Բալթազարը Մորիսի խոսքերը և հանվելով, մտավ մարմարե ավազանը լողանալու:

Հետեւ յալ որը Բալթազարը յերկար ու տաղտկավի ճանապարհորդությունից հետո իրեն արդեն կազզութված եր զգում: Բերդի հրամանատարը ժամը 11-ին սպայակույտի ժողով եր նշանակել խորհրդակցության դահլիճում: Բոլոր սպաներն արդեն գրավել ելին իրենց աթոռները, յերբ Բալթազարը ներս մտավ:

Հրամանատարը կարճ զեկուցումով հայտնեց դրությունը և կարգաց կոմունիստական կուսակցության Ալֆիրի կենտրոնական կոմիտեյի կոչը՝ ուղղած արարներին:

— Դրությունը լուրջ ե. Մոսկվայի ալիքներն անցնում են և Սահարայի վրայով. պետք եւ միջոցներ ձեռք առնել: Մենք պետք եւ ցրվենք զանազան ուղղությամբ, այցելելու ցեղերին և մանրամասն ծանոթանալու դրության հետ: Բերդում կմնա միայն կապիտան Բալթազարը. մեր ճանապարհորդությունը կտևի մոտ

մի ամիս։ Ոմարի պատրաստությունները բավական լուրջ հանդամանք ե ստանում, պետք ե առաջն առնել։ Ասլուստամբների գլխավոր ուշադրությունն ուղղված է մեր բերդի վրա։ Գրավոր հրահանգներ թողել եմ կողիտան Բալթազարի համար։

Սպայակույտը մեկնեց։ Բերդում մնաց միայն Բալթազարը, ընդհանուր հրամանատարի գլխավոր հրահանգներով։ Բերդը լուրջ պատրաստության մեջ եր, ամրացվում եր, և փոխվում եյին ավազանի ջրերը՝ թարմացնելու։ Գարնիզոնի պահակախումբն ամեն որ կանոնավոր զինավարժության եր դուրս գալիս։ Զինարանի գոները շատ հաճախ եյին բացվում, իսկ քարովանի բերած ալյուրը մեծ խնամքով տեղավորեցին պահանատի շտեմարաններում։ Լրտեսները վիստում եյին ամեն տեղ և շարունակ զանազան հաղորդադրություններով լայնածավալ գրավոր տեղեկություններ հաղորդում։ Իսկ կենտրոնի հեռագրերը վճռական եյին և աղդու՝ «արյան մեջ խեղղել վորեե շարժում»։

Բալթազարն արդեն ծանոթացել եր բոլոր գործերին, ցեղապետ Բեն Ալին որական մի քանի անդամ զանազան պատրվակներով այցելում եր կապիտան Բալթազարին և հաղորդում նրան թե քաղաքի և թե ապստամբների գործունեյության մասին։ Յեղագետ Բեն Ալին իր թուխ գեմքի վրա կրում եր մարդկային ամենից զգվելի բացասական կողմերը։ Նրա վավաշու շրթունքները շարունակ դողում եյին, և իր համառությամբ ու խորամանկությամբ նա ամրացել եր։ Այդ բոլորը կապիտան Բալթազարը պարզ կարդում եր ցեղապետի գեմքի վրա և մի տեսակ արդահատանք ուներ դեպի ցեղապետ Բեն Ալին։ Մի որ ցեղապետը գալու կապիտան Բալթազարի մոտ, ասաց։

— Եես կուզեյի ձեզ ցույց տալ անապատի գլխապտույտ յերեսույթներից մեկը և հուսով եմ, վոր չեք մերժի։

— Ուրախությամբ, —պատասխանեց Բալթազարը:

Համաձայն իր խոստման, Բալթազարը մի յերեկո դնաց ցեղապետ Բեն Ալու մոտ: Դրսի դուռը քանալով, Բալթազարը մտավ մի փոքրիկ և քառակուսի բակ, յարձր, կրով սպիտակացրած պատերով: Պատերի տակ ցանված ելին արեւելյան կարմիր ծաղիկներ. վոչ մի ծառ չկար: Բակի մեջտեղը պապղում եր մարմարե շատրվանը:

Ցեղապետը, կարմիր ծիրանին ուսերին, անմիջապես ընդառաջնեց կապիտան Բալթազարին, ասելով.

— Ես յերջանիկ եմ, վոր պատիվ պիտի ունենամ իմ համեստ հարկի տակ մի քանի ժամ ձեզ հետ միասին չնչելու միևնույն ողը: Դուք ինձ յերջանկացրիք, կապիտան, ընդունելով իմ հրավերը: Դուք դրանով ապացուցեցիք, վոր Փրանսիական անհաղթելի կառավարությունը գնահատում ե իմ մատուցած ծառայությունը:

— Խնդրեմ ներս համեցեք, —խոնարհեց ցեղապետը, դուռը ցույց տալով:

— Կապիտան, յես վորոշել եմ այս գիշեր ձեզ ծանոթացնել արարական մի քանի հաճույքների հետ. յեթե հաջողված լինեմ իմ ծրագրի մեջ, շատ ուրախ պիտք ե զգամ ինձ, իսկ յեթե վորեւ պակասություն լինի, խոնարհաբար ձեր ներողամտությունը պիտի հայցեմ: Յեվ վորպեսզի դուք միանգամայն ազատ դդաք, յես ձեզ պետք ե խնդրեմ, վոր հանեք ձեր համազգեստը և հազնեք արարական տարագ, վոր յես արդեն պատրաստել եմ ձեզ համար: Արարները մեծ պատկանաք ունեն դեպի համազգեստը և ձեր ներկայությամբ նրանք չափազանց ճնշմած պիտի զդան իրենց, —ասաց ցեղապետը, բանալով սենյակի դուռը: Կապիտան Բալթազարը ժպտաց և գլխով համաձայնության նշան տվեց:

Կապիտան Բալթազարին սենյակ առաջնորդելով,

անմիջապես ներս յեկան յերկու նեգր ներքինիներ, ըհ-
բելով մի մեծ ափսեյի վրա դրած Բալթազարի համար
պատրաստած զգեստները՝ պատած զույնզգույն ծա-
ղիկներով և վարդաշրով ոժած:

Կապիտան Բալթազարը վրան զցեց բուռնուսը և
արդեն սլատրաստ եր: Բեն Ալին նրան առաջնորդեց Հյու-
բասենյակը:

Հյուրասենյակը մի ընդարձակ դահլիճ եր արաբա-
կան դույնզգույն ապակիներով պատած առաստաղով,
խոկ անկյուններում յեռանկյունի փոքրիկ հայելիներ
ամբացրած: Փոքրիկ դույնզգույն ապակիներով եյին
նաև պատուհանները: Հատակը ծածկած եր ալֆիրյան
ընտիր գորգերով, խոկ գունավոր պատերը զարդար-
ված եյին մետաքսե փոքրիկ գորգերով ու Դամասկո-
սից կամ Մեքքայից բներած ընտիր իրերով և կերպասնե-
րով:

Դահլիճի վերին մասն ավելի բարձր եր և ծածկված
եր մետաքսե գորգերով, խոկ պատերի տակ թափված
եյին մետաքսե և վոսկեղոծ ասեղնազործ փոքրիկ բաղ-
մաթիվ բարձեր: Դահլիճի վերին մասում իրավունք
ունեն նստելու միայն իշխանավորները և առհասարակ
պատվավոր մարդիկ: Յեղապետն այլակեղ ել առողջ-
նորդեց կապիտան Բալթազարին: Վերին մասում նրս-
տած եր արդեն Արդել Մեջիտը՝ արաբների պաշտա-
մունքի առարկան, վորովհետեւ նա անդիք գիտերը ո-
րենքները, նույնպես և ղորանը. նրա համբավը տու-
րածված եր ամբողջ Սահարայում: Նրան նույնիսկ սըր-
բերի շարքն եյին դասում: Արդել Մեջիտը մի հաղթան-
դամ և գեր մարմնով պատկառելի ծերունի յեր: Խոսում
եր դանդաղ և մեծ պաֆոսով: Իրար հետեւից գալիս ե-
յին հյուրերը, ներս եյին մտնում և անմիջապես մոտե-
նում Արդել Մեջիտին, հարգանքով համբուրում նրա
ձեռքը ու յետ-յետ գնալով, գրավում իրենց տեղերը:
Խոկ Արդել Մեջիտը ձեռքի թեթև շարժումներով իր

«բարձր» շնորհն եր ուղարկում իր յերկրպագուներին:

Արդել Մեջիտը չափաղանց ուշադիր եր դեպի կապիտան Բալթաղարը և վոչինչ չեր խնայում իր «բարձր» դիտությունը ցուցադրելու: Ամբողջ Արևելքի՝ իրանի, Թուրքանի, Բելուջիստանի, Ավղանստանի զատմություններն անելուց հետո, մեծ «գիտնականն» սկսեց խոսել յեվրոպական պետությունների քաղաքակրթությունից:

— Յես ընդունում եմ քաղաքակրթությունը միայն այն պայմանով, վոր նա ծառայի ընդհանուր մարդկության շուրջերին, այսինքն՝ կրոնական ու յեղբայրական կազերն ամբացնելուն: Բայց յեվրոպական ներկա քաղաքակրթության իմաստն արյուն թափելու և դորեղն անդորին ձնչելու ու կողոպտելու գաղափարի մեջ ե, —ասաց Արդել Մեջիտը, մետաքսի բարձերի վրա հենվելով:

— Քրիստոնեական աշխարհը, —շարունակեց «գիտնականը», —մեզ՝ մուսուլմաններիս մեղադրում ե, վոր մեր կյանքի ասանցքը կրոնն ե: Ճիշտ ե, մեզ համար կրոնն ամեն ինչից բարձր ե, բայց ասեք ինդրեմ, այլպես չե՞ քրիստոնյաների համար: Մեզ մեղադրում են, վոր կրոնական պատերազմների մեջ ենք շարունակ, իսկ մոռանում են իրենց կազմակերպած խաչակրաց արշավանքները:

— Սիդի Արդել Մեջիտ, յերկու կրոններն ել մեկ են, — ասաց կապիտան Բալթաղարը, վորպեսզի Սահմանայի «գիտնականը» վերջ տա իր խոսակցությանը:

— Այսինքն՝ մեծն Մահմեդին մենք չենք կարող համեմատել մյուս սրբերի հետ: Բայց և այնպես պետք ե ասեմ, վոր ճեր կուլտուրան ծառայում ե միայն թունավոր գաղեր հնարելու և տիրելու գործին:

— Ճիշտ ե, Սիդի Արդել Մեջիտ: Ինչպես քրիստոնյա տերերը վոչինչ չեն խնայում տիրելու, նույն անում են և վոչ քրիստոնյա տերերը: Տերերի մեջ տար-

բերություն չկա, —ասաց Բալթազարը, ծխախոտը վառ-
ռելով:

— Այսինքն՝ մենք ուզում ենք, վոր Խոլամի հետե-
վորդներն ապրեն Խոլամ տերերի հետ, —ասաց Արդել
Մեջիտը:

— Այսինքն՝ ապրեն այնպես, ինչպես դուք եք ցան-
կոնում, այլ վոչ թե ապրեն այնպես, ինչպես իրենք են
ցանկանում:

— Զեմ հասկանում:

— Զհասկանալու վոչինչ չկա: Արարիան գտնվում
է Փրանսիական կամ անգլիական բուրժուազիայի ձեռ-
քերում: Ի հարկե, հաճելի չե ձեզ: Արարական բուր-
ժուաղիան կցանկանաք, վոր Արարիան լիներ իր ձեռքե-
բում, վորպեսզի ինքը նրան շահագործեր և վոչ թե
ուրիշները: Ուրեմն այստեղ ինչ տարբերություն կարող
է լինել արար աշխատավորի համար, արդյոք Փրան-
սիացին ե նրան շահագործում, թե Արդել **Մեջիտը:**
Յերկու դեպքումն ել հավասարապես շահագործվողը
պետք ե լինի միայն արար աշխատավորությունը:

Արդել **Մեջիտն** անհանգիստ զգաց իրեն և սկսեց
հաղալ, նա չգիտեր՝ ինչ պատասխանել, իսկ այնտեղ
բազմած Արարիայի բուրժուազիայի հարազատ ներ-
կայացուցիչները պատասխան եյին պահանջում իրենց
տեսաբանից: Յեվ ամեն կողմից հայացքները կենարո-
նացել եյին Արդել **Մեջիտի** վրա:

Արդել **Մեջիտը** պատասխան չեր գտնում. նա դգաց,
վոր կապիտան Բալթազարի հետ այնքան ել հեշտ չի
վիճել: Բայց յեթե չպատասխաներ, այն դեպքում
պետք ե կորցներ իր վարկը:

— Այո, բայց դորա՞նը, կրո՞նը, կրոնական կա-
պիտանը, —ասաց Արդել **Մեջիտը** կմկմալով:

— Ղորանը, աստվածաշունչը, թե ավետարանը,
դրանք ուժեղ գործիքներ են խեղճ և անգիտակից մաս-
սային խորելու, հարբեցնելու և կողոպտելու համար:

ի՞նչ և ասում զբրանը, ի՞նչ և ասում ավետարանը։
Դրանք յերկուսն ել ալլահի կամքով կողոպտում են
մասնային։ Հետեապես շահագործվողի համար մի-
ենու յնն է, ուզում և ավետարանը լինի կամ թե զո-
րանը, —ասաց Բալթազարը։

Արդել Միջիտը լուռ եր. նա այլես պաշտպանվելու
փորձ կատարելու նշաններ չեր ցուցաբերում։ Կախեցին
դրուինները նաև Սահարայի աղնվականության ներկա-
յացուցիչները։

Հյուրերը շարունակում եյին գալ։

Ներս մտավ մի գեղեցիկ յերիտասարդ մետաքսե-
րունուսի մեջ փաթաթված, աղվամազ բեխերով։
փայլուն և գեղեցիկ աչքերով ու բարձր հասակով։ Դա
ել Զեման եր, —նորերս մեռած ցեղապետի անդրանիկ
վորդին։ Նա մոտեցավ «գիտնականին», համբուրեց
նրա ձեռքը և նստեց իր տեղը։

Ել Զեման սպավելով կապիտան Բալթազարի ներ-
կայությունից, չզլացավ հայտնելու իր անհուն սերը
վեպի մայր հայրենիք Ֆրանսիան։ Ել Զեմալը պատ-
րաստվում եր ցեղապետ դառնալու, դրա համար ել նա
տեղի թե անտեղի շարունակ փառաբանում եր իր Փրան-
սիական կառավարությունը։

Ել Զեմալը նոր եր վերջացըել իր խոսքը, յերբ կա-
պիտան Բալթազարին մոտեցավ Սիդի Արդել Փարիմը։
Հարուստ կալվածատիրոջ վորդին և հայտնեց կապի-
տանին, վոր իր աշխատանքն որն ի բուն կայանում ե
նրանում, վոր հետամնաց արարներին բացատրի այն
բարիքները, վոր բերել և իրենց Փրանսիական տիրա-
պետությունը։

Այդ բոլորը նողկալի և ատելի եյին կապիտան
Բալթազարին։ Նա մտածում եր վորևե կերպ վերջ տալ
այդ անհաջող կոմեղիաներին, վոր հանկարծ լավեց մի
մեղմ յերաժշտություն, վորից հետո դահլիճ մտան
վեց պատանի պարողներ։ Նրանք հանելով իրենց գըր-

ովանից մի-մի յերաժշտական գործիք, սկսեցին նվազել
և պարել: Նրանց յերաժշտությանը յերբեմն ընկերակ-
ցում եյին և յերգեր: Հետո՝ յերգելով, նրանք բաժան-
վեցին յերկու խմբի և կանգնեցին դեմ առ դեմ: Նրանց
տարազը նույնն եր, ինչպես ամեն մի արարի, բայց
ուսերին ունեցին յերկար մազեր՝ հյուսած և մեջքի
վրա թափած: Նրանք իրենց նուրբ շարժումներով նման
եյին ավելի աղջիկների, քան տղաների: Դարձյալ յե-
րաժշտությունն սկսեց նվազել: Փոքրիկ պարողներն
սկսեցին մի նոր պար: Նրանք մերթ ընդ մերթ կանգ-
նում եյին պատվավոր հյուրերի առաջ ու պարում ի-
րանները վոլորելով կամ թե նուրբ սրունքներով հա-
տակն հարվածում, հետո կրկին միանում եյին և պարն
ավելի ջղային եր դառնում: Պարելով նրանք մոտենում
եյին զանազան հյուրերի, պառկում եյին նրանց առաջ,
գլուխները զնում ծնկներին, կրկին ցատկում եյին ու
շարունակում: Վերջապես միենույն շարժումները մի
քանի անգամ կրկնելուց հետո, նրանք դուրս դնացին:

Կիչ վեջը կրկին լսվեց յերաժշտության ձայնը.
այս անգամ դահլիճ մտան յերեք ուրիշ պատանիներ,
վորոնք հագնված եյին կանանց պես, զարդարված
դույնվույն ծաղիկներով և ոծված վարդի յուղով: Նրանք կանգնեցին դահլիճի մեջտեղը, իրար նայեցին
և սկսեցին պարել:

Նոր պարողների մուտքն անմիջապես մի ուրախ
ժպիտ առաջացրեց բոլոր հյուրերի գեմքերին: «Առւրը»
Արդել Մեծիտն անմիջապես ուղղվեց և սկսեց մեղմ
կերպով շոյել իր սպիտակ մորուքը. յերիտասարդ Ել
Զեմալը վավաշոտ աչքերը հառած պարողներին, ա-
պուշի դեմք եր ընդունել, իսկ սիդի Բեն Քարիմը վորսի
շան պես հոտոտում եր նրանց քղանցքները: Բալթա-
զարն անմիջապես հասկացավ, վոր դրանց դերն այս-
քան պարելը չե, վորքան կրքերը բորբոքելը: Պարողնե-
րը վերջացնելով պարը, դուրս դնացին: Նրանց յետեկոց

անմիջապես դուրս գնացին զառամյալ Արդել Մեջիտը
և յերիտասարդ Ել Զեմալը:

«Յերեխի նրանք գնացին կուլիսների հետեւ շնոր-
հավորելու պարողների «արտակարգ» տաղանդը», —
մտածեց Բալթաղարը:

Ահմեղը, վորին հանձնված եր յերեկույթի կաղ-
մակերպումը, իր վոսկեթել գանգուրներով կանգնած
դահլիճի մեջտեղը, աջ ու ձախ հրամաններ եր արձա-
կում սպասավորներին: Իրար հետեից դահլիճ եյին
բերում զանազան պատուղներ և ոչարակներ: Արդեն ու-
տելու ծիսակատարությունը վերջացած եր, վոր ներս
մտավ ալեղարդ Արդել Մեջիտ «սուրբը»: Ահմեղն ան-
միջապես նրա առաջ զցեց մի փոքրիկ մետաքսե դորդ,
վորի վրա չոգելով «գիտնականը», սկսեց քավել իր
հանցանքը՝ նամազ անելով: Բերում եյին կերակուրները
մեծ-մեծ ափսեների մեջ և տեղավորում նախորոք դրած
ցածր տարուրետիանների վրա: Աղնվականները բուռ-
նուսները յետ գցեցին և մատներով ուստում եյին յու-
ղոտ կերակուրներն ու մատները լպսում: Յերբ նրանք
արդեն զուրկ եյին մի կտոր անգամ ուտելու բոլոր
հնարավորություններից, այն ժամանակ ծառաները
վերցնում եյին այդ մնացորդները և տանում ստորին
պաշտոնյաններին տալիս: Այնտեղից ել նա գնում եր ա-
վելի հեռուն, դեպի ժողովուրդը, վոր անհամբեր սպա-
սում եր տերերի ավելցուկին, կշտանալու նրանց փըշ-
րանքներով:

Ճաշը վերջացավ. կրկին բերեցին քաղցր սուրճը և
դարձյալ լսվեց մեղմ յերաժշտություն, այս անգամ
ավելի ներդաշնակ, վորից հետո ներս մտան յերեք կի-
սաթուլիս պարուհիներ: Նրանք միեւնույն հասակն ունե-
յին և նուրբ շարժումները: Հաղել եյին միատեսակ
պեսստներ, վորը վոչ արաբական եր և վոչ ել յեվրոպա-
կան, այլ մի խառնուրդ եր, բայց չափազանց նուրբ և
ճաշակով: Նրանց զգեստների լայն թեերը ճոճվում եյին

առէի մեջ, նրանք մերթ ընդ մերթ վեր եյին բարձրացնում
թերը, ցույց տալով իրենց մերկ բազուկները մինչև
ուսերը: Նրանց յերկար ու գեղեցիկ վզերին կապած եր
բարակ սև թափիչե ժապավեն, վորի պատճառով նրանց
տչքերն ավելի սե եյին յերեսում: Նրանք ունեյին խիտ
սև մազեր, խնամքով հյուսված և շարած մեջքի վրա:
Իսկ կրծքները զարդարված եր զույնզգույն արդ ու
զարդերով: Նուրբ վոտքերին վոսկեզոծ ասեղնազործ
թեթև կոշիկներ եյին կրում: Նրանք պարում եյին միա-
սին, և մերթ ընդ մերթ իրենց հայացքները գցում վա-
վաշոտ ազնվականության վրա:

Յեղապետ Բեն Ալիք զեկուցումները և բազմաթիվ
լրտեսների տվյած տեղեկություններն աշխրաթների
ապստամբության մասին հետզհետև ավելի և ավելի
սպառնական եյին դառնում :

Սենեղալի շրջանն արդեն «վտանգված» և զինվո-
րական գրության մեջ եր հայտարարված : Ստույգ տե-
ղեկությունները հազորդում եյին, վոր աշխրաթներում
ուժեղ հակաֆրանսիական ագիտացիա յե գնում : Նույն-
պես պնդում եյին, վոր անգլիական կառավարությունը
մեծ քանակությամբ զենք ե ծախել ապստամբներին :

Կապիտան Բալթազարն անմիջապես մի ընդարձակ
տեղեկագիր կազմեց և շտապ կազով ուղարկեց ընդհա-
նուր հրամանատարին, վորը դանվում եր անապտ-
տում, աշխրաթների մեջ : Աֆլուն ուներ և մի դպրոց,
յերկու ուսուցչուհիներով, վորոնք յեկել եյին Որանից :
Մի յերեկո խիստ ճանձրույթից ստիպված, Բալթա-
զարը, ուսուցչուհիների խնդրանոք, այցելեց նրանց :
Բալթազարի այցելությունը չափազանց հաճելի յեր
նրանց : Յերբ Բալթազարը ներս մտավ, տեսավ նրանց
մոտ մի թուխ որիորդ : Ուսուցչուհին դարձավ կապի-
տանին, ասելով .

— Խնդրեմ ճանութանաք, որիորդ Ալալիա, ցեղա-
պետի աղջիկը :

Բալթազարը սեղմեց արաբուհու թուխ ու նուրբ
ձեռքը, ուղիղ նայելով նրա մեծ, փայլուն ու աչքերին :
Ալալիան շփոթվեց :

Ալալիան իր դաստիարակությունն ստացել եր Ալ-

ժիրում : Խոսում եր և ֆրանսերեն : Քիչ վերջը նրանք տեղավորվեցին թեյի սեղանի շուրջը . Ալալիան դարձ- վում եր կապիտանի դիմացը և Բալթազարը վոչ մի կերպ չեր կարողանում իր աչքերը հեռացնել այդ դրա- վիչ արարուհուց : Բալթազարը հիացած Ալալիայով, իր ուրախությունը հայտնեց, վոր արար կինն արդեն դուրս և գալիս հարեմի պատերից :

Ալալիան մեղմ կերպով ժպտաց : Բալթազարը նը- կատեց Ալալիայի գեղեցիկ, սպիտակ ու մանր ատամ- ները և զգաց, վոր նրա ժպտի մեջ մի վորոշ հեղնանք կար :

— Շատ եմ ցավում, կապիտան, վոր դուք չափա- գանց աննպաստ կարծիք ունեք կանանց մասին, — ավե- լացրեց Ալալիան :

— Ես այդպես բան չասացի, իմ խոսքը վերաբե- րում եր հարեմին :

— Գիտեմ, — պատասխանեց Ալալիան : Յեթե կինը հաշտվում ե իր ստրկական դրության հետ, դրա մի- ակ պատճառը տղամարդկանց բռնակալ ցանկությունն ե :

Բալթազարը չեր լսում, այլ միայն նայում եր Ա- լալիային և հիանում :

Գեղեցիկ եր Ալալիան, բարձրահասակ, սև սաթի մազերով, փայլուն աչքերով, թուխ ու ձվածեւ գեմքով :

Ալալիան այդ նկատեց և շփոթված կախեց գլուխը, բայց Բալթազարը հակառակ իր կամքին, չեր կարո- ղանում հայացքը հեռացնել արարուհուց : Ալալիան ժպտալով բարձրացավ սեղանից :

— Նախապաշարումները չվոտնահարելու համար ստիպված եմ տուն վերադառնալ : Ուրեմն բարի գի- շեր, — ասաց նա և դուրս գնաց :

Գեղեցիկ արարուհու գնալուց հետո Բալթազարը նույնական վեր կացավ :

— Հոգնած եմ, ներեք ինձ, — ասաց Բալթազարը թողնելով ուսուցչուհիներին :

Եերբ Բալթազարը մտավ իր բնակարանը, ուռան

առաջ գտավ Մուսային արարական տարագով, նիհարած, ընկճված և ծերացած։ Նա այնքան եր փոխվել, վոր Բալթաղարը հազիվ կարողացավ նրան ճանաչել։

—Մուսա՞,—բացականչեց Բալթաղարը զարմացած։

—Յես իմ,—պատասխանեց Մուսան, հազիվ լսելի ձայնով։

Բալթաղարը մի առանձին կարեկցությամբ գրկեց Մուսային։

—Մուսա, իմ թանկադին, ինչո՞ւ յես տխուր, ի՞նչ ե պատահել։ Դե պատմիր՝ ի՞նչ ե պատահել քեզ հետ։

Մուսան հազիվ հազ զսպելով իր արցունքները, կարողացավ միայն մի յերկու խոսք թոթովել։

—Դե ներս գնանք, Մուսա,—ասաց Բալթաղարը, առաջ անցնելով և յերբ մտավ սենյակ, յետ նայեց, բայց Մուսան այլեւս չկար։

—Մուսա, Մուսա,—ձայն տալով վազում եր նա պատեղի կարմիր վարդերի ծառուղիով, բայց Մուսան չկար։ Նա անհայտացել եր։

Բալթաղարը կանգնած փողոցի դռան առաջ, ջղային նայում եր աջ ու ձախ, Մուսային գտնելու, բայց իդուր։

Մուսան ամբողջ պատերազմի ընթացքում յեղել եր Բալթաղարի հետ և քանի-քանի անդամ նա փրկել եր Բալթաղարի կյանքն անխուսափելի մահից։ Մեկ անդամ Բալթաղարը վիրավորված ընկած եր փշալարերի մոտ, ամբողջ 18 ժամ մնալով անխնամ։ Վիրավորները հավաքելու վոչ մի հնար չկար։ Մուսան ոռմբերի և գնդակների տարափի տակ փորի վրա սողալով, անցավ ամբողջ ուազմաղաշուը, գտավ Բալթաղարին ու բերեց տռավ ջին գիծ։ Բալթաղարը հիշեց այդ բոլորը և ջերմ դդացմունքով լցվեց դեպի Մուսան։

Տաք գիշեր եր սենյակի պատերը բարկ կներմություն եյին արձակում, անհնար եր քնել։ Հենց առաջին

որն իսկ կապիտան Բալթազարն ազատեց աշխատանքից այն 15 տարեկան արաբ սպասավորներին, վորոնց պարտականությունն եր միայն քնած սպային հով անել, անընդհատ շարժելով այն մեծ հովհարը, վորը ամրացած եր առաստաղից:

Բալթազարը չեր կարողանում մոռանալ իր միակ անկեղծ և անձնվեր բարեկամին՝ Մուսային: Ինչու յեկավ և ինչու գնաց: Բայց ինչո՞ւ նա այնպես տանջված դեմք ուներ: Բալթազարը վորոշեց հետեւյալ որն անպայման դանել Մուսային և իմանալ նրա տիրության պատճառը:

Բալթազարի մաքերը թուան զեալի Մորիսը. նոյերկար մաածում եր նրա մասին և այն յերկտողի մասին, վոր նա ստացել եր Մորիսից Բելաբեսի բորջում: Անդրադարձավ և Եղմոնին, համեմատության մեջ դըրեց այդ յերկուսին և կլանվեց նրանց հանդուզն դործերով: Հետո նա մտքով տեղափոխվեց ուսուցչուհու սենյակը: Ահա լուսամուտի մոտ կանգնած և ցեղազետի աղջիկը՝ Ալալիան, իր բարձր և ճկուն հասակով, թուիւ ու գրավիչ դեմքով:

«Գեղեցիկ ենա», —մտածեց Բալթազարը:

Անցնում եր գիշերը, սակայն Բալթազարը քնել չեց կարողանում, նրա աչքերի առաջ միշտ կանգնած եր Ալալիան իր խորը, սև սաթե աչքերով, վոր քաշում եր գեալի իրեն բոլոր նրանց, ովքեր հանդունություն կունենային տարվելու այդ աչքերի զեղեցկությամբ:

Սպայակույտը «տուրնեյից» ավելի շուտ վերադարձակ:

Ցերեկոյան ճաշը պետք ե մատուցեյին բարձր աշտարակի տանիքի վրա: Ծառաներն ստիպված եյին շարունակ իջնել ու բարձրանալ այդ բազմաթիվ աստիճաններով: Մնթրիրքի ժամանակ հրամանատքարը մի յերեկու խոսքով հայտնեց, վոր դրությունը չափազանց սպառնական ե, վոր հետեւյալ որը պետք ե ուղիղ դժով:

կապվի Արժիր կենորոնական կառավարության հետ:
Սպաները նույնպես մտահոգված եյին և ջղային:

Ընթրիքից հետո հրամանատարն առաջարկեց «բրիճ»
խաղալ և այդ տևեց մինչև կես գիշեր, վորից հետո
ցած իջան և հրամանատարն առաջարկեց շրջել քաղաքը,
սառուղել պոստերը և վերադառնալ: Բոլորը միասին
փողոցի տաք ավազի վրա անձայն շրջում եյին. Բար-
թաղարը նկատեց, վոր զանազան արար կանայք ընկե-
րանում են իրենց և խմբով հետեւում սպաներին:

Պտույտը վերջացել եր, վերադառնում եյին իրենց
ընակարանները: Բարթաղարը զարմացավ՝ նուսնելով,
վոր յուրաքանչյուր սպայի հետ բնակարան եր մտնում
յերկու-յերեք կին: Բոլոր սպաները ցրվել եյին արգեն-
իրենց կանանց հետ. փողոցում մնացել եյին Բարթա-
ղարը և հրամանատարը և յերկու կին: Հրամանատարը
նայելով Բարթաղարին, ասաց.

— Վաղը բոլոր կանայք ամբույսատորիա պետք ե
հավաքվեն. բժկական այլցելության որն ե: Դուք ել
դնացեք և ձեզ համար կանայք ընտրեցեք:

Հրամանատարը բարի գիշեր մաղթելով Բարթաղա-
րին հեռացավ յերկու կանանց հետ: Բարթաղարը մնաց
կանգնած և զարմացած նայում եր հրամանատարին, թե
ինչպես նա գնում եր իր յերկու կանանց հետ:

Ուշ գիշեր եր. Բարթաղարը չափազանց հոգնած եր,
անմիջապես հանվելով, անկողին մտավ:

Հետեւյալ որն առավոտյան ժամը 10-ին ամբուլա-
տորիայի սպասավորը յեկավ կապիտան Բարթաղարի
մոտ և հայտնեց, վոր կանայք հավաքված են, հետեւա-
պես սպասում են իրեն, վոր գնա և իր համար կանայք
ընտրի. Բարթաղարը զարմացավ և խսկույն հիշեց հրա-
մանատարի հրահանգը: Բայց նա կարծում եր, վոր հրա-
մանատարը կատակ է անում, սակայն, ինչպես յերեսում
է, այդ ճիշտ ե:

— Գնացեք և հայտնեցեք, վոր ինձ վոչ մի կին

պետք չե,—ասաց խիստ տոննով Բալաթաղարը, հիվանդանոցի սպասավորին ճանապարհ դնելով:

Ֆրանսիական «բարձրագույն կուրտուրան» իր թերթերը տարածել ե Սահարայի վրա և մավրերին ու քերպերներին տուել իր խնամակալության տակ: «Ասպետական Ֆրանսիան քաղաքակրթություն ե տարածում ծառավների աշխարհում», — մտածեց Բալթաղարը հեղնանքով:

Յերեկոյան Բալթաղարը զբոսնում եր այգում գարնիզոնի բժշկի հետ:

— Ի՞նչ կանայք են դրանք և վո՞րտեղից են յեկել, — հարցրեց Բալթաղարը բժիշկ Գաստոնին:

Գաստոնը Ժպտաց:

— Մեր քաղաքացիներն են:

— Ի՞նչ քաղաքացիներ:

— Յուրաքանչյուր աշխաթ պարտավոր և տարեկան հինգ մատղաշ որիորդ տալու, վորպեսզի քաղաքի հառարակաց տները կարողանան գործ տեսնել, — ասաց Գաստոնը:

— Եեվ քանի՞ հոգի յեն դրանք:

— 70 հոգի շուկայում, իսկ 15 հոգի հիվանդանոցում պառկած, — Ժպտալով պատասխանեց Գաստոնը:

— Ամոթ ե, — զայրացած հանդիմանական տոնով ասաց Բալթաղարը:

— Միայն ամոթ ե... կատարյալ խայտառակություն ե, դեմ ե մարդկային բոլոր որենքներին, — ավելացրեց նույնպես զայրացած Գաստոնը:

— Մենք ստիպում ենք այդ կանանց ծախել իբենց մարմինը և կառավարությանը վճարել այդ առեւտուրի համար, — ավելացրեց Գաստոնը, թողնելով Բալթաղարին մենակ:

Բալթաղարը խույս եր տալիս սպայակույտի սպաների հետ մտերմանալուց: Նա միայն մտերիմ եր յերիտասարդ Գաստոնի հետ:

Բժշկի հեռանալուց հետո Բալթաղարն իր քայլերն
ուղղեց դեպի ուսուցչուհիների բնակարանը։ Ալալիան
այնաեղ եր։ Բալթաղարի տրամադրությունը միանգու-
մայն փոխավեց։ Բալթաղարին թվաց, վոր Ալալիան և ո
դժուհ չեր իր այցելությունից։ Բալթաղարը պատրաստ
եր ամբողջ գիշեր նստելու այնտեղ, յեթե միայն Ալա-
լիան մնար, բայց դժբախտաբար արդեն շատ ուշ եր։
Ալալիայի նաժիշտները յեկան ընկերանալու և տուն
տանելու անապատի իշխանուհուն։

Ալալիայի զնալուց անմիջապես հետո դուրս գնաց
և Բալթաղարը մտախոհ և չափազանց տխուր։ Յերբ նա
անցնում եր սպաների վիլաների առաջից, ուրախ
յերաժշտության ձայն լսեց և մի աննկարգքելի ցանկու-
թյուն արթնացավ նրա մեջ յերաժշտություն լսել, խմել
և զվարճանալ։ Առանց յերկար մտածելու, անմիջապես
մտավ սղաների մոտ։ Սպաները պիտամաններով եյին,
բայց արդեն հարբած ու ընկած եյին մետաքսյա սովոր-
ների վրա։ Բոլոր սպաներն այդտեղ եյին, բացի հրա-
մանատարից և Գաստոնից։ Կանանցից բաղկացած յեռ-
րաժշտախումբը նվազում և յերգում եր վողեորված,
իսկ սղարուհիները, վոր հազիվ եյին վոտքի վրա կանգ-
նած, անմիջապես վազեցին դեպի Բալթաղարը և ուրախ
բացականչություններով գրկեցին ու քաշքաշլով տարան
հստեցրին իրենց մեջ։ Նրանք դադարեցրին պարը և
զբաղված եյին կապիտան Բալթաղարին հյուրասիրե-
լով։ Բալթաղարն արարուհիների ճնշման տակ արդեն
պարագել եր մի քանի գավաթ զանազան գույնի լիկյոր-
ներ։ Սպաները համարյա անզգա դրության մեջ եյին
գտնվում։

Յերաժշտախումբը վերսկսեց իր աղաղակող լարե-
րը հնչեցնել, պարուհիներն սկսեցին իրենց կրքոտ պա-
րերը, իրենց թուխ ու հոգնած աչքերը հառելով դեպի
Բալթաղարը։ Կապիտանն արդեն ուրախ տրամադրու-
թյան մեջ եր. ալկոհոլը քանդել եր նրա լեզվի կապե-

ըը: Նա ուրախանում եր, ծիծաղում, յերգում և իր
դիրկը նետվող պարուհիներին ջերմադին համբուրում:
Ահա մի չափազանց յերիտասարդ՝ պարուհի պարում և
մերկ մարմնով, վոսկեղոծ քողը յերեսին: Պարում և
նա ձկան պարը, ջրի մեջ լողալու բոլոր շարժումներով:
Պարուհին լողալով դանդաղ մոտենում և կապիտանին և
դլուխը դնում Բալթազարի վոսների տակ, ձեռքի մեջ
բաժակը մոտեցնելով կապիտանին: Չիսմել անհնար եր,
իսկ Բալթազարն այդ յերեկո մի արտակարդ ցանկու-
թյուն ուներ հարբելու. նու ուզում՝ եր մի քիչ հեռանալ
Ալալիայից: Նա վորոշել եր փակել, հանդստացնել իր
աչքերը, վորոնք շարունակ վիճակով անտպատի դի-
ցուհուն, արդեն հոգնել եյին: Մի բոպե Բալթազարի
հետղհետե բորբոքվող ուղեղում կրկին արթնացավ
Ալալիայի ճկուն և նուրբ հասակը, մեծ և սև աչքերը,
վորոնք քաշում-տանում եյին գեալի անդունդը բոլոր
նրանց, ովքեր հանդգնություն ունեյին սիրելու այդ
գեղեցիկ աչքերը:

— Լցրու, — բացականչեց հանկարծ Բալթազարը,
շամպայնի գալաթը պարզելով դեպի հարձերը, վորոնք
ամեն բոպե պատրաստ եյին կատարելու կապիտանի բո-
լոր ցանկությունները:

Բալթազարն արդեն կամաց-կամաց մոռանում եր
ամեն ինչ. ձկան պարը պարող պարուհին շամպայնի
գավաթը դողդոջուն ձեռքերով մոտեցրեց նրան: Բալ-
թազարն առավ գավաթը, նայելով պարուհուն:

«Ի՞նչ տարբերություն կա այս պարուհու և Ալա-
լիայի մեջ, յերկուսն ել միենույնն են», — մտածեց կա-
պիտանը և պճպճացող հեղուկը մոտեցրեց շրթունքնե-
րին, բայց այդ բոպեյին կարծես մի նուրբ ու թուխ
ձեռք բռնեց նրա գավաթը: Բալթազարը փակեց աչքերն
ու ձեռքին բռնած գավաթը մնաց ողի մեջ: «Ալալիա,
Ալալիա», — մըմնջաց Բալթազարը և պարպեց շամպայնի
գավաթը:

Բալթազարը հարբած եր... Յերաժշտությունն

Հետզհետե ավելի և ավելի աղմկալից եր դառնում .
նվազողների մատները դավաճանում եյին . ալկոհոլը
թուլացրել եր նրանց ձկուն մատների խաղերը :

Իսկ Բալթաղարը գտնվում եր աքղեն բոլորովին այլ
աշխարհում , նա հանդիսաւ եր , նա վոչինչ չեր տեսնում և
վոչինչ չեր մտածում . . .

Չինվորական յերաժշտության ձայնից արթնացալ
Բալթաղարը : Պահակախումբը զնում եր դաշտ դինա-
վարժության : Բալթաղարն անմիջապես հաղնվելով ,
դուրս յեկալ ուղեկցելու պահակախմբին :

Յերաժշտության ուղեկցությամբ փորձադաշտից
վերադառնում եր պահակախումբը , անցնելով ցեղապետ
Բեն Ալիի տան առաջից : Բալթաղարը բարձրացրեց իր
աչքերը և ահա տեսավ նա բարձր լուսամուտի առաջ
կանգնած Ալալիային : Ալալիան նայեց Բալթաղարին և
Ժպտաց . . .

Յեկավ քարավանը. բերել եյին նաև փոստը: Բալթազարն իր բաղմաթիվ նամակների մեջ գտնում է Ժյուլետայի նամակը: Անմիջապես բացում ե և կարդում.

«...Մորիսն անհայտացել ե, ասում են, վոր մի խումբ հեղափոխական արարներ Մորիսին սպասում եյին նավահանգստում: Յերբ մեր նավը կանգ է առնում և Մորիսը դուրս է գալիս նավից, արարները նրան փախցնում են: Ասում են, վոր նա դանախում է Սահարայում, ապստամբների մեջ և զեկավարում է ապստամբությունը: Կառավարությունը սոսկալի զայրացած է և հրամայել ե անմիջապես գտնել Մորիսին: Չորս ուղղությամբ բանակ են ուղարկել նրան փնտռելու: Հայրս Մորիսի մասին լսել չի ուզում, իսկ յեղբորս հանձնված է Մորիսին գտնելու գժվար գործը: Նա արդեն վաղուց ե անապատ դնացել փնտռելու: Կոստանդնի շրջանը չափազն խառն ե, հեղափոխությունն այնտեղ աճում է, ապստամբները գրավել են քաղաքային տունը և սպանել քաղաքագլխին»...

Ժյուլետայի նամակը խորապես վշտացրեց Բալթազարին: «Այժմ կառավարությունը նրան հանգիստ չի տալ», — մտածեց Բալթազարը:

Յերեկոյան ընթրիքի ժամանակ հրամանատարը խոսեց Մորիսի մասին: Նա ևս պաշտոնական նամակ եր ստացել այդ մասին: Սպաները զայրացած շանթեր եյին արձակում Մորիսի հասցեյին: Գաստոնը մի փոքրիկ

սպաշտպանելու փորձ արեց, բայց հանդիպեց խիստ ընդիմադրության:

Հետեւյալ որը հրամանատարն իր մոտ հրավիրելով ցեղապետ Բեն Ալիին, պատվիրեց լրտեսների միջոցով վորեւ տեղեկություն ստանալ Մորիսի մասին:

Յեկավ սուրհանդակը. հրամանատարն ամբողջ որը մտախոհ երև և ջղային: Նա անմիջապես սպաներին հավաքեց և հայտնեց, վոր պատերազմից վերադարձով զինվորները մեծ յեռանդով առաջ են տանում ապստամբության գաղափարը և շատ ուժեղ կերպով զինվում են:

— Դժբախտությունը նրանում եւ, — ավելացրեց հրամանատարը, — վոր ապստամբությունը պատրաստվում է ցեղապետների և կրօնավորների գլխի վրայով: Ոմարին զիմել են գանազան մարարուներ, վոր իրենք ել մասնակցեն ապստամբության և կրօնական պատերազմ հայտարարեն քրիստոնյաների դեմ: Բայց պարագլուխները մերժել են այդ, և ինչպես ասում են, մի հայտնի կրօնապետի յել գիշերով սպանել են: Հետեւապես վտանգն ավելի լուրջ եւ:

Իրար յետեկից սուրհանդակներ եյին գալիս Սահարայի բոլոր մասերից: Յեկ վորքան շատ եյին գալիս սուրհանդակները, այնքան ավելի և ավելի յեր ջղային դառնում սպայակույտը:

Հրամանատարը պատրաստեց մի մանրամասն տեղեկագիր, մասնավոր սուրհանդակով Ալֆիր ուղարկելու համար: Նույն որը սուրհանդակը մեկնեց:

Բայց հրամանատարը հանգիստ չեք: Բորջի դուռանն այդ որերին սպասում եյին հարյուրավոր այցելուներ, վոր գալիս եյին անապատի բոլոր ծայրերից: Դրանց հետ եյին բազմաթիվ ցեղապետներ իրենց կարմիր բուռնումներով: Հրամանատարը հատուկ սիրավիրություն եր ցույց տալիս ցեղապետներին: Մեկին կաշառում եր դրամով, մյուսին պատվանշան եր տալիս, յերբորդին զիջում եր հարկերը և այլն:

Ովաղիսի հյուսիսային մասում վրաններ և խփել
բեն Հուսի աշխրաթը. այդ աշխրաթում համաշխար-
հային պատերազմի մասնակցած շատ զինվորներ կային:
Այդ աշխրաթը համարվում եր րմբոստ, հեղափոխական,
կամ ինչպես հրամանատարն եր՝ ասում՝ «վարակված»:
Լրտեսներն այդ հաստատում եյին, իսկ ցեղապետ Բեն
Ալին, վոր պապենական վրեժինդրություն ուներ ցեղա-
պետ Բեն Հուսի հետ, միշտ հիշեցնում եր հրամանա-
տարին Բեն Հուսի աշխրաթի դեմ ուժեղ միջոցներ ձեռք
առնելու անհրաժեշտությունը:

Կապիտան Բալթաղարը հրամանատարի մոտ եր
գտնվում. հրամանատարը վերջապես վորոշեց վոչքն-
չացնել այդ աշխրաթը, այդ «նուրբ» գործը հանձնարա-
րելով ցեղապետ Բեն Ալին:

Կապիտան Բալթաղարը դուրս յեկալ հրամանատարի
առանձնասենյալից և վերադարձավ իր բնակարանը:
Անմիջապես պահանջեց մի բաժակ սառը ջուր, վառեց
ծխամորճը և ընկալ կարմիր-վարդագույն մետաքսէ:
սոֆայի վրա ու սկսեց մտածել: Նա տեսնում եր արգեն
600 աշխրաթը տմարդաբար սրի անցած, նույնիսկ
առանց խնայելու ծերերին, կանանց և յերեխաներին:
Նա արդեն պատկերացնում եր անգույն ավաղի վրա
անմեղների արյունից կազմված լճեր:

«Կոչ, յես թույլ չպիտի տամ», —մտածեց Բալթա-
ղարը վոտքի կանգնելով: —«Բայց ինչպե՞ս, ի՞նչ կարող
եմ անել: Վիճե՞լ հրամանատարի հետ: Աշխատել համո-
զել, վոր նա փոխի իր վորոշումը: Դա անհնար ե: Թող-
նել վոր անմեղ մարդկանց կոտորեն, այդ ել ստորու-
թյուն կլինի»: Բալթաղարը կըկին ընկալ սոֆայի վրա
և իր փոթորկված մտքերով սլացավ դեպի Մորիսը:

Հիշեց նրա անողոք հանդիմանությունները, հիշեց
թե ինչպես եր ըմբռնում Մորիսը հայրենիք բառի ի-
մաստը և վերջապես հիշեց, վոր նա խոսք ե տվել Եղ-
մոնին և Մորիսին լինել նրանց հետ և նրանց գործը հա-
մարել իր գործը: Միանգամ ևս Բալթաղարը վերհիշեց

իր թշվառ մանկությունը, իր աղքատ, և հարուստների դպներն ու լուսամուտները լվացող մորը։ Նրան թշվաց, զոր մայրն իր հիվանդոտ աչքերը հառել և դեպի իրենց հարուստ հարեւանը, վոր խրախճանքի մեջ եյին շարունակ, իսկ ինքն իր մեռած դավակի համար դադաղ գնելու միջոցից անդամ գուրիկ եր։

Կրկին վեր ցատկեց տեղից Բալթաղարը, առավ գլխարկը և դուրս յեկավ։

Յերբ Բալթաղարն անցնում եր մզկիթի առաջից, նա հանդիպեց Ալալիային, վոր իր նաժիշտներով և ուսուցչուհիների հետ գնում եր դպրոց։ Ալալիան սիրալիր ժպտալով բարեկց կապիտան Բալթաղարին։ Կապիտանը շփոթված, դինվորական բարեւ տվեց և անցավ։ Բալթաղարն այդ բոպեյին մոռացել եր ամեն ինչ, նույնիսկ գեղեցիկ իշխանություն։ Նա վնտուում եր Մուսային, իր միակ հավատարիմ և սիրելի բարեկամին, իր աղնիվ ընկերոջը։

Ուսուցչիները վաղուց նկատել եյին, վոր Ալալիան վերջերս ավելի կենսուրախ եւ չատ հաճախ և այցելում իրենց։ Պարզ եր նրանց համար, վոր Ալալիան անտարբեր չեր դեպի Բալթաղարը, բայց այդ մասին նրանք յերբեք չեյին խոսում։

Բալթաղարը հուսահատված եր. Մուսան չկար ու չկար։ Ի՞նչ անել, ո՞ւմ ոզնությանը դիմել, ի՞նչպես խանդարել այդ զազրելի կոտորածը…

Ուշ դիշեր եր, ովագիսր խոր քնի մեջ եր. մերթ ընդ մերթ հեռվից լսվում եյին միայն դիշերապահների սուլոցները և սպաների բնակարաններում նվազող արաբական մելամաղձոտ յերաժշտության ձայները։

Բալթաղարը քնել չեր կարողանում։ Նրա մտքերն ալեկոծված եյին և նա միջոց եր վնտուում աղատելու բեն Հուսի աշխրաթը կոտորածից։

Հանկարծ ներս յեկավ Բալթաղարի սպասավորը։ Բալթաղարը զարմացած նայում եր սպասավորին հարցական հայացքով։

— Սիդի կապիտան, մի արար ուղում և ձեզ տես-
նել, յեկել և հեռու տեղից:

— Թող ներս գա, —ասաց Բալթազարը:

Մի բոպե չանցած, Բալթազարի առաջ կանգնած եր
մի կարճլիկ արար, մոխրագույն բուռնուսի մեջ փա-
թաթված: Բալթազարը հիշեց անմիջապես Բելարեսի
բորջում Մորիսից նամակ բերող սուրհանդակին: Արա-
րը շուրջը նայելով, չափազանց դանդաղ կերպով զանա-
զան ծալքերի միջից հանեց մի նամակ և տվեց Բալթա-
զարին: Բալթազարն առավ նամակը, փակեց դռները և
սկսեց կարդալ: Միայն յերկու առղ եր գրված, Մորիսի
և Եղմոնի ստորագրությամբ: «Համաձա՞յն ես մեզ ող-
նելու և մեզ հետ կապ պահպանելու համար»:

Առանց ժամանակ կորցնելու, գրեց.

«Համաձայն եմ: Հայտնում եմ, վոր հրամանատարը
հրահանգ ե տվել ցեղապետ Բեն Ալիին վոչչացնելու
Բեն Հուսի աշխրաթը: Զեռք առեք բոլոր միջոցները,
վոր այդ կոտորածը տեղի չունենա»:

Բալթազար.

Փակեց նամակը և հանձնեց սուրհանդակին:

— Վորտե՞ղ են Մորիսը և Եղմոնը:

— Ման հարֆ (չգիտեմ):

— Քանի՞ որում դու այս նամակը նրանց կտաս:

— Ման հարֆ:

— Յե՞րբ պիտի դնաս:

— Ման հարֆ:

Բալթազարը հասկացավ, վոր անհնար ե հավատա-
րիմ և գիտակից հեղափոխականից վորեւ գաղտնիք
իմանսոլ:

— Դե գնա:

— Սլամ, —ասաց սուրհանդակը և անհայտացավ:

Խորհրդավոր սուրհանդակի գնալուց հետո Բալթա-

դարը խորը շունչ քաշեց, արդեն հանգիստ հանվեց ու
անմիջապես փակեց աչքերը:

Ավաղիսի շուրջը խրամատներ եր փորվում և ամ-
րացվում փշալարերով: Բալթազարը մի որ գնացել եր
աշխատանքները դիտելու: Նա անսպասելի կերպով ովա-
դիսի հեռավոր անկյունում հանդիպեց Մուսային, պառ-
կած մի ծառի տակ, հաղիվ հազ չնչելիս:

Բալթազարի գլուխը պտտվեց, վաղեց դեպի Մու-
սան և ամուր գըկեց ու կըծքին սեղմեց: Մուսան հագել
եր պատառութած մի բուռնուս, կեղառոտ և չվացված:

— Մուսա, ի՞նչ ե պատահել քեզ:

— Հիվանդ եմ, — հաղիվ լսելի ճայնով պատասխա-
նեց Մուսան, թաղցնելով իր հոգնած և թաց աչքերը:

Առանց ժամանակ կորցնելու, չորս դինվորների ող-
նությամբ, Բալթազարն անմիջապես Մուսային հիվան-
դանոց ուղարկեց:

Խրամատները մանրամասն քննելուց հետո Բալթա-
զարը վերադարձավ: Յերբ նա անցնում եր մզկիթի հրա-
պարակով, մտալ հիվանդանոց Մուսային տեսնելու և
բժշկից հարցնելու Մուսայի առողջության մասին:

«Այցելության» որ եր, բազմաթիվ կանայք,
դույնդգույն հաղուստներով, հավաքված եյին հիվանդա-
նոցի բակը և սպասում եյին իրենց հերթին, քննվելու և
դեղին տոմս ստանալու համար, վորակեսզի իրավունք
ունենան շուկայում ծախսել իրենց մարմինը և լցնել պե-
տական գանձարանը: Այդ գժբախտները հսկայական յե-
կամուտի աղբյուր են Փրանսիական բուրժուազիայի հա-
մար. նրանց վրա դրված եր և ուրիշ շատ ավելի «կարե-
վոր» պարտականություններ:

Ամիսը յերկու անգամ աշխարթները հավաքվում են
ովագիս, առևտրի համար: Նրանք բերում եյին այդտեղ
վաճառելու իրենց փոքրաքանակ անառունները: Խրան-
սիական դրամատերերը միջոցներ եյին ստեղծել նրան-
ցից խլելու այն չնչին Փրանկները, վոր ձեռք եյին բե-
րում նրանք բրդի, մորթու և այլ իրերի վաճառումից:

Անհրաժեշտ եր առևտորի յեկող արարների համար նախ ստեղծել ուրախ միջավայր, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան ուտելու, խմելու և զվարճանալու։ Յեվ այդ պարտականությունները դրված եր այդ դժբախտ կանանց վրա։ Նրանք պարտավոր եյին իրենց մոտ հյուրընկալել բաղմաթիվ արարների և նրանց համար ստեղծել զվարճության անհրաժեշտ բոլոր միջոցները։ Յեվ ինչ վոր եյական եր, նրանք պետք եւ խմեցնեյին արարներին, վորպեսի սպառեյին Ալժիրի և Հարավային Ֆրանսիայի դինիները։ Հասուկ տեսուչներ կային նշանակված, վորոնք խիստ կերպով հետևում եյին այդ կանանց և ստուգում, թե ինչպես են նրանք կատարում Փրանսիական բանկիքների հրամանները։ Յեվ այդ որերին ամբողջ ովազիսի փողոցներում կարելի յեր հանդիպել հարյուրավոր կանանց և տղամարդկանց հարրած, կողոպտված և անզգա ընկած տաք ավաղի վրա։

Գաստոնը դիմավորեց Բալթազարին չափազանց ջղային դեմքով։

— Զբաղված ես, Գաստոն, — հարցրեց Բալթազարը։

— Զախազանց, — պատասխանեց Գաստոնը, ավելացնելով, — քաղաքակալթում ենք արարներին։ Ժողովուրդն արմավ և գինի ունի, բավական եւ, ել ի՞նչ է հարկավոր սրանց։ Կանա՞յք, եհ, ինչքան ուզես։ Յեվ ո՞վ կհանդինի ասելու, վոր ասպետական ֆրանսիայի դաղութներում ժողովուրդն արյուն և արցունք եւ թափում։ Սուտ ե, չհավատաս։ Շնորհիվ մեր գինեվաճառների, կյանքը չափազանց «ուրախ ե»։

— Գաստոն, դու այսոր լավ տրամադրության մեջ չես։

— Սխալվում ես Բալթազար, տրամադրությունս հիանալի յե։

— Դու միշտ հեղնում ես, —ասաց կապիտանը
ժպտալով:

— Տարորինակ ես, Բալթազար: Միթե՞ յես եմ
հեղնում: Վոչ, սիրելիս, հեղնողն այն դրոշակն ե, վոր
ծածանվում ե այս հիմնարկության վրա: Փա՞ստ ես
ուզում: Ուրախությամբ: Յեկ ինձ հետ, —ասաց Գաս-
տոնը Բալթազարին առաջնորդելով: Դեպի մի նկուղ:
Բացում ե նկուղի գուռը և ցույց տալիս չորս դիակ:

— Ես այս դիակները: Սրանք մեր քաղաքակրթու-
թյան կենդանի պատկերն են, «անձի անձեռնամխելիու-
թյան» ցցուն արձաններն են: Սրանք խրոնիկ հիվանդներ
եյին, պառկած հիվանդանոցում: Յերեկ իմ բացակայու-
թյան ժամանակ հրամանատարն հրամայել ե արար հի-
վանդապահին թունավորել սրանց, վոր մեր բուրժուա-
զիայի վրա բեռ չղառնան և հիմա սպասում են դիշեր-
վա խավարին, վոր տանեն և գաղտնի թաղեն, —ասաց
Գաստոնը, ամուր խփելով մեռելատան դուռը:

Ֆրանսիական որենքների համաձայն, զինվորական
բժիշկները շատ մեծ հարգանք եյին վայելում և առհա-
սարակ նրանք ավելի ազատ եյին և չեյին կաշկանդված
դինվորական դիսցիպլինայի շղթաներով: Ինչ վոր ներելի
յեր բժիշկներին, այդ աններելի յեր սպաներին: Գաս-
տոնը յերբեք չեր ծածկում իր մտքերը և նա խոսում եր
չափազանց ազատ և խիստ կերպով, բոլորի ներկայու-
թյամբ քննադատում եր կառավարությանն ու որենք-
ները: Սպաները խույս եյին տալիս այդպիսի վիճաբա-
նությունների մասնակցելուց: Գաստոնը յերիտասարդ
բժիշկ եր, ամուր կազմվածքով և համակրելի դիմագծե-
րով: Իր գեղեցիկ համազդեստով շատ ել չեր հետաքրր-
քըրվում: Յեկ ամբողջ անապատի արարների միակ սի-
րելին եր. նա նրանց պատմական թուքիրն*) եր. ամեն
որ, ամեն ժամ կարելի յեր թուքիրի տունը գնալ: Նա
արձակել եր զինված պահակներին, դռնապաններին և

*) Թուքիր արաբերեն նշանակում ե բժիշկ:

առհասարակ նա ատում եր այն բարդ կյանքը, վոր պարտադիր եր յուրաքանչյուր սպայի համար։ Հրամանատարը փորձեց մի քանի անգամ Գաստոնին հիշեցնելու գաղութային զինվորական որենսդրությունը, բայց իզուրը Գաստոնը շարունակում եր ապրել այնպես, ինչպես հաճելի յեր իրեն։

Գաստոնն ընդհանուր կայազորի բժշկապետ եր, ուներ բազմաթիվ սղնականներ. նա պարտավոր չեր անմիջապես շփում ունենալ արարների հետ։ Բայց նու ամեն տեղ եր և շարունակ արբաների մեջ։ Հրամանատարը և սպայակույտը շատ ելին սիրում թուրիրին և շատ ել հարգում, բայց դա պատճառ չեր, վոր թուրիրը նրանց ներկայությամբ չքննադատի իրենց անողոք որենքները։

Մի քանի որ Մուսան հիվանդանոցում մնալուց հետո, թողել եր հիվանդանոցն առանց հրամանի։

Սպայակույտը չափազանց անհանդիստ եր, իսկ Հրամանատարը կատաղած գաղանի պես առաջ ու յետ եր քայլում բերդի չորրորդ բակում, բեխերը կրծոտելով:

Ալժիր ուղարկած սուրհանդակը, վորի միջոցով ուղարկված եր ընդարձակ, կարեոր ու գաղտնի տեղեկադիք ապատամբության մասին, ճանպարհին սպանված եր և կողպատված:

Թշնամին արդեն մոտենում ե մեր պարիսպներին և Հարձակողականի յե դիմում, —ասաց Հրամանատարը, նստելով սեղանի առաջ: Անհրաժեշտ ե ուղիղ գծով կապվել Ալժիրի կենտրոնական կառավարության հետ: Բայց այդ չի հաջողվում, վորովհետեւ ապարատը փչացած ե: Հարկավոր եր նոր սուրհանդակ ուղարկել մեծ պահակով:

Յերեկոյան Բալթաղարն այցելեց ուսուցչուհիներին: Մի քանի որ կար, վոր Բալթաղարն Ալալիային չեր տեսել, ուստի չափազանց անհանդիստ եր և ջղային: Ալալիան նույնպես ջղային եր: Բալթաղարը և արաբական իշխանուհին շատ յերկար խոսեցին, մանավանդ, վոր ուսուցչուհիները տնից բացակա եյին: Նրանք միայն շատ ուշ տուն վերադարձան: Ուշ եր արդեն, յերբ Ալալիան վերադարձավ իր հոր ապարանքը, իսկ Բալթաղարն իր բնակարանը: Բալթաղարը նստած կարդում եր մայրաքաղաքի թերթերը, յերբ սպասավորը ներս մտավ և հայտնեց, վոր Մուսան բանտարկված ե:

—Մուսան ձերբակալված ե, —բացականչեց Բալթաղարը, տեղից վեր ցատկելով: —Իսկ ինչո՞ւ:

Սպասավորը կմկմաց և չկարողացավ բավարարել
Բալթազարի հետաքրքրությանը:

— Դե շուտ գնա և այստեղ կանչիր քաղաքի վոստի-
կանապետին, — Հրամայեց Բալթազարը:

Սպասավորը գնաց վոստիկանապետին կանչելու,
իսկ Բալթազարը, վիրավոր գաղանի աղես մռնչալով,
պտտում եր սենյակում:

Շատ չանցած, վոստիկանապետը յերկաթապաս-
դավագանը ձեռքին, կասրույտ բուռնուսը ուսերին,
կանզնած եր Բալթազարի առաջ:

— Քեզ ո՞վ ե իրավունք տվել ձերբակալելու Մուսա-
յին, — Հարցը զայրացած Բալթազարը:

— Ցեղապետ Բեն Ալին, — ասաց վոստիկանապետը,
դինվորական դիրք ընդունելով:

— Ցեղապետ Բեն Ալին, — Հարցը զարմացած Բալ-
թազարը:

— Այս, իմ կապիտան, — պատասխանեց վոստիկա-
նապետը:

— Դնա և ցեղապետին անմիջապես ինձ մոտ ուղար-
կիր:

— Լսում եմ, իմ կապիտան, — պատասխանեց վոստի-
կանապետը և զինվորական բարեն տալով, դուրս յեկավ:

Ցեղապետ Բեն Ալին ինչպես ասացինք, քաղաքի կա-
րիդն եր և ընդհանուր Հրամանատարի լրտեսն ու հլու կա-
մակատարը: Բալթազարն ատելով ատում եր ցեղապետին
և ցեղապետն առհասարակ չափազանց զգուշ եր կապի-
տան Բալթազարի հետ ու աշխատում եր վորեն առիթ
չստեղծել ընդհարվելու: Բալթազարը մի քանի անդամ
խոսել եր Հրամանատարի հետ Բեն Ալիի անդժության,
կաշառակերության և այլ բացասական կողմերի մասին:
Հրամանատարը միշտ ել պատասխանել եր, վոր ինքը
շատ լավ գիտե, թե ինչպիսի հրեշ ե ցեղապետ Բեն Ալին,
բայց միակ մարդն ե, վորի միջոցով մենք հնարավորու-
թյուն ունենք ամեն ինչ անելու: Բեն Ալին մի այնպիսի
դաղան ե, վոր դրամի համար մինչև անդամ Մահմեդի

գերեզմանը տակն ու վրա կաբող և անել. իսկ մեզ համար չափառ չափազանց անհրաժեշտ են այդպիսի մըիկաները:

Մի ժամ կլիներ, վոր վաստիկանապետը գնացել եր կտնչելու ցեղապետին, բայց դեռ չեր յեկել: Բալթազարն այնքան զայրացած եր Մուսայի ձերբակալության առթիվ, վոր ել չկարողացավ սպասել և ինքն անմիջապես դուրս գնաց ցեղապետին տեսնելու համար:

Ցեղապետին չգտնելով, Բալթազարը հրամայեց պահակին անմիջապես դնալ բանու և Մուսային իր մոտ բերել:

Շատ չանցած, Մուսան յեկավ Բալթազարի մոտ պահակի ուղեկցությամբ: Մուսայի գեմքի վրա պարզ յերեսմ ելին ծեծի հետքերը:

— Ո՞վ ե քեզ ծեծել, — զայրացած գոչեց Բալթազարը:

Մուսան ճիգ գործ գրեց պատասխանելու, սակայն ուշաթափ գետին ընկավ:

Բալթազարն սպասավորների ոգնությամբ Մուսային տեղափոխեց իր սենյակը և պառկեցրեց անկողնում: Դանդաղ չնչում եր Մուսան սաստիկ ցավերից, իսկ Բալթազարը նայում եր նրան ու հիշում, թե ինչպես կրիվ ժամանակ իր վաշտը գրոհի յեր դուրս էալիս և ինչպես Մուսան անմիջապես սողում եր առաջ ու պառկում Բալթազարի դիմացը, վորպեսզի գնդակներն իրեն կպչեն և վոչ Բալթազարին:

— Դու ինձ համար կենդանի վահան ես յեղել, իմ աննման Մուսա, — ասաց Բալթազարը և հուզված կռապավ մահճակալի վրա ու համբուրեց Մուսայի պաղ ճակարը:

Մուսան տանջվում եր և զառանցում, դա ավելի յեր ջղայնացնում Բալթազարին:

— Պետք ե տեսնեմ ցեղապետին և բացատրություն պահանջեմ, ի՞նչպես ե համարձակվում այդ հրեշն այսպես վարվելու Մուսայի հետ, — վորոշեց Բալթազարը և դուրս յեկավ:

Ուշ դիշեր եր: Սահարայի յերկնակամարի վրա
աստղերը վառվում եյին մի արտակարգ փայլով:

Նոր եր Բալթազարը մեծ հրավարակն անցել, յերբ
իր ականջին հասավ մի սոսկալի աղմուկ: Նու անմիջա-
պես իր քայլերն ուղղեց գեղի աղմուկի վայրը, ուր նու-
տեսավ ցեղապետ Բեն Ալիին, շրջապատված վոստիկան-
ներով, վորոնք փայտի հարվածների տակ ջախջախում
եյին մի արար յերիտասարդի:

—Կանգ առեք, —գոչեց Բալթազարը:

Վոստիկանները սարսափահար յետ կանգնեցին:
Մեջտեղ կանգնած եր ցեղապետը, կարմիր ծիրանին
դցած:

—Ինչո՞ւ յեք ծեծում սրան, —հարցրեց Բալթազարը
վոստիկանապետին: Այդ ժամանակ ցեղապետը յերկու
քայլ տրեց գեղի կապիտանը և տսաց.

—Յես ինքս եմ հրամայել:

Բալթազարը կատաղեց. մի ըստե մտածեց խլել վոս-
տիկանի ձեռքի գավազանը և ջախջախել ցեղապետի գլու-
խը, բայց այդ իսկ ըստեյին կարծես Բալթազարի ձեռ-
քերը թուլացան և նրա աչքերի առաջ յերեաց Ալայիան
իր գեղեցիկ հասակով: Բալթազարը կախեց գլուխը: Ա-
վազի մեջ թափալվում եր մի կիսամեռ յերիտասարդ:
Նրա մարմնի զանազան մասերից հոսում եր բաց-կարմիր
արյունը. նու շարժվելու վոչ մի ուժ չուներ, յերեսի վրա
ընկած եր ավազի մեջ, ինչպես մի մսակույտ:

—Անմիջապես հիվանդանոց փոխադրեք այս յերի-
տասարդին, —ասաց Բալթազարը, զայրույթից շրթունք-
ները կրծելով:

Գլխիկոր ու հուզված տուն վերադարձավ Բալթա-
զարը, կամաց մոտեցավ Մուսայի մահճակալին: Քնած
եր Մուսան և չնչում եր գանդաղ:

Կանգնեց Բալթազարը Մուսայի գլխավերել և սկսեց
յերկար ու յերկար նայել այդ ազնիվ մարդու տանջված
դեմքին և հիշեց փողոցի ավազի մեջ թափալող և արյու-
նաքամ արար յերիտասարդին վոստիկանների վոտքերի

առակ ընկած, իսկ դիմացը կանգնած ցեղապետը, կար-
ժիր ծիրանին տաերին:

Բալթազարը, զայրացած անցավ իր առանձնասե-
նյակը, վառեց մի ծխախոտ, մոտեցավ լուսամուտին և
սկսեց գիտել ցեղապետ Բեն Ալիի ամրոցը, վոր գտնվում
էր մզկիթի կողքին:

Բալթազարին թվաց, վոր այդտեղ ապրողն Ալալիան
և և վոչ թե այն հրեշը: Յեվ մի բոպե այդ բռնակալի
վորջը զառավ այնքան քաղցր, այնքան սիրելի Բալթա-
զարի համար, վոր նա մնաց հենված լուսամուտի բաց
մեզկին, գիտելով ցեղապետի ամրոցը:

Վորքան ժամանակ եր, վոր Բալթազարն իր հայացքը
հառած գիտում եր մզկիթի կողքին ընկած մեծ դղյակը,
չեր հիշում, միայն նա սթափվեց, յերբ իր սենյակի դու-
ռը բացվեց և ներս մտավ սպասավորը: Բալթազարը հե-
ռացավ լուսամուտից և մոտեցավ սպասավորին:

—Ի՞նչ ես ուզում:

—Յես յեկել եմ իմ կապիտանին առելու, վոր...

Սպասավորը կանգ առավ:

—Դե շարունակիր:

—Կապիտան, դուք գիտեք ինչո՞ւ յե հիվանդ Մու-
սան կամ ինչո՞ւ յեն նրան ծեծել:

—Յես վոչինչ չգիտեմ, դե ասա տեսնեմ:

—Կապիտան, տասը տարի սրանից առաջ Մուսային
տարսն զինվորական ծառայության, այդ ժամանակ Մու-
սան ուներ կին և յերկու փոքր աղջիկ: Մուսայի բացա-
կայության ժամանակ ցեղապետ Բեն Ալին հրապուրվում
է Մուսայի գեղեցիկ աղջիկներով և բռնի իրեն հարճ և
դարձնում նրանց, իսկ Մուսայի կնոջը տալիս ե մարա-
րույին: Ցեղապետը Մուսայի աղջիկների յերիտասար-
դությունը վայելելուց հետո, ստիպում ե, վոր նրանք
հասարակաց տուն գնան: Մուսան վերադառնալով տասը
տարի բացակայությունից հետո, վոչ կնոջն ե գտնում
և վոչ ել զավտկներին: Այդ անտանելի վշտից Մուսան
կարծես խելքը կորցրեց: Իսկ անցյալ շարաթ Թունիսից

Դինվորական ծառայությունից վերադարձավ Մուսայի փոքր աղջկա նշանածը : Յեվ յերբ նա խմացավ ցեղապետի զազքելի արարքը, հարձակվեց ցեղապետի վրա, վոր խեղջի : Յեղապետը հրամայեց փայտերի տակ ջախճախել նրա վոսկըները, ինչ վոր դուք տեսաք ինքներդ և այն յերիտասարդին ուղարկեցիք հիվանդանոց :

— Լավ, ինձ մենակ թող, — ասաց զայրացած Բալթազարը : Սպասավորը գնաց : Սենյակի մեջտեղ կանգնած մնաց Բալթազարը, շուրջը դիտելով : Կամաց մոտեցավ այն սենյակի դռան, ուր ծանր շնչառությամբ պատկած եր Մուսան, վոր տասը տարի շարունակ կապիտալիստական իրավակարգի համար զոհել եր իր կյանքը, զոհել և կնոջն ու զավակներին, և հիմա մահվան անկողնում իր հոգեվարքն եր ապրում : Ահա այն վարձատրությունը, վոր նա ստացավ իր տերերից :

Կատաղեց հանկարծ Բալթազարը :

— Բեն Ալի, յես քո գանգը կջախջախեմ և քո Շըշային ուղեղը շների կերակուր կդարձնեմ, — բացականչեց նա :

Բայց ամեն անգամ, յերբ Բալթազարն ուզում է շվճուական քայլ անել ցեղապետ Բեն Ալիի հանգեստ, նրաւ տչքերի առաջ ցցվում եր Սահարայի իշխանուհին իր սկ, գեղեցիկ, բայց մելամաղձուտ աչքերով : «Դրանք աչքեր չեն, — մտածում եր Բալթազարը, — այլ սեպածե ժայռերով շրջապատված մի խորը անդունդ, վոր նայողին քաշում, տանում ե դեպի անդունդի յեղը և այնտեղից ոլխիվայր գլորում ե ցած, սրածայր ժայռերի գիրկը : Այստեղ տնքալով պառկած ե իմ թանգագին Մուսան, իսկ այնուեղ, մզկիթի կողքին ապրում ե Ալալիան հանգիստ և անվրդովի» :

Հանկարծ Մուսան ծանր հառաջեց : Բալթազարն սթափվեց և վազեց Մուսայի սենյակը : Մուսան խեղջվում եր : Բալթազարն սպասավորների ուղնությամբ կարողացավ հանգստացնել Մուսայի շնչառությունը :

Մուսան կրկին թմրեց և համարյա անզգա, վակեց աչ-
քերը:

Բալթաղարը համբ քայլերով թողեց Մուսայի ննջա-
րանը և վերաղարձավ կրկին իր առանձնասենյակը: Վա-
ռեց ծխախոտը և մոտեցավ լուսամուտին: Կրկին նրա
հայացքը դրավեց մզկիթի մոտ կառուցված ամրոցը:
Մակայն անմիջապես հեռացավ լուսամուտից:

—Ի՞նչ և պատահել ինձ հետ,—ասաց զայրացած
Բալթաղարն ինքն իրեն, հոգնած աչքերը շփելով: Մի-
թե յես մի արար աղջկա համար պետք է զոհեմ իմ սկըզ-
բանքները և նույնիսկ Մուսային, վորին իմ ամբողջ
կյանքն եմ պարտական: Վոչ, վոչ,—ասաց նա վճռա-
կան կերպով:

Բայց դա Բալթաղարի պաղ տրամաբանությունն եր,
իսկ նրա սիրտը բոլորովին այլ կերպ եր սախլում մտա-
ծել: Ահա դարձյալ Ալալիան մեղմ ժպիտով և փոքրիկ
ու սպիտակ ատամներով, կարծես հարվում ե Սահարայի
արեի տակ:

Կրկին լսվեց Մուսայի խեղղվող ձայնը, կրկին Բալ-
թաղարը վաղեց Մուսայի սենյակը: Քնքությամբ գըր-
կեց Մուսայի հոգնած գլուխը, բարձրացընեց, վոր նա կա-
րողանա ազատ շնչել: Կաթիլներ խմեցընեց, և յերբ Մու-
սայի շնչառությունը վերականգնվել եր, կամաց նրա գը-
րուխը դրեց բարձի վրա, արագ քայլերով մտավ իր ննջա-
րանը, առավ ատրճանակը և դուրս վաղեց:

—Յես ցեղապետին ցույց կտամ,—մտածեց Բալթա-
ղարը, կարմիր վարդերի ծառուղին կտրելով:

Նոր եր պարտեզից դուրս յեկել Բալթաղարը և
բնդունել մզկիթի հրապարակի ուղղությունը, յերբ պտ-
տահեց գիշերապահներին:

—Վորտե՞ղ ե ցեղապետ Բեն Ալին:

—Սրճարանում, կապիտան,—պատասխանեց պա-
հակապետը, զինվորական բարե տալով: Բալթաղարն իր
քայլերն ուղղեց գեեղի սրճարանը: Ուժեղ բաղիսեց դու-
ռը: Քիչ վերջը դուրս յեկավ սրճարանապետը և տեսնե-
ցով Բալթաղարին, շփոթվեց:

— Այս կողմից համեցեք, աեր,—ասաց սրճարանապետը հալթազարին առաջնորդելով ուրիշ զոնից:

Բալթազարը մտավ մի սենյակ, վորաեղից նա տեսնում էր սրճարանի ամ բողջ անցուղարձը, բայց իրեն վոչ վոք չեր աեսնում:

Այստեղ եյին ցեղազետ Բեն Ալին և Արգել Մեծիուր՝ անապատի «գիտնականը»: Արգել Մեծիուր պատկած էր, խոկ յերկու յերիտասարդ պարուհիներ հանդիսաց շիռոմ եյին «սուրբի» վոտքերը... Բոլորն ել հարբած եյին և հաղիվ հազ կարողանում եյին ծծել հաշիշի բաց կապույտ ծուխը: Քիչ հեռու կար մի ուրիշ խումբ, վորոնց հետ եյին ել Զեմալը և Արգել Քարիմը: Նրանք դրազգած եյին թղթախաղով: Ցեղապետը հարբած, յերեսի վրա փոված եր գորգերի վրա: Բալթազարը վինաթափ յեղավ և անմիջապես գուրս յեկայի սրճարանից ու անցավ մեծ խճուղու վրա, մի քիչ թարմ ող ծծելու բարդիների ծառուղում:

Տատ ուշ եր. յերկնակամարում պլազմացող աստղերը հետղհետե անհետանում ու անտեսանելի եյին դառնում. լույսը բացվում եր: Մինարեյի գաղաթի կիսալուսինն արշալույսի կարմիր չողերի տակ պսպղում եր: Բարձր աների ճակատները լուսավորվում եյին առավոտյան յերիտասարդ տրեկի լույսով: Լսվեց և մարարույի ձայնը բարձր մինարեյի վրայից: Բալթազարը հետղհետե հեռանում եր քաղաքի կենտրոնից, աննապատակ առաջ քայլելով: Ցեղ յերբ դլուխը բարձրացրեց, արգեն ցեղադետ Բեն Ալիի գուան առաջ եր:

Բալթազարն ակնթարթապես մոռացավ ցեղապետի գաղանային աչքերը, մոռացավ և նույնիսկ Մուսային, վոր տանջվում եր մահվան անկողնում:

«Այդ դիմացի տանը Քիշմիրի շալի և Դամասկոսի վարդապույն մետաքսե անկողնում պատկած և Ալալիան Հերարձակ», —մտածեց Բալթազարը և արագացրեց իր քայլերը: Նա հանկարծ զգաց մի տարորինակ հոգնածություն. այլևս ման գալու վոչ մի ուժ չուներ: Նրան

թվաց, վոր դլուխը պտավում ե, իսկ աչքերի կոպերից կախված ե մի հսկա ծանրություն և աչքերը խփվում են հոկտոսկ իր ցանկության:

Բալթազարը մտավ բարդիների ծառողին, նստեց մի ծառի տակ ու փակեց աչքերը:

Եեր նա բացեց աչքերը, զարմացած նայեց շուրջը և տեսավ, վոր իր յերկու սպասավորները նատել են քիչ հեռվում: Բալթազարը մի բազե շփոթվեց: «Դորտե՞ղ եմ յես», — հարցըց ինքն իրեն, զարմացած շուրջը նայելով: Ծառաները մոռեցան:

- Ի՞նչ եք անում այսաեղ, — հարցըց Բալթազարը:
- Դուք քնած եյիք և մեզ կանչեցին ձեզ հսկելու:
- Ո՞վ կանչեց, — հարցըց Բալթազարը զարմացած:
- Մեզ լուր տվեցին ցեղապետ Բեն Ալիի տնից:

Բալթազարը յետ ուղարկեց ծառաներին և ինքը վառելով ծխախոտը, սկսեց ազահությամբ ծխել թանձը ծուխը:

Բալթազարը կրկին նստեց մեծ քարի վրա, սաղարթախիտ բարդի ծառի տակ, յերը հանկարծ նկատեց Ալլալիային: Նա գալիս եր իր նաժիշտների հետ:

Ալլալիան ուրախ ժպիտը յերեսին դիմավորեց Բալթազարին: Բալթազարը ժպտաց և վոտքի կանգնեց: Ալլալիան մռեցավ կապիտանին:

— Դուք հոգնած եք, պետք ե հանգստանաք, — տօսաց Ալլալիան պսպղուն աչքերը նրա վրա դարձնելով:

— Ո՞վ ասաց, վոր հոգնել եմ, իշխանուհի, — տօսաց Բալթազարը ժպտալով:

— Ես ինքս աեստ: Անզգույշ բաներ եք անում: Դուք այսաեղ եյիք արշալույսը գեռ չբացված, և յես լուր ուղարկեցի ձեր ծառաներին, վոր ձեզ մենակ չթողնեն: Վլտանդավոր ե, պետք ե զգույշ լինել:

— Իսկ դուք վորտե՞ղ եյիք, իշխանուհի, վոր ի՞նչ տեսաք:

- Իմ սենյակում:

— Եեվ տյապես շո՞ւտ եք արթնանում:

— Համարյան գրեթե չեմ քնում:

— Պատճառը:

— Զգիտեմ, —ասաց իշխանուհին իր սե սաթի ոչ-քերը հառելով Բալթազարի վրա:

Այդ բոպեյին նրա աչքերը կարծես ուզում եյին առ-սել՝ դու անդութ ես:

Իշխանուհին բեկովիկ եր իր կանգնած աեղուժ: Բալթազարին թվում եր, վոր նա չեր ուզում այդտեղից հեռանալ:

— Ալալիա . . . —կոչեց խեղղված ձայնով Բալթազարը: Ալալիայի թուխ դեմքը շառադունվեց, աչքերն սկսեցին ավելի պապղալ և կուրծքն արագ բարախել: Նա իր խո-սող դեմքը հառել եր Բալթազարին և լուս դիտում եր նրան: Հանկարծ նա ցնցվեց և ձեռքը տանելով դեպի յե-րեսը, փակեց աչքերն ու դանդաղ քայլերով հեռացավ:

Բալթազարն ակնապիշ նայում եր ու չնշասպառ դի-տում եր Ալալիային, վոր հետզհետե անհայտանում եր ծառերի մեջ. իր նաժիշաներով: Յեվ յերբ Ալալիան այլ յեվս չեր յերեսում, Բալթազարն իր քայլերն ուզուց դեպի տուն: Նա ճանապարհին հանդիպեց Ալալիայի նաժիշտ-ների յերկրորդ խմբին, վոր յերաժշտական գործիքնե-րով գնում եյին դետափը, զվարճացնելու Սահարայի իշխանուհուն:

Բալթազարը նոր եր մանել իր ննջարանը համազգեստ փոխելու, հանկարծ լսեց մի աննկարագրելի վայնասուն:

— Ի՞նչ աղմուկ ե, —հարցընց նա սպասավորից:

— Ճեր իմ, Բեն Կուսկուսի ամբողջ աշխաթը որի յին անցկացրել:

— Ո՞վ:

— Բեն Ալիի ցեղը, —պատասխանեց սպասավորը համարյա արտասպելով:

Բալթազարը շտապեց դեպի ամրոցը:

Բերդի պարիսպների տակ շարված եյին հարյուրա-վոր դիտակներ և վիրավորներ, իսկ բերդի մեծ դարովագի

դուան տուաջ խոնված ելին հարյուրավոր արաբներ, զայրացած, կատաղած և կարմրած տչքերով:

— Արդարություն...—աղաղակում եր վշտահար ամբոխը:

Բալթազարը կանգնած քիչ հեռու, դիտում եր այդ պատկերը: Ահա զիսակների շարքը, իսկ նրա զիմաց՝ վիշտավորների շարքը... Լացող, մղկտացող և մազերը փետող մայրեր, վշտահար հայրեր և ցավից ու վշտից կռացած ծերունիներ, գլխակոր ու տիսուր վորբացած մանուկներ: Յեվ այդ բոլորի զիմաց ցցված եր բերդը, ճակատին մեծ մեծ տառերով գրած՝ «Աղատություն», հավասարություն, յեղբայրություն», իսկ նրա բարձր աշտարակների վրա սոսավյունով ծածանվում եր ֆրանսիական բուրժուազիայի դրոշակը, իր գույներով: Յեվ բերդի գիմաց խմբված սպավոր ամբոխն այդ գույներից, այդ բառերից արդարություն եր սպասում...

Բալթազարը մասավ բերդի խորհրդաբաննը: Սպայակույար ծեռքերը կրծքին դարսած, կանգնած եր պատին հենված: Տիրում եր մեռելային լոռություն: Վոչ վոք չեր Համարձակիվում խոռիլ: Սպանները կարծես ամաչում եյին դլուխները բարձրացնելու: Նրանք այնքան մտազրադ եյին, վոր նույնիսկ չեյին նկատել Բալթազարի զայրացած մուաքքը: Բալթազարը մոտեցավ հրամանատարին, կանգնեց նրա զիմաց: Հրամանատարն իր տիսուր տչքերը հառեց Բալթազարին, կարծես ոզնություն եր հայրում:

— Փարիզի հրամանն ե, չեմ կարող ոգնել,—ասաց Հրամանատարը և մտավ իր առանձնասենյակը:

Բալթազարը մտավ զբաղարանի դահլիճը: այդ այն սենյակն եր, վորոտեղ սպանները սովորում եյին, թե ինչպես կոտորել տալ մասսան: Պատի վրա ամրացած եր մեծ մարմաքե տախտակ, ճակատին գրած՝ «մարդկային որենքներք»—ֆրանսիական բուրժուական հեղափոխության «հաղթանակը»:

Բալթազարն ակամայից հիշեց Մորիսին, նրա պայ-

քարը՝ խորսոսկելու բուրժուազիայի այդ «Հաղթա-
նակը»:

Ցերեկո յեր: Սահարայի պարզ և բաց-կապոյտ
յերինակամարում ասողերն եյին պլազմում: Տոթը ծան-
բոցին ճնշում եր, վոչ մի տերեւ չեր շարժվում: Բալթա-
զարը հազիվ հազ չնշելով, լրագիր եր կարդում, յերս
սպասավորը ներս դալով նրան տվեց մի փոքրիկ վարդա-
դույն ծրաբ:

Ռւսուցուհին եր գրում և խնդրում եր կապիտան
Բալթազարին իրենց մոտ գնալ:

Բալթազարն շտապեց նրանց մոտ: Ալալիան այնաեղ
չեր. Բալթազարը արտօնեց, մի բովե նույնիսկ մտածեց,
տոթը պատճառ բանելով, վերագանակ, յերը հանկարծ
ներս մտավ Ալալիան, մի քանի համեմատիչների հետ: Բալ-
թազարը զվարթացավ: Ալալիան ժամաց... Բալթազարը
և Ալալիան լուռ կանգնած եյին միմյանց գեճ:

— Նստեցեք իշխանուհի, — ասաց Բալթազարը, ա-
թուր մոտեցնելով: Ալալիան նստեց և զեմքն առավ ձեռ-
քերի մեջ: Նա լուռ եր: Լուռ եր նաև Բալթազարը, հա-
յացքը զամած Սահարայի գեղեցկուհուն:

— Կապիտան, հետացիր, — ասաց Համարյա լուսով
Ալալիան: Բալթազարը ցնցվեց, մի քայլ արեց դեպի պա-
տուհանը, վերցրեց զլխարկը և ասաց.

— Լուռ եմ, Ալալիա, — և ուզում եր գուրս դալ, վոր
հանկարծ Ալալիան լուսեց նրան: Բալթազարը կանգ ա-
ռավ:

— Սահարայից... — ասաց Ալալիան հեկեկալով:

— Սահարայից... — կրկնեց Բալթազարը, ուժա-
սպառ պատին հենվելով:

Թեյի պատրաստությունը վերջացնելով, ներս յե-
կալ ուսուցչուհին, զարմացած դիտելով մերթ մեկին,
մերթ մյուսին:

— Ալալիա՞ ուրախությանդ նախորյակին տիրո՞ւմ
ես, — ասաց ժամանակ ուսուցչուհին: Ալալիան ամրողը
մարմնով զողալ սկսեց, վորին հաջորդեց ջղային լոցը:

Բալթազարը լուռ հենված պատին, գլխարկը ձեռքին, մի բոպե մտածեց հեռանալ, բայց ուսուցչուհին խնդրեց նատել:

— Դե լավ, Ալալիս, մի ախրիը ամուսնությանն այնքան ել մեծ դժբախտություն չե, —ասաց ուսուցչուհին նայելով Բալթազարին:

— Ո՞վ ե ամուսնություն, —Հարցը Բալթազար:

— Ալալիս:

— Ո՞ւմ հետ:

— Ել Զեմալի:

Բալթազարի աչքերը ուևացան, նրան թվաց, վոր ամբողջ Սահարան շարժվում եր իր վոտքերի տակ:

Ալալիսն լալիս եր կամացուկ, սրտամորմոք... Բալթազարը կանգնեց, խորը հայրացք նետեց արտասվող Ալալիսի վրա:

— Ալալիս... —արտասանեց նա աղեքուական և արագ դուրս գնաց...

Դուրսը նորալուսինն ինչպես մի աշխույժ մանուկ, յայտում եր աջ ու ձախ և կատակներ անում պլպլացող ասպերի հետ:

Յերբեք Սահարան իր պարզ ու լինջ յերկնակամարով այնքան ատելի չեր յեղել Բալթազարին, վորքան այդ բոսկեցին:

Մտամոլոր քայլերով Բալթազարը ծուռ ու մուռ վիսպոցներով տուն հասավ և հենց այդպես նետվեց մահճակալի վրա:

Հետեյալ առավոտ կապիտան Բալթազարը նոր եր մտել իր կարինեալը և որպա տեղեկատվություններն եր կարգում, յերբ չափուշը ներս դալով, հայտնեց, վոր Ել Զեմալը խնդրում է իրեն ընդունել: Բալթազարը դունատվեց:

— Թող ներս գտ:

Ել Զեմալը փաթաթված իր մետաքսե բոււնուսի մեջ ներս մտավ և մի ծրար դնելով սեղանի վրա, ասաց:

— Յես յեկել եմ խնդրելու, վոր հանգուցյալ հորակացունն ինձ տաք:

— Բողեք ձեր զիմումը սպայակույտը կքննի, — ապաց Բալթազարը, առանց գլուխը բարձրացնելու:

— Լավ, — ասաց Ել Զեմալը, սեղանի վրա թողնելով իր զիմումը և իր շքախմբով հեռացավ թերդից: Ել Զեմալի հեռանալուց հետո Բալթազարը փակեց գուռը և ընկավ բազկաթուի մեջ: Նա զգում եր, վոր իր մեջ զարդանում ե մի զաղանային ատելություն զեղի Ել Զեմալը: Նրան թվում եր, վոր ինքն առանց տատաննելու կարող ե դանակը խրել նրա յերիտասարդ կուրծքը, վոր նու պատրաստ ե իր ճանկերով խեղդելու Ել Զեմալին:

Բալթազարի մեջ արթնացել եր սարսափելի խանդը և իր գիշատիչ ճանկերն անողոքաբար խրել իր սիրող սրաի մեջ:

Հետզհետեւ Բալթազարի բուռն զայրույթը գեղի Ել Զեմալը մեծանում եր ու մեծանում:

— Բայց ինչո՞ւ, — բացականչեց Բալթազարը, դիմքը ծածկելով, կարծես ամաչում եր խսոտովանելու, վոր ինքը պարտված ե չարաչար կերպով:

Ել Զեմալը մահմեղական ե, հայտնի իշխան և չքնաղ յերիտասարդ: Ալարիան նույնպես մահմեղական ե, հայտնի իշխանուհի և յեղակի դեղեցկուհի: Մի բոլե Բալթազարի հոգնած աչքերի առաջ պատկերացավ, ինչպես յերջանիկ զույգը խանդավառությամբ գրկախառնրված, համբուրվում ե: Բալթազարն ամուռ սեղմեց աչքերը, չտեսնելու իրեն համար այդ սոսկալի տեսարանը:

— Ալարիա... — աղերսեց Բալթազարը, դլուխը դնելով սեղանի վրա:

Հրամանատարը շտապ մեկնեց իրենց տերրիտորիայի հյուսիսային մասը. դրությունն այնտեղ չափանց լուրջ եր. ամենից բազմամարդ աշխրաթներից մեկն ապստամքել եր և սպանել ցեղապետին: Նրանք հատուկ պատգամավորություն եյին ուղարկել բորջը, առաջադրելով նոր ցեղապետի թեկնածություն իրենցից:

Սպայակույտը սարսափեց. դա առաջին անգամն եղ,

մոր աշխրաթը պահանջում եր նշանակել ցեղապետ իրենց՝
միջից:

Ցեթև բոլոր աշխրաթներն այդպիսի պահանջ դնեն,
ու նշանակում եւ համատարած ապստամբություն:
Թրանսիական բուժուազիան միայն ցեղապետներին մի-
ջանցից անջատելով և թշնամացնելով եւ, վոր հաջողեց-
նում և վարել իր քաղաքականությունը: Այդ տակտիկայի
պատճառով եր, վոր բերքերները և մավրերը չեյին կա-
րողանում իրար հասկանալ և ընդհանուր լեզու գտնել:

Հրամանատարի տեղակալ նշանակվել եր Բալթա-
պարը: Դեռ նոր եր մեկնել հրամանատարը, յեցր բերդի
հրապարակը նորից լցվեց հարյուրավոր սպանվածներով
և վիրավորներով:

Բալթաղարն առանձնացած եր վելլայում խորս
մտքերի մեջ թաղված: այդ որը նա նույնիսկ վորոշել եր
դուրս չգալ: Նրա մոտ յեկալ ցեղապետ Բեն Ալին: Բալ-
թաղարը նրան հրամայեց բերդի հրապարակը մաքրել
ցուցարարներից, թաղել տալ սպանվածներին և հիվան-
դունոց փոխաղբել վիրավորներին: Ցեղապետը գնաց,
իսկ Բալթաղարը հրամայեց սպասավորին անմիջապես
փակել բոլոր լուսամուտները, վոր չլսի հրապարակից
հնչող աղիողորմ ճիշերը:

Դժգոհությունը Փրանսիական տիրապետության
կեմ ընդհանուր եր: Կեղեցված ամբոխը վրեժ եր պա-
հանջում: Դրությունը հետզետե դառնում եր ավելի քան
սպասնական:

Բալթաղարը հրամայեց սպաներին հերթապահու-
թյուն նշանակել և լինել իրենց պոստերում:

Դժգոհությունը պարզ յերեսում եր և ովաղիսի ազգա-
րնակության մեջ:

Վոստիկանական կազմը կրկնապատկվեց. նույնպես և
լրտեսների ցանցը: Քաղաքի շուրջն ընկած վրանաբնակ
աշխրաթները հրաման ստացան տեղափոխվել քաղաք,
վորպեսզի ավելի ուժեղ հսկողության տակ գտնվեն:
Բահտերը լցված եյին «կասկածելիներով», թունավորում

Եյին տասնյակներով, բայց գծղոհությունը լոելյան տառում էր և տճում . . .

Անապատից ստացած լուրերը սարսափելի եյին: Ապստամբ բանակը հաղթական առաջ եր շարժվում և ամենուրեք հարյուրներով ապստամբներ միանում եյին նրանց: Ստույդ տեղեկություններից հայտնի յեր, վոր ապստամբությունը զեկավարում եյին յերկու ֆրանսիացի սպաներ: Կենտրոնից շարունակ ստացվում եյին զդոյին և անհանդիսա հեռագրեր, պահանջելով «ամեն ինչ խեղզել արյան մեջ»:

Սպաներն հետզհետե խույս եյին տալիս քաղաք գնույոց: Քաղաքի վրա իջել եր մի արձիճային թախիծ, վոր ձնշում էր բոլորին: Քաղաքը կորցրել եր իր բնական տեսքը: Խանութները համարյա փակ եյին. արարական յերաժշտության ձայները հաղվագյուտ եյին դարձել. միայն սրճարաններն եյին լիքը ամեն գիշեր:

Յերբ ովազիսը թաղվում եր խորը քնի մեջ, Բալթազարն իր զինվորներով զուրս եր գալիս մեծ փողոցն ու բարձրանում ովազիսը շրջապատող բլուրները: Նստած բլուրի վրա, նա հայացքը հառում եր տարածության մեջ, ուր յերեսում եր զեղեցիկ մինարեն և նրա մոտ՝ ցեղագետի ամբոցը, ուր ապրում եր Ալալիան:

— «Ալա՛լիա», — մրմնջում եր Բալթազարը և թաղվում ծանր մտքերի մեջ:

Բալթազարն զդում եր, վոր իր տանջանքներն ավելի և ավելի կրկնապատկվում են, սիրտն ավելի արագ և բարիում:

Բալթազարի ուղեղն այժմ կրծում եր մի միտք, այն և թողնել պաշտօնը և հեռանալ Սահարայի այրող յերկրից: Այդպիսի վորոշման պատճառը վորչափ Ալալիան եր, նույնչափ և առավելապես այն, վոր նա չեր կարողանում հաշովել այն գաղութային քաղաքականություն հետ, վորը վորդեգրել եր ֆրանսիական բուրժուազիան՝ կոտորած, արյուն, գավաճանություն, իսաբերայություն, անմեղ մարդկանց թունավորում, կեղեգում, շա-

Հաղործում և այլն, վորոնք ծանր չլիթայի նման կար-
ծես կախված լինելին Բալթազարի վզից և սեղմում ելին
ու սեղմում . . .

Բալթազարն անհամբեր ապասում եր Մորիսի կամ
Եղմոնի սուրհանդակին, բայց վոչ մեկից, վոչ մյուսից
յուր չկար, ի՞նչ են անում նրանք, վորտեղ են, ինչու
իրեն վոչինչ չեն հայտնում: Այս մաքերով տարված,
նրա համար Մորիսը և Եղմոնն ավելի և ավելի ելին մե-
ծանում, իսկ ինքն ավելի և ավելի փոքրանում, դառ-
նում եր աննշան մի վոչնչություն:

Մեկ որ, առավոտյան, Բալթազարը մեծ ամրոցի
դարձասի առաջ հանդիպեց մի աչքը ու լաթով կապած
մի արարի: Բալթազարը կանգ առավ և նայեց նրան: Մի
աչքանի արարը շփոթվեց:

— Բեն Արտու, — ասաց Բալթազարն ուղիղ յերեսին
նայելով:

— Արասը զարմացած նայեց Բալթազարին և
չնշանառ գոշեց.

— Կապիտան Բալթազար . . .

Բեն Արասն ընկավ ավագի վրա ու գրկեց Բալթա-
զարի վոաքերը: Բալթազարը բռնեց և բարձրացրեց
նրան: Բեն Արասը կապիտան Բալթազարի վաշտում հե-
տախույզ խմբի պետն եր, նա իր աչքը կորցրել եր Ել-
դասի ճակատում և նրան առաջին ինսամք տանողը յե-
ղել եր Բալթազարը, իր մոտ յեղած վիրակապը փաթա-
թելով նրա դուրս թափված աչքին: Բեն Արասը յեկել եր
սպազիս թաղելու հորը և յեղբորը, վոր իրենց աշխարթի
կոտորածի ժամանակ սպանվել ելին:

Յերեկոյան շատ ուշ, Բեն Արասը, նստած Բալթա-
զարի սենյակում, խոսում ելին յերկար: Արասի հավա-
տագմությունը Բալթազարին հայտնի յեր: Բալթազարն
ուրախ եր, վոր գտավ Բեն Արասին: Բալթազարը մենակ
եր Սահարայում, մենակ և խորտակված որտով: Մու-
սոյից բացի նա վոչ մի համատարիմ մարդ չուներ լայ-

նածավալ ավագի անապատում, իսկ Մուսան գեռ շարունակում եր տնքալ իր անկողնում:

— Բեն Արաս, յիս մենակ եմ և տիտոր, մնա ինձ մոտ, — առաջարկեց Բալթազարը:

— Ուրախությամբ, իմ կապիտան:

Բալթազարը Բեն Արասին իր մոտ ունենալով, արդեն իրեն վորոշ չափավ հանդիսան եր զգում:

— Բեն Արաս, գրությունը լավ չե, — ասաց մի ոք Բալթազարը:

— Վատ ե, սիդի, շատ վատ ե, — Յեզ Բեն Արասը մանրումտան պատմեց Բալթազարին այն բոլորը, ինչ վոր կատարվում եր անապատում:

— Ի՞նչ անենք, Բեն Արաս:

— Հրամայիր իմ կապիտան, Բեն Արասը մի աչք ունի, նո յել զուբրան իր կապիտանին:

Բեն Արասն արգեն թողել եր Բալթազարի բնակարտունը և ապրում եր ովազիսի հեռու մի անկյունում մի խումբ արարներով շրջապատված:

Բալթազարը կարծես արգեն մոռացել եր Ալալիոյին: Այժմ Բալթազարի շրթունքներն ավելի հաճախ եցին արտասանում Բեն Արասի անունը, քան թե իրեն համար այնքան սիրելի Ալալայի անունը:

Մի գեղեցիկ առավոտ, յերբ հյուսիսից փչում եր մեղմ զեփյուռը, Բալթազարը մտածեց այցելել մոտիկ աշիրաթը և տեղի վրա կարգադրել այն հարցերը, վոր մեծ աղմուկ եցին առաջացրել յերկու հարեւն աշխաթների մեջ:

Բալթազարը դնում եր տիտոր ու մտամոլոր իր փոքրիկ քարավանի առաջից: Քարավանը մտավ փոքրիկ անտառը. ուղտերը յերկարելով իրենց անհամաշատ վզերը, աջ ու ձախ ընկած ծառերի գաղաթներից պոկում եցին տերենները: Քարավանը կանգ առալ անտառի միջից վոլոր-մոլոր հսոսդ գետի տիփին:

Դետի ջուրն այնքան սառն եր ու վճիռ, վոր նրա հատակում յեղած մանրիկ ավազն անդամ յերեւում եր:

Ալլարմները չողած գետի ամիբն, խմում եյին և սիրում, վայցիայում ու շոյում սառը ջուրը:

Բալթազարը թողնելով ուղտենքին և ուղտապաններին, վոտքով անցավ գետի գետի ակունքը: Հանկարծ Բալթազարը նկատեց, վոր հսկա մի ծառի տակ նստած և Ալալիան իր նաժիշտներով. նա գետը լողանալու յեր յեկել և այժմ նաժիշտները սանրում եյին նրա խիտ, սև սաթե մաղերը:

Ալալիան նստած եր խոտերի մեջ գցած մետաքսե զորդի վրա, մաղերը թափած ուսերին, չորացնելու համար: Այդ բոպեյին նա աննման գեղեցիկ եր: Նա նման եր ֆեայի, վոր ջրի ալիքների հետ մղած մենամարտից հետո հողնած, այժմ ափ և դուրս յեկել հանգստանայու իր բուսական թաղավորության մեջ: Բալթազարը զունատվեց և վերադարձավ աննկատելի: սակայն վոտքերը դավանանում եյին: Նա ծառից ծառ անցնելով, կամենում եր խույս տալ Ալալիայի նաժիշտների սրատես աչքերից, բայց Ալալիան արդեն նկատել եր նրան:

Բալթազարն արդեն հեռանում եր, յերբ նաժիշտներից մեկը հասավ և իշխանուհու կողմից խնդրեց իր մոռ:

Բալթազարը կանգնած եր մետաքսե զորդի վրա Ալալիայի առաջ: Նաժիշտները հեռացան: Մաղարթախիսանուառուառում, պարզ ու ջինջ գետի ափին Ալալիան և Բալթազարը մնացին մենակ:

— Նստեցեք կապիտան:

Բալթազարի թուլացած մարմինն ընկավ գորդի վրա:

— Ալալիա...—բացականչեց Բալթազարը, հեռում:

Ալալիայի սիրտը բարախում եր արագ-արագ. նա չնչառպառ եր լինում, նա դողում եր իր սև մետաքսե չքաղզեստի մեջ: Խսկ նրա աչքերը...այդ աչքերը վառմում եյին, ինչպես չոր խոտի գեղեր:

— Բալթազար՝ ը, — Հաղիկ լոելի շնչաց Ալալիսն, ձեռքն ամուր սեղմելով իր կրծքի վրա:

Բալթազարը բարձրացրեց իր սիրակեղ աչքերը և յերկու սիրող հայացքները գամվեցին միմյանց:

— Ալալիս... — շնչաց Բալթազարը, և նրանք դըրկախտոնվեցին:

Հոնկարծ Ալալիսն ճշաց և մի կողմ հրնց Բալթազարին:

— Ոճը, ոճը, — զարհուրած ցույց եր տալիս սև ոճը Ալալիսն, յերկշոտ յեղնիկի պես կծկված:

Ոճը սողում եր հանդիստ և անվրդով իր մաշկի սարսափը տարածելով:

— Հեռացիր Սահարայից, իմ Բալթազար:

— Ալալիս, — շնչաց Բալթազարը հուզված:

— Հեռացիր Սահարայից, մեր միջից ոճ և անցնում, Բալթազար: Այն բովեյին, յերք մենք սիրո ուխտն եյինք անում, սև ոճը սողաց մեղ մոտ:

— Ալալիս, — բացականչեց Բալթազարը և արագ քայլերով հեռացավ ծառերի միջով:

Ալալիսն սարսափած աչքերով նայում եր մերթ ոճի ջախջախված զանդին, մերթ զեպի այն ճանապարհը, վորով անցավ Բալթազարը: Ալալիսյին թվում եր, վոր այն ճանապարհը, վորով անցավ Բալթազարը, հեռու յե յերկար, շատ յերկար...

Ալալիսն բեկված սրտով թողեց գետափը: Վերջին անգամ նա իր դալիացած հայացքը հառեց զեպի այն նվիրակոն ծառը, վորի տակ նա գրկախառնվել եր Բալթազարի հետ... Հեռվից տափակած խոտերի մեջ յերկում եր սև ոճը, իր ջախջախված զանդով:

Բալթազարի քարավանը շարժվեց առաջ դանդաղ քայլերով, անտառը թնդացնելով ներդաշնակ զողանջով:

Քարավանը գնում եր զանդաղ և քարվանին համբաց քայլում եր Բալթազարը, վերհիշելով իր հանգիպումն Ալալիսյի հետ:

Եերկար չեր անցել, յերք հանկտրծ լսվեց հրացանի:

սպայթյուն և թվերի տակից դուրս յեկավ յերիտասարդ
իշխան Ել Զեմալն իր չքախմբով։ Ել Զեմալը բաղեներով
վորսի յեր դուրս յեկել։

— Աև ոճը, — շշնջաց Բալթազարը։ Նրա մեջ կրկին
արթնացավ նիրհած գաղանը և նա մի բովե ձեռքը տա-
րավ գեպի ատրճանակը, ջախջախելու սև ոճի գանգը,
բայց ձեռքերը թուլացան։

— Ի՞նչո՞ւ . . . — մտածեց Բալթազարը և կախ գցեց
դլուխը։

Բալթազարի քարավանը շարժվեց առաջ դանդաղ
քայլերով, անտառը թնդացնելով դանդակների ներ-
դաշնակ ձայնով։

Յեկավ քարավանը, ծանրաբեռնված ռազմական մթիրքներով։ Յեկավ և փոստը։ Բալթաղարը փակված իր առանձնասենյակում, կարդում եր ժյուլետայի նամակը։ Նա գրում եր.

«...Աֆրիկան ռոմանների յերկիր ե, բայց շատ հաճախ նաև անապատի մելամաղձոտությունը փարատելու միջոց... Մորիսի մասին դրել անդամ ուարսափում եմ։ Նա այժմ գտնվում է Սահարայի խորքերում և դեկավարում ե ապստամբ բանակը։ Նրան հետապնդող խմբերը վերադարձան։ Մոստաղաննեմի և Սիդի Բելաբսի կայազորները շարժվում են դեպի անապատ, Մորիսի հետ ընդհարվելու համար։ Սոսկալի յե այս բուրը։ Մորիսը կորավ մեղ համար ընդմիշտ...»

«Աֆրիկան ռոմանների յերկիր ե, բայց շատ հաճախ նաև անապատի մելամաղձոտությունը փարատելու միջոց...», — կը կնեց Բալթաղարը, նամակը սեղանի վրա դցելով։

«Վոչ, սիրելի ժյուլետա, վոչ, սերն ինձ հաղթեց Աֆրիկայի այրող արևի տակ»։

Ակամայից Բալթաղարի աչքերը դարձան դեպի դիմացի սաղարթախիտ պարտեզը, վորտեղ ապրում եր Ել Զեմալը։

Են Աբասը տասնհինգ որ եր, ինչ թողել եր ովազիսը և գնացել անհայտ ուղղությամբ...»

Մուսան կազդուրդում եր արևի ճառաղայթների տակ։ Որոջը վերջացել եր և սկսվում եյին կրոնական տոնները։ Յերաժշտախումբը նվազելով պտտում եր ովա-

զիսում և հավատացյալներին մղկիթ հրամիրում։ Հա-
զարավոր բուռնուաներ հավաքվել եյին մղկիթի հրա-
սարակը և կարգով չոգել իրար կողքի ու իրենց թուլս
և ձվաճե աշքերը հառել դեպի բարձր մինարեն։ Մուսան
ևս հաղալ իր սպիտակ գանդուրան ու բուռնուաը և գնաց
մղկիթի բակը։ Յերաժտությունը դադարեց, բերդի
թնդանոթները վորոտացին, վողջունելու հավատաց-
յալների կրօնական տոնը։ Լոեցին թնդանոթները, ողը
ցնելով վառողի հոտով և բարձր մինարեյի վրայից
ովեց մարաբույի ձայնը։

Հավատացյաները հիանուացած, դլուխները ծոեցին
տաք ավաղի վրա, նամազը մըմնջալով։

Հանկարծ ծնրաչոք ամբոխի միջից մեկը բարձրա-
ցավ և հավատացյալներին կուսկըտելով, վաղեց դեպի
մղկիթը և սկսեց բարձրանալ մինարեյի վրա։

Հազարավոր ամբոխը մեռելային դրության մեջ չո-
պած, ձեռքերն ուղիղ դրած ծնկներին, հայացքները հա-
ռել եյին մինարեյին։ Աղանն ընդհատվեց։ Բոլորի հա-
րացքը դարձավ դեպի մարաբուն։ Մուսան մինարեյի
վրա բռնել եր իր կնոջը յուրացնող մարաբույի ոճիքից։

— Սուտ ե քո Մահմեդը, սուտ ե և քո աստվածը, —
բացականչում եր Մուսան, սեղմելով մարաբույի կո-
կորդն իր ամբողջ ուժով։ Սարսափած ամբոխը, չոգած
տաք ավաղի վրա, աներեակայելի սարսուռ զդաց, յերբ
Մուսան՝ դրկախառնված մարաբույի հետ՝ գետին դլոր-
վեցին բարձր մինարեյի դադաթից։

Բալթազարն անմիջապես զինված պահակախմբով
դեպքի վայրը յեկավ։ Տեսարանը սոսկալի յեր։ Մուսան
և մարաբուն ջախջախված ընկած եյին մղկիթի քարերի
վրա։ Մուսան ձեռքով դեռ ամուր բռնել եր մարաբույի
ոճիքից։ Իսկ սարսափահար ամբոխը բացականչում եր՝
«Ալլահ Աքապար»...

Հետեալ որն արարական դերեզմանատանը յերկու
փոս եյին վորում, մեկը Մուսայի, իսկ մյուսը՝ մարա-
բույի համար։ Մարաբույի դիակը շրջապատված եր հա-

դարավոր հավատացյալներով, իսկ Մուսայի դիակի մաս
կանգնած եր միայն Բալթազարը, տխուր աչքերից սրբե-
լով արցունքները:

Գերեզմանատնից տուն վերադառնալով, Բալթա-
զարը մտավ այն սենյակը, ուր ծանր ցավերի մեջ տա-
ռապել Նր Մուսան: Բալթազարը հենվեց Մուսայի դա-
տարկ մահակալին:

«Ոհ... ինչպես մենակ եմ յես այս հեռավոր անա-
պատի կարմիր ավազի մեջ թաղված», — շշնջաց ինքն ի-
րեն Բալթազարը, անցավ իր առանձնասենյակը, նստեց
սեղանի առաջ և գրեց իր հրաժարականը, խնամքով
ծալեց, տեղավորեց ծրարի մեջ և կնքեց:

Յերեկոյան լուսնի կաթնանման շողերի տակ քարա-
վանը մեկնեց, տանելով իր հետ նաև Բալթազարի հրա-
ժարականը:

Բալթազարն իր հրաժարականն ուղարկելուց հետո
իրեն ավելի թեթև եր զգում. կարծես նա այլևս իրեն
հանցավոր չեր զգում այն ահսելի տեսարանների հա-
մար, վորոնք այնքան առատ են րերդի շուրջը տարած-
ված Սահարայի յերկում:

Բալթազարն աշխատում եր վոչ մի րանի մասին
չմտածել, բայց Ալալիայի աչքերը համառորեն ձգում
եյին իրեն:

Բալթազարը վոտքի ցատկեց, վճական նետելով.
— Վերջ...

Ծխախոտ վառելով, Բալթազարը մոտեցավ լուսո-
մուտին: Ահա իր դիմացը Ել Զեմալի սաղարթախիտ
պարտեզը, իսկ քիչ հեռու՝ մզկիթի կողքին Ալալիայի
տունը: Նա հիշեց անտառը, դետը, հիշեց սև ոճը...
«Հեռացիր Սահարայից», — մտաբերեց Բալթազարն Ա-
լալիայի խոսքերը:

Այս, Ալալիա, յես կթողնեմ ծարավների այս աշ-
խարհը, իմ վարդապույն հույսերի պարզ ու մաքուր
աղբյուրը թունավորված է: Յես կհեռանամ, Ալալիա...
յես կհեռանամ... Յես կհեռանամ, իսկ դուք յերջանի

ապրեցեք ձեղ Համար: Սահարան կներկվի քարիլների և
բեղուինների արյունով, իսկ գուք շարունակեցեք ձեր
յերջանիկ կյանքը, վոր ձեռք եք բերել ձեր ցեղակիցնե-
րին վաճառելու գնով... .

Վերտարձակ Բեն Արտան իր անհայտ ուղղությամբ
կատարած ճանապարհորդությունից և Բալթազարի
հետ յերկար խորհրդակցելուց հետո, մի քանի որից
կրկին անհայտացավ:

Անապատի զանազան մասերից շարունակ հուսահա-
տական լուրեր եյին ստացվում: Փարիզը և Ալժիրը չա-
փազանց անհանդիսա եյին: Անապատի ըմբոստ բանակը
շարունակ առաջ եր անցնում անարդել: Ամենից հավա-
տարիմ համարված աշխաթներն անդամ միանում եյին
ապատամբ բանակին:

Յերեկոյան քաղաքի ազգաբնակությունը խոնվել եր
ովաղիսի կողքի մեծ հրապարակում և դիտում եր Ալժի-
րից յեկած ողանավը, վոր բերել եր կարևոր և զաղտնի
հրահանդներ և յեյտենանտ Ռիշին: Կենտրոնական կա-
ռավարությունը բարվոք եր համարել ուղարկել մի սպա
և, ավելի ուժեղացնելու սպայակույտը:

Շատ մեծ ուրախություն պատճառեց Բալթազարին
լեյտենանտ Ռիշի գալը: Լեյտենանտ Ռիշը Բալթազարի
մանկական ընկերն եր, և բացի դրանից, համաշխար-
հային պատերազմի ժամանակ նրանք յեղել եյին միե-
նույն բանակում:

Ուշ գիշեր եր, պարզ ու պայծառ գիշեր: Քաղաքը
և ամրոցը թաղված եյին խորը քնի մեջ: Ռիշը և Բալ-
թազարը կանգնած բարձր աշտարակի վրա, դիտում եյին
անապատի ամայությունը: Բալթազարը պատճում էր
լեյտենանտին բոլոր այն սարսափելի կոտորածների մա-
սին, վոր իրենք կազմակերպում են անապատում: Լեյ-
տենանտ Ռիշը լսում էր ուշադրությամբ և հանդարտ
ծխում եր ծխամորճը:

Հետզհետե ավելի վորոշ եր դառնում, վոր ովաղիսի
ովագաբնակչությունը կործնում է իր զվարժ տրամա-

գրությունը։ Սրճարաններն անգամ գրեթե դատարկ ե-
յին։ Քաղաքը մի տեսակ լոռության եր մատնված մարդիկ
չուկներով եյին խոսում իրար հետ, իսկ խանութները
գրեթե փակ եյին։ Կարծես ըոլորն ել սպասում եյին մի
չարագուշակ լուրի։ Բալթազարը հրաման արձակեց
դադարեցնել ճանապարհորդությունները գետի անա-
պատ։ Լրտեսները վխտում եյին ամենուրեք. մասնավոր
բաղես աչքի յեր ընկնում արարների չափազանց կոպիտ
վերաբերմունքը զետի հրեաները։

Հրեա ռաբբի տանը տեղի յե ունենում իր աղջկա ա-
մուսնության ծիսակատարությունը։

Ցեղապետ Բեն Ալին իր մարդկանցով հարձակմում
ե հրեա կրօնավորի տան վրա և փախցնում աղջկան։
Հրեաները ընդդիմանում են և սկսվում է կոտորածը։
Բալթազարը և Թիշն անմիջապես վազում են հրեաների
թաղը, վորտեղ կատաղած ամբոխը, զինված վոտքից
մինչեւ գլուխ կոտորում եր հրեաներին անխնա։

Պահակախումբը միանդամայն անզոր եր կարգը
վերականգնելու։ Բալթազարը հրամայեց կայազորին
դուրս դալ։ Ցեղ շատ չանցած, կայազորը կարողացավ
կարգը վերականգնել։

Ամբողջ փողոցները ներկվել եյին արյունով։ Լաց,
կոծ, հառաջանք խառնվել եյին միմյանց։ Բալթազարը
վերադարձավ բորջը, Թիշին պատվիրելով իրեն մոտ բե-
րել ցեղապետ Բեն Ալինն։ Լեյտենանտ Թիշը, համարյա-
պաղի վրայով քաշ տալով, Բալթազարի մոտ բերեց ցե-
ղապետ Բեն Ալիին։

Բալթազարը հաղիվ զսպելով իր կատաղությունը
դարձավ ցեղապետին։

— Ինչպե՞ս ես համարձակվում հասարակական
կարգը խանդարելու։

Ցեղապետ Բեն Ալին զայրացած ուղղում ե բուռնուաց
և զարմացած նայում սպաներին։

— Ինչպե՞ս, — հարցը եց ցեղապետը, ամենայն հան-
գարտութամբ։

— Ինչպես թե՝ ինչպես։ Այս ի՞նչ կոտորած եւ։

— Ցեղապետը կարծես չհասկանալով լինդիրն ինչումն եւ, զարմացած մերթ նայում եր Բալթազարին, մերթ լեյտենանտ Ռիշին։

— Չեմ հասկանում, թե դուք ինչ եք ուզում, —ասաց կայիդը, նատելով։ —Դուք զարմանալի յեք, —շարունակեց ցեղապետը։ —Փոխանակ ինձ վարձատրելու, ինձ վիրավորում եք։ Աւեմն իմ այսքան տարվա հավատարիմ ծառայությունս այսպե՞ս պետք եւ վարձատրվեր։

— Ասա կարմ, այս ի՞նչ կոտորած եւ, —գոռաց հանկարծ Բալթազարը, ձեռքը սեղանին խփելով։

— Յես կատարել եմ միայն ընդհանուր հրամանատարի հրահանդը և ուրիշ վոչինչ։

— Ընդհանուր հրամանատարի հրահանդը, —հարցրեց Բալթազարը զարմացած։

— Այո, —պատասխանեց ցեղապետը։ —Հքեանները զեմ են Փրանսիական տիրապետության և իրենց ամբողջ ուժով աջակցում են ապստամբներին։

Բալթազարը և լեյտենանտ Ռիշը զարմացած նայում էին իրար, յերբ մյուս սպաները հաստատեցին, վոր հըրահանդը տրված եւ յեղել ընդհանուր հրամանատարի կողմից։

— Իսկ ինչու յես փախցրել հրեա քահանայապետի աղջկան, —հարցրեց Բալթազարը զայրացած։

— Քահանայապետի աղջկան տիրելն իմ իրավունքն է։ Միթե իմ այսքան ծառայություններիս համար դուք ինձ պետք եւ զլանաք մի կեղտոտ հրեայի աղջկա, —պատասխանեց կայիդն ամենայն հանդարտությամբ։

— Լոիր, շուն, —գոչեց լեյտենանտ Ռիշը և հարձակվեց ցեղապետի վրա։

— Բանտ տարեք սրան, —հրամայեց լեյտենանտ Ռիշը կատաղած։

— Զդույշ, պարոններ, դուք ինձ բանտ նստացնե՞նք կարող, յես կրում եմ իմ կրծքի վրա ասպետական

շեզեռնի խաչը: Յեվ յեկրոբուք, թույլ տովեք ձեզ հայտնելու, վոր հրեա կրոնապետի աղջկա համար յես վճարել եմ, հասկանում եք, վճարել եմ,—ասաց յեղապետ կատաղած:

— Հանել վրայի ծիրանին և բանտ տանել,—հրամայեց Բալթաղարը, վոտքի կանգնելով:

Այդ սոսկալի արյունահեղության մասին հեռավորեց կենարոնական կառավարության: Մի առ ժամանակ անց, բորջ յեկավ հրեա քահանայապետը, մի քանի տեղից փերավորված, պահանջելով վերադարձնել իր աղջկան:

Լեյտենանտ Ռիշը վշտահար հորը հանգստացնելով տուն ուղարկեց, խոսուանալով անպայման աղջկան վերադարձնել:

— Իսկ վորտե՞ղ և աղջիկդ, —հարցրեց Բալթաղարը:

— Ցեղապետն իրենց տուն տարավ, —պատասխանեց քահանայապետը, վերքերից ուժասպառ:

Շատ չանցած, լեյտենանտ Ռիշը զինված պահակով ցեղապետ Բեն Ալիի տան առաջն եր: Դուռը բաղկեցին, բայց վոչ մի ձայն: Լեյտենանտ Ռիշը հրամայեց ավելի ամուր ծեծել: Ներսից պատասխանեցին, վոր ցեղապետը տանը չլինելու պատճառով դուռը բանալ չեն կարող:

— Բաց դուռը, —գոչեց լեյտենանտ Ռիշը:

Դուռը բացվեց, լեյտենանտ Ռիշը ներս մտավ: Մի սեամորթ սպասավոր սպային առաջնորդեց մեծ դահլիճը, վոր զարդարված եր Մեկայից և Մեղինից բերած թանկագին արդ ու զարդերով: Լեյտենանտ Ռիշը կանոնած շքեղ դահլիճում, դիտում եր չորս կողմի արդ ու դարդը, յերբ դուռը բացվեց և յերեաց Ալալիան:

Ալալիան ջղային եր, հուզված և տխուր, բայց բոշավառվող աչքերը միշտ փայլում եյին:

Ռիշը զինվորական դիրք ընդունելով, բարեկեց իշխանուհուն:

— Նստեցեք, — խնդրեց Ալալիան, նստելով բաց
կապտագույն մետաքսե սոֆայի վրա, դեղեցիկ ձեռքը
զնելով դեղնագույն մետաքսի բարձի վրա:

— Ի՞նչ և ձեր այցելության պատճառը, — հարցրեց
Ալալիան վեհապետին հատուկ տօնով:

— Յես յեկել եմ ձեզ խնդրելու, վոր բարի լինեք ինձ
հանձնելու հրեա կրոնապետի աղջկան:

Ալալիան կիսեց հոնքնը և հարցրեց.

— Իսկ վո՞րտեղ և հայրս:

— Բանտում, — պատասխանեց լեյտենանտ Ռիշը:

— Բանտո՞ւմ, ցեղապետ Բեն Ալին բանտո՞ւմ, —
հարցրեց ինչխանուհին զարմացած:

— Այս, իշխանուհի, ցեղապետ Բեն Ալին բանտում,
պատասխանեց Ռիշը:

— Արդյոք վո՞ր հանցանքի համար:

— Կոտորածի համար, — պատասխանեց լեյտենանտ
Ռիշը, ուղիղ նայելով իշխանուհուն:

— Վոչ, պարոն, դուք սխալվում եք, հայրս հան-
շանք չունի, այս յեղեռնագործության միակ պատաս-
խանառուն դուք եք:

— Իշխանուհի, — բացականչեց Ռիշը վիրավորված:

— Լեյտենանտ, հաշիվ տվեք ձեզ: Միթե դուք չդի-
տեք, վոր կոտորածը կաղմակերաված ե յեղել ընդհա-
նուր հրամանառարի կարգադրությամբ:

— Իշխանուհի, յես յեկել եմ այստեղ միայն ձեզ
խնդրելու, վոր բարի լինեք ինձ հանձնելու հրեա կրոնա-
պետի աղջկան և ուրիշ վոչինչ, — ասաց Ռիշը:

— Լեյտենանտ, ձեզ հայտնի՞ յե արդյոք, վոր հայրս
ընդհանուր հրամանառարին տասը հազար Փրանկ ե վճա-
րել հրեա կրոնապետի աղջկանն ունենալու համար:

— Ի՞նչ, — հարցրեց լեյտենանտ Ռիշը, զարմացած
վոտքի կանդնելով:

— Այս, լեյտենանտ, — պատասխանեց Ալալիան ու-
ղիղ նայելով Ռիշը աչքերին: Յեվ «ամենազոր» Փրան-
սիայի ներկայացուցիչն իր վոսկեղոծ և փառահեղ հա-

ժազգեստով, մնացնէլ եր ամոթահար և դլխակոր, իսկ
անապատի գիցուհին հեղնական ժայիտը նուռը շրթունք-
ներին, նայում եր, թե ինչպես լնյուենանու թիշը կար-
մըրում ու կապառում եր:

Իշխանուհին բարձրանալով ասեղնադործ սովորի
վրայից, դանդաղ ուղղվեց դեպի դուռը:

Լեյտենանու թիշը բարձրացրեց զլուխը և խորը
շունչ քաշեց, դեմքի առաս քրաինքը սրբելով: Լեյտե-
նանտին թվում եր, վոր մի անողոք զատավոր կարդաց
իր հայրենիքի զատավճիռը, «ասպետական» և «կուրտու-
րական» հայրենիքի, վոր սահարյան յերկրում դերիների
առևտրով և զրադված:

Քիչ հետո Ալալիան ներս մտավ, յերկար և նուրբ
քղանցքներն ալժիրական թանգարդին դորդի վրա քաշ
տալով, բռնած հրեա կրոնապետի աղջիկ Յեսթերի ձեռ-
քից: Լեյտենանու թիշը ցնցվեց: Յերկու արտակարդ դե-
ղեցկուհիներ կանգնած եյին իրար մոտ, մեկն «ազատ»
քուղաքացի, իսկ մյուսը բարձրապատիվ իշխանուհի:

— Ստացեք ձեր ապրանքը և զղուշացեք նման ա-
ռեվտրով զբաղվելուց, —ասաց չափաղանց խիստ տանով
Ալալիան:

Լեյտենանու թիշը վիրավորված կենդանու նման,
հազիկ վոտքերը քաշ տալով դուրս յերկավ Ալալիայի
դղյակից, հրեա կրոնապետի աղջկա հետ:

Յերբ նրանք թողեցին դղյակի մեծ դարբասը և դուրս
յեկան բարդենու ուղին, լեյտենանտն ազատ շունչ քաշեց
և արագ քայլերով հեռացավ այն դղյակից, ուր այնչափ
ստորացրին իր հայրենիքը:

Ֆեն Արասը վերադարձել եր իր ճանապարհորդու-
թյունից: Նա մի քանի որ պետք ե մնար ովազիսում կա-
րելոր գործերի համար...

Բալթազարի տրամադրությունը զարմանալի կեր-
պով բարձրանում եր, յերբ Բեն Արասը վերադառնում եր:

Կենտրոնական կառավարությունից ստացվեց հրեա-
ների կոտորածների մասին մի պաշտոնական դրու-

թյուն։ Կառավարությունը դժգոհ եր, վոր ցեղապետ թեն Ալիք հետ չափազանց կոպիտ են վարվել և նրանից խել հրեա կրոնապետի աղջկան, պահանջելով անմիջապես վերականգնել նրա խախտված դիրքը։ Նույնպես կենտրոնական կառավարությունը դարձանք եր հայութում, վոր այդքան դանդաղ և ընթանում «խաղաղացման» քաղաքականությունը և խիստ բացատրություն եր պահանջում, թե ինչպես ե պատահել, վոր ցեղապետ ել Զատի աշխրաթը մինչև հիմա «չի խաղաղացված», ինչպես և թեն Հուսի աշխրաթը։ Կենտրոնական կառավարությունը պահանջում եր՝ շտապ կարգով ուղղել սխալները և անմիջապես լուրջ գործի անցնել։ Ել Մամուռի և Ել Զմշիդի ցեղերը նույնպես վտանգավոր են, ամելացնում եր կենտրոնական կառավարությունն իր հրահանգում։ Այդ ցեղերը նույնպես պետք է յենթարկվեն «խաղաղացման» քաղաքականության, հետեւապես սույն գրությունը ստանալուն պես անհապաղ իրագործել «խաղաղացման» ծրագիրը։

Հրանհանգը ստանալուն պես Բալթազարը սպաների ժողով հրամիրեց և կարգաց բոլորը։ Դրանից հետո անմիջապես ցեղապետ թեն Ալիքն հանելով բանտից, զինվորական ծխակառարությամբ նրան վերադրեին իր կարմիր ծիրանին, և ցեղապետը շրջապատված պատվուահակներով, վերագրձավիլ իր դղյակը։

Հետեւյալ որը Բալթազարն իր մոտ կանչեց ցեղապետ թեն Ալիքն և հանձնարարեց կոտորել Մամուռի ցեղը։ Ենք իբրև վարձատրություն տվեց նրան քսան հազար ֆրանկ։

Այդ որն ութ ցեղապետների զանազան կաշառներ տալով, Բալթազարը հրահանգեց մեծ «թափովի» առաջտանել «խաղաղացման» քաղաքականությունը։

Նույն որը ովազիսից մեկնեց և թեն Աբասը...

Ցեղապետները մեկը մյուսից միանդամայն անտեղյակ, առանց ժամանակ կորցնելու, նստեցին իրենց

սպիտակի ուղտերի վրա և օրացան դեպի անապատի զա-
նազան կողմերը, գործադրելու մեծ վոճիրը...

Կենարոնական հառավարության հրահանդները նույ-
նությամբ կատարելուց հետո, Բալթաղարը խիստ
տիսուք վերադարձավ իր վիլան, հանեց համազգեստը և
սպակեց վարդապույն մետաքսե սովորյի վրա:

Ծխում եր Բալթաղարն ու մտածում, մտածում եր
ու ծխում:

«Հրահանդը կենարոնից ե», — մտարերեց Բալթա-
զարն ընդհանուր հրամանատարի խոսքերը, վոր կանդ-
նած եր խորհրդի դահլիճում, ձեռքերը դարսած կրծքի
վրա, հենված պատին: Խոկ այսոր ինքն ե այդ զգվելի
դերում, ինքն ե կազմակերպում ահոելի կոտորածները,
ինքն ե ցեղապետներին մեկը մյուսից դաշտնի լարում
իրար դեմ ե ուղարկում ե նմանը չտեսնված վոճիրներ
կատարելու:

Բալթաղարն այդ մտքերի մեջ եր, վոր ներս մտավ
ընդհանուր հրամանատարը, վոր վերադարձել եր յեր-
կար շրջադալությունից և հայտնեց իր դժոգությունը
Բալթաղարի տարած աշխատանքների համար:

— Դուք սոսկալի թույլ եք յեղել, կապիտան: Յերեք
դուք հաշիվ չեք տալիս ձեղ, թե ինչպիսի ահոելի ժամա-
նակներում ենք մենք ապրում: Մեր յեռագույնը վտանդ-
ված ե և մեր հայրենիքի պատիվն ընկած: Թողնել աշխ-
րաթներն այսպես հանգիստ զրության մեջ, դա նշանա-
կում ե գիտակցարար նրանց միջոց տալ, վոր միանան
ապստամբ բանակներին: Պետք ե հրահրել կոտորածնե-
րը. թշնամացնել ցեղերը միմյանց դեմ, վորպեսզի մեկ
ցեղ մյուսին մոտենալու վոչ մի հնարավորություն չու-
ննա:

Ընդհանուր հրամանատարը դայրացած թողեց Բալ-
թաղարի սենյակը և գնաց սպայակույտի ժողովը հրավի-
րելու:

Սպայակույտը վորոշեց նախ ովազիսում մոտ 25
կասկածելի արարներին անժիջապես ձերբակալել է:

գոչնչացնել, հետո կաշառնել բոլոր ցեղապետներին և ամեն մեկին տալ հատուկի պատվեր: Իսկ ցեղապետ Բնն Ալիին ամբողջ ովազիսի ազգաբնակչության ներկայությամբ տալ «ասպետական լեզվոնի խաչի բարձրագույն աստիճանը»: Եելունանատ Ռիշը սկզբից վորոշ առարկություններ արեց, բայց վոչ մի արդյունք չտվեց: Բնդհանուր հրամանատարը զայրացած, իր վետոն դրեց, իսկ լեյունանատ Ռիշը բարվոք համարեց այլևս չանդրադառնալ այդ հարցին:

Մի քանի որից քաղաքի վոստիկանապետը կապույտ բուռնուսը ուսերին, յերկաթապատ լախտը ձեռքին, ներկայացավ ընդհանուր հրամանատարին և հայտնեց, վոր 25 կամկածելիները, վորոնց ցանկը տրված են իրեն, ովազիսում չեն: Նրանք բոլորն ել անհայտացել են:

— Ինչպե՞ս, — հարցրեց զարմացած ընդհանուր հրամանատարը: — Ուր ել լինեն, նրանց պետք են գտնել, — հրամայեց ընդհանուր հրամանատարը խիստ կերպով:

— Բայց ինչպե՞ս, վորոտե՞ղ, — մըմնջաց կամացուկ վոստիկանապետը:

— Այդ քո գործն ե, դաիր վորտեղից ուզում ես, միայն գտիր նրանց և բանտարկիր:

Վոստիկանապետը թողեց ընդհանուր հրամանատարի սենյակը պլաֆիկոր ու անբավական:

Մունետիկները վազվակելով ովազիսի ավազոտ փողոցներով, ազգաբնակչությանը հրամակիրում են մեծ հրապարակը զինվորական ծիսակատարության ներկա լինելու: Ցեղապետ Բեն Ալիին պետք ե տրվեր «ասպետական լեզվոնի խաչի բարձրագույն աստիճանը»: Կայազորն արդեն գրավել եր իր տեղը մեծ հրապարակում: Ցեղաժառությունը պատրաստ եր հնչեցնելու «Մարսելյողը», բայց զեռ ազգաբնակչությունը չեր հավաքվել:

Հընեաները զեմուատրատիվ կերպով փակվել եյին իրենց տներում և վոչ վոք փողոցներում չեր յերեսում: Իսկ արաբներից յեկել եյին «սուրբը», իշխան ել Զեմալը և Բեն Քարիմը, իսկ արաբ ժողովրդից վոչ վոք չկար:

Ընդհանուր հրամանատարը բարեկությունից բեխերը կքծունլով, կատարեց ծխակատարությունը:

Ցեղապետ Բեն Ալիի պարզեվատրման անշուք ծխակատարության լուրը գղրդացրեց ամրող՝ ովազիսը: Հետեւալ որն արարները հավաքվել եյին սինազոգի դիմաց և զղջում եյին հայտնում իրենց վատ գործի համար: Վոստիկանապետն անհապաղ զնալով ընդհանուր հրամանատարի մոտ, մանրամասն զեկուցեց դրության մասին և նոր հրահանգներ ստանալով, մեկնեց: Ընդհանուր հրամանատարն իրեն շատ անհարմար եր զգում, նա պարզ տեսնում եր, վոր«հավատարիմ»ցեղապետի պրեստիժն արդեն անվերադառնալիորեն խորտակված ե, իսկ Ֆրանսիայի պետական հիմքերը խախտված: Ընդհանուր հրամանատարն անհանգիստ և ջղային դրության մեջ, անհամբեր սպասում եր կոտորածների սկսվելուն: Որերն անցնում եյին իրար հետեխց, բայց վոչ մի կոտորածի ձայն չեր լսվում: Հրամանատարը զանազան լրտեսների դործուղղեց շրջաններն, իմանալու բանն ինչում ե: Յեզ ահա մեկ որ, յերբ սպայակույտը ժողովի յեր հավաքված ընդհանուր հրամանատարի տուանձնանենյուկում, աղմուկ լսվեց բերդի առաջին բակից: Վոստիկանապետը ներս մտավ. նա դումատ եր և շփոթված: Սպայակույտ անմիջապես դուրս թափվեց: Ամրոցի գլուխ առաջ ընկած եյին ցեղերն իրար զցել և մեկը մյուսի ձեռքով կոտորել տալ մեզ: Իսկ մենք նախընտրեցինք իրենց սպանել, — ոլատասխանեց ամբոխից մեկը:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց ընդհանուր հրամանատարը:

— Սրանք այն յերկու հրեշներն են, վոք ուզում եյին մեր ցեղերն իրար զցել և մեկը մյուսի ձեռքով կոտորել տալ մեզ: Իսկ մենք նախընտրեցինք իրենց սպանել, — ոլատասխանեց ամբոխից մեկը:

Ընդհանուր հրամանատարը ցնցվեց, նայեց յերկու այլանդակված դիակներին և յերեսը շուռ տալով, մտավ ներս:

Աշխրաթներն սպանելով իրենց ցեղապետներին,
վոռքներից մի մի պարան եյին կապէլ և ամբողջ ճանա-
պարն ավազի վրայից քարշ տալով, րերել ցել եյին
ֆրանսիական բուրժուազիայի գույների տակ: Իսկ զայ-
րացած ամբոխը հարձակիլել եր գիտակների վրա, կամե-
նալով ցեղապետների գիտակները չների առաջ նետել:
Զինված պահակը, յերկար ընդհարումներից հետո, հա-
ղիվ կարողացավ աղատել հոչոտված գիտակները և գերեզ-
մանառում փոխադրել: Բներդի բարձր աշտարակների վրա
ծածանվում եյին ֆրանսիական գրոշակները: Կատաղած
ամբոխը, խռնված մեծ դարրասի առաջ վրեժ եր գո-
ռում, իսկ քիչ հեռու, պարաեղի պատի տակին կանդնուծ
եր հաղթանգամ մի արար, սպիտակ բուռնուսը ուսե-
րին, ծխախոսը բերնին, մի աշքը կապած և հանդարու
կերպով փափուկ ավազն եր փորբիրում իր յերկար գա-
վազանի ծայրով: Դա Բնեն Արասն եր:

Ավագիսի մեռած ու թմրած կյանքը կարծես հան-
կարծ կենդանություն ստացավ: Արարներն ուրախ
ժպիտները թուխ գեմքներին, զրոսնում եյին: Ովագիսը
վորոշել եր տոնել ցեղապետներ Ել Զմշիդի և Ել Մամու-
սի աշխրաթների հաղթությունը: Յեվ քաղաքի արտր-
ները, յերբ հանդիպում եյին Ել Զմշիդի կամ Ել Մամու-
սի մարդկանց, բոնում փողոցում համբուրում եյին և
հյուրասիրում: Սրճարանները ծայրեծայր լիքն եյին,
յերաժշտությունը նվագում եր ամեն տեղ: Ամբողջ ո-
վագիսը, մեծ թե փոքր, հրեա թե արար, տոնախմբու-
թյան մեջ եր, իսկ ընդհանուր հրամանատարը վոստիկա-
նապետին և լրտեսներին վորոշ հրահանգներ տալուց հե-
տո, վասկվել եր իր առանձնատեսնյակում և վիրավոր գա-
ղանի նման մռնչալով, մտածում եր ինչպես հայտնի տյդ
մասին կենտրոնական կառավարությանը: Սա նշանա-
կում և իրենց վարած քաղականության կատարյալ սնան-
կացումը, բայց պետք եր հայտնել, ուրիշ վոչ մի հնար
չկար: Մանավանդ, վոր շրջանները գործուղված լրտես-
ները դրությունը բավականին «անմիտիթար» եյին ներ-
կայացնում:

Յերկար առաջու յետ ճեմելուց հետո, վերջապես
ընդհանուր հրամանատարը վորոշեց դեպքերը նկարա-
գրել նույնությամբ և սպասել նոր կարգադրություննե-
րի: Յեղապետ Բեն Ալին ովազիսում գրեթե չեր յերեսում:
Նա սաստիկ աղղվել եր ցեղապետ Ել Զմշիդի և ցեղապետ
Ել Մամուսի խայտառակ մահվան զետքից: Յեղապետ
Բեն Ալին սոսկում եր, յերբ միտքն եր ընկնում՝ ինչուս
վոտքերին պարան կապած քաշ ելին տալիս ցեղապետնե-
րի դիակները. նա արդեն կարծես իրեն եր տեսնում այդ
վողբալի դըության մեջ: Յեզ նա արդեն իր աշխաթից
ստացել եր ամենից ուժեղ ապատկը: Դա մի ահազանդ եր
ցեղապետ Բեն Ալիի համար:

Փառամոլ ցեղապետը վիրավորված մինչև իր հոգու
խորքը, կատաղի զազանի նման մոնչում եր և զանազան
ծրագրեր կազմում վրիժառության համար: Բայց ինչ-
պես, ահա այս միտքն եր, վոր ցեցի պես դանդաղ կըր-
ծում եր ցեղապետի սիրտը:

Սահարայի «դիանականը» նստած ալֆիրյան թան-
կագին գորդերի վրա, հենված մետաքսէ տաեղնադործ-
բարձերին, միսիթարում եր ցեղապետ Բեն Ալիին և իրաք
Հետեից պարպում համեղ ու քաղցր ոչարակի գավաթը:

Ովազիսն իրարացնման մեջ եր: Զինված ուահակը
իազում ե աջ ու ձախ. բարդու յերկար ծառուղու վրա
նկատվել են 25 «կասկածելի» արաբներից մի քանիսը,
վոտքից մինչև դլուխ զինված:

Յերեկոյան այդ մասին վոստիկանապետը մանրա-
մասն դեկուցեց բնդհանուր հրամանատարին, բայց նրան-
ցից վոչ վոքի չկարողացան ձերբակալել: Իսկ նրանք
անհայտացան, տուանց հետք թողնելու:

Անոտանելի տաք մի որ եր, շիկացած ավաղի վրա
վոտք դնել հնարավոր չեր. կարծես ամբողջ Սահարայի
տակը վառվում եր, շիկացնելով չոր ողբ: Ամբողջ ովտ-
զիսը կարծես անմարդարնակ մի կղզի յեր. վոչ
մի ձայն, վոչ մի շշուկ: Ամեն մարդ փակ-

զել եր իր ծածկի տակ, չնչում եր հազիվ հազ և այդ
ժամանակ Բալթազարը, տրախ ժպիտը յերեսին, ձեռ-
քերը ծայած, հանդիսա քայլերով յետ ու առաջ եր գնում
իր առանձնատենյակում, իսկ սեղանի մոտ նստած եր
ել Արար և յերկար մուշտուկից հանդարտ ծխում եր իր-
պապիրոսը: Ապստամբ բանակն արդեն վորոշ համաձայ-
նության եր յեկել ըմբոստ դուարեգների հետ. յերկար
ամիսների աշխատանքից հետո գուարեգները ևս միացան
ապստամբ բանակին: Այս լուրն աշխաթներում փըս-
փըսում ելին իրար ականջի: Մարոկկոյի լեռներում ըիֆ-
ները սպասում ելին ապստամբ բանակի ներկայացուցիչ-
ներին: Մարոկկոյի տղարնակչությունը զինվում եր
մեծ տեղով: Յերբ արարները հանդիպում ելին մի-
մանց ծարավների աշխարհում, իրար ջուր մաղթելու-
ճեկանությունից անմիջապես հետո այս լուրերն եր,
վոր մեծ գաղանապահությամբ հաղորդում ելին իրար
և արատավաթոր աչքերով իրենց թուխ յերեսները քսե-
րով իրար, բաժանվում ելին, սպասելով նոր որերին:
Բեն Արար կրկին մեկնեց... Բալթազարը զբաղված եր.
նու այնքան եր խորասուզված իր աշխատանքների մեջ,
վոր յերբեմն որերով նույնիսկ զբանենյակ չեր գնում,
հայտնելով ընդհանուր հրամանատարին, վոր հիվանդ ե:

Ամեն գիշեր, յերբ Սահարայի արեր մայր եր մըտ-
նում ե յերբ ովազիսը թաղված եր լինում խորը քնի մեջ,
Բալթազարը փաթաթված իր բուռնուսի մեջ, դուրս եր
գնում անից... Տուն եր վերապանում առավոտյան
վաղ, հանվում եր ու պառկում:

Ռվազիսը հետզհետէ կենդանություն եր ստանում:
Այդ հանդամանքը չափազանց ջղայնացնում եր ընդհա-
նուր հրամանատարին: Մի որ նա իրեն մոտ հավաքեց
շըշանի բոլոր նշանավոր հողատերերին: Հյուրասիրեց
նրանց և պաշտոնապես հայտնեց, վոր «Փրանսիական
հզոր կառավարությունը, ընդհանական վորոշ Փրանսիական
կալվածատերերի խնդրին, վորոշել և այս տարի նշան-
ցից վոչ մի սենթ հարկ չդանձել: Յեկ դու կլինի մի վոք»

բիկ նվեր նրանց, Փրանսիական կարլածատերերի կողմից, ի նշան համերաշխության և յեղբայրության: Կալվածատերերը չափազանց զգացված, խնդրեցին ընդհանուր հրամանաւորաբեն իրենց կողմից թարգման հանդիսանալ և իրենց յերախտապարտ շնորհակալությունները հայտնել Քրանսիական կարլածատերերին: Ընդհանուր հրամանատարը չմոռացավ հայտնել նրանց, վորքինքը վորոշել ե միջնորդել կենտրոնական կառավարության առաջ, վորպեսզի իրեն թույլ տան կրկնապատկերու նրանց կարլածածքները:

Արար հողատերերը ցրվեցին, և մի քանի որից հինգ հոգուց բազկացած մի պատգամավորություն յեկալ «բարի» հրամանատարի մոտ, ծանրաբեռնված զանազան թանկագին նվերներով, խնդրելով, վորքինդհանուր հրամանատարը շոապի ի կատար ածելու իր վորոշումը: Հարցը վերաբերում եր կարլածատերերի հողերը կրկնապատկերու խոսաման:

Բալթազարը փակված այն սենյակում, վորտեղ տնքում եր Մուսան իր ծանր ցավերի մեջ, խորասուզված ինչ-վոր գրում եր: Սպասավորը գուուը բազիսեց: Բալթազարը գուը յեկալ և դռան մոտ տեսավ Սյուզիին՝ ուսուցչուհուն: Բալթազարը շփոթվեց և խկույն իրեն զսպելով, խնդրեց ուսուցչուն ներս մտնել:

Սյուզին ժպտալով, սեղմեց Բալթազարի ձեռքը և նստեց գրասեղանի առաջ:

—Յեկել եմ խնդրելու, վոր այսոր յերեկոյան մեջ մոտ գաք թեյի:

—Ուրախությամբ, —պատասխանեց Բալթազարը, նույնպես ժպտալով:

Սյուզին պատմեց, վոր Ալալիան չափաղանց վաս և զգում իրեն, յոթ որ ե, ինչ պառկած ե, տառապում և անքնությամբ: Չնայած բժշկի նշանակած դեղերին, Ալալիան չի կարողանում քնել:

Բալթազարը գունատվեց և ակամայից հայացքը դարձրեց դեպի այն լուսամուտը, վորտեղից յերեսում եր

Այտլիայի ամբողը: Այուղին լուս եր: Լուս եր նաև Բալթազարը, բայց շփոթված ու ջղային:

Յերիտասարդ և գեղեցիկ իշխան Ել Զեմալը նշանակված եր ցեղապետ և արդեն մեկնել եր իր աշխատավայրը: Իոկ մի քանի որ առաջ անապատից յեկել եր ծերունի ցեղապետ Բեն Կասըմը՝ Ել Զեմալի հորյեղբայր՝ ցեղապետ Բեն Ալիից ինդրելու իշխանուհի Ալալիայի ձեռքն իշխան Ել Զեմալի համար:

Այուղիի զնալուց հետո Բալթազարը նորից ընկավ մտածմունքի մեջ, նու այնքան խճճված եր մտքերի մեջ, վոր զուրս գալու վոչ մի հնար չեր տեսնում: Բալթազարը մտավ Մուսայի սենյակը, վերջացըրեց գրությունը, ամուր փակեց իր պահարանում: բանալին գրպանը դրեց և իջավ ողարտեղ ու նստեց վարդերի ծառուղում գրված յերկար ու սպիտակ նստարանի վրա, կրկին անձնատուր լինելով իր մտքերին...

Նա վորոշեց յերեկոյան չգնալ թեյի Այուղիի մոտ. կարող և պատահել, վոր Ալալիան այնտեղ լինի: «Ավելի յալ ե խույս տամ նրան տեսնելուց: Ի՞նչ ոգուտ ունի այս բոլորը: Մի քանի որից կսկսվի Ալալիայի ամուսնության տոնակատարությունը, յոթ որ ու յոթ գիշեր կը թնդա ովազիսը և հետո ամեն ինչ նորից կմատնվի լուսության»...—մտածում եր նա, սակայն Ալալիայի պատկերը շարունակ նրա աչքերի առաջ եր:

— Ալա՛լիա, —մրմնջաց Բալթազարը, թողնելով որարտեղը:

Յերեկո յեր, տոթ և անտանելի յերեկո: Բալթազարը փակված իր սենյակում, ակամայից վերհիշեց իր անցած կյանքը և իր անցյալի հորիզոնի վրա տեսնում եր իր մանկության սիլուետը: Մի վորը յերեխա, թշվառության անողոք ճիրանների մեջ. հիվանդու մի քույր, վորի դեռ չփթթած փոքրիկ կուրծքը շարունակ չոր ու փոքրիկ հաղն եր կրծում. և այրի մայրը՝ արցունքի խոշը կաթիլները մարած աչքերից շարունակ կախված: Յերեք տանջվածներ տիսուր ու տրտում, չորս անշուք

պատերի մեջ ամփոփված հեծում ելին ծանր թշվառության տակ ճնշված։ Բալթաղարը չնշառապառ եր լինում։ Հանկարծ դուրս վազեց իր սենյակից, թարմ ոդ չնշելու։ Նա խեղղվում եր, նրա աչքերի առաջ կանգնած եր մայրը, վոր թաց աչքերով նայում եր գեղի տյն տռնր, ուր ամեն որ խրախճանք եր։

Բալթաղարի աչքերն ակամայից զարձան գեղի ել Ճեմալի սաղարթախիտ պարաեզրը։ Նա ցնցվեց և արագ քայլերով առաջ անցավ։ Նու փնտռում եր մեծ տարածություն, լայնածավալ հորիզոն, վորպեսլի կարողանար չնչել, չնչել լիառատ և աղատ։ Ամեն ինչ ճնշում եր Բալթաղարի կուրծքը, ամեն ինչ հիշեցնում եր նրան իր խղճուկ մանկությունը և ամեն ինչ չեցառում եր իր յերազների տխուրք հուզարկավորությունը։

Բալթաղարն արդեն բլուրի վրա յեր. նա սրբեց քրտինքը և նստեց մի քարի վրա և սկսեց նայել հեռու, հեռու, գեղի լայնածավալ ավաղի անսահմանությունը։ Բլուրի լանջում, իր վոտքերի տակ, տարածված եր ովազիսը, պատած սաղարթախիտ ծառերով, իոկ մեջտեղ ցցված եր մղկիթն իր կապույտ փերուզա մինարեյով և նրա կողքին՝ Ալալիայի դղյակը։ Բալթաղարի աչքերը չեյին հեռանում այդ կետից։ Նա փորձեց մի քանի անգամ հեռացնել հայացքը, բայց իզուր... Հանկարծ Բալթաղարը ցատկեց տեղից և սկսեց իջնել բլուրից։ Յերբ նա պետք է անցներ գպրոցի գուան առաջից, մի ներքին ուժ նրան մղեց Սյուզիի մոտ։

Բացվեց դուռը, Բալթաղարը ներս մատավ, բայց վայր չընկնելու համար անմիջապես բռնեց դռան մոտ դրված աթոռը և հազիվ լսելի ձայնով ասաց։—

— Ալա՛լիա...

Ալալիայի գունատ գեմքն ավելի գունատվեց։ Նու փորձեց բարձրանալ աթոռից, բայց վայր պիտի ընկներ, յեթե Սյուզին անմիջապես չըռներ։—Ռ'Հ, վորքան և փոխվել Ալալիան...—մտածեց Բալթաղարը, ուղիղ հայելով Ալալիային։

Սյուդին խոհանոցում զբազված եր թեյի պատրաստությամբ։ Սենյակում մնացել եյին իշխանուհին և Բալթաղարը, կոր սեղանի շուրջը նստած։ Հաղիվ գլուխը բարձրացնելով, Ալալիան նայեց Բալթաղարին և ձեռքը զրեց նրա վառվող ճակատին։

— Դու յե՞լ ես հիմանդ, —հարցրեց Ալալիան այնպիսի ձայնով, վոր Բալթաղարը պատրաստ եր այդ բոպեյին զվկելու Սահարայի իշխանուհու ճկուն իրանը և սեղմելու իր բազուկների մէջ։ Բալթաղարը դանդաղորեն բարձրացրեց իր աչքերը և հառեց Ալալիային։

— Ալո՞ւա... —մրմնջաց Բալթաղարը, իր դողդողջուն բազուկները տարածելով գեալի իշխանուհին։ Յերկու տառնջիած սրտեր այնքան արագ եյին բարախում իրաց կաթած, վոր մեկն զգում եր մյուսի սրտի բարախումը...։ Ալալիան նստած Բալթաղարի կողքին, իր թուխու գեղեցիկ ձեռքերով շոյում եր նրա վոսկեհեր և ալիքավոր մազերը։ Իսկ Բալթաղարը դլուխը թեքած Ալալիայի կրծքին մըմնջում եր։

— Ալալիա յես քեզ սիրում եմ... .

Իշխանուհին հանկարծ սարսափած աչքերով յետքաշեց ձեռքը, փակեց աչքերը, շուռ տվեց յերեսը և հոգիվ լսելի ձայնով ասաց։

— Սև ոճը... .

Այն որժանից, յերբ անտառում Բալթաղարը և Ալալիան գրկախառնված եյին և նրանց մոտ սողաց սե ոճը, այդ որժանից Ալալիան հանգիստ չուներ։ Սև ոճը շարունակ նրա աչքերի առաջ եր։ Մնութիւնապաշտ արաբուհին չեր կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր ԱՓրիկան ոճերի աշխարհ ե վոր ոճի կարելի յե հանդիպել ամեն տեղ և ամեն պարագաներում։

— Վոչ, ինչու հենց այն ըռպեյին, յերբ յես իմ ոռաջին համբույրն եյի տալիս, յերբ յես իմ սիրո ուխտն այլի կնքում, յերբ յես իմ կուսական զգացմունքների նուրբ կծիկն եյի բացում։

Սև ոճը դառել եր մի աներեւակայելի և ծանր կոշ-

մար Ալալիայի համար։ Նա հետեւում եր նրան ամեն տեղ. նա խլել եր Ալալիայի քունը, նա մարել եր Ալալիայի թուխ աչքերի մեջ պարող ժպիտը։

«Սև ոճը»... կրկնում եր հաճախ Ալալիան և ամբ բողջ մարմնով կծկվում, սառչում, կարծես նա արգեն խոկապես կանգնած և սև ոճի առաջ և թունավոր սողունն իր ասեղանման լեզվով սպառնում եր Ալալիային՝ իր ուժեղ թույնը սրսկելու նրա յերակների մեջ։

«Սև ոճը»...—աղաղակում եր հանկարծ Ալալիան լնդապատառ և ընկնում եր պառափ դայակի զիրկի ու ստրսափը փարատում արցունքներով։ Պառափ դայակը դործադրեց այն բոլոր տնայնազործական միջոցները, ինչ վոր գտնվում եր Սահարայի կողեքսում, հեռացնելու այդ ծանր կոշմարը Ալալիայից, բայց չեր հաջողվում։ Սև ոճը բուն եր դրել չքնաղ արաբուհու կուսական կրծքի տակ և Ալալիան նրանից չեր կարողանում աղատվել։ Սև ոճն իր սառը մարմնով սառեցնում եր Ալալիայի մարմինը...»

«Թոսել Ալալիայի հետ... նախապատրաստել նրան... թե թողնել, վոր խնդիրները լուծվեն իրենց բնական ճանապարհով...» Բալթազարը սիրում եր Ալալիային. բայց սիրում եր ավելի և այն գործը, վորի համար մահվան եր դատապարտված Մորիսը: Ալալիան չքնաղ եր, գեղեցիկ եր, Ալալիան իր ամբողջությամբ սեր եր սերերի մեջ, նա իր նուրբ մարմնով ու խորը սերավշյա աչքերով միակն եր ամբողջ Սահարայում: Իշխանուհի յեր Ալալիան իր ամբողջ եյությամբ: Փառք, հարստություն, մեծություն, այդ բոլորը չափազանց խորը կերպով եյին ներծծվել նրա մեջ: Յեզ նրան սիրում եր Բալթազարը... Բալթազարը սիրում եր Ալալիային, բայց և Բալթազարը, ինչպես մի անողոք դատավճոր, Ալալիայի իշխանական տոհմի մահվան դատավճիռն ուներ իր ձեռքում: Իշխան Բեն Ալին, Ալալիայի հայրը, պետք և մեռներ, վորովհետեւ նրա արյունն անհրաժեշտ եր հեղափոխության համար:

Յեղապետ Բեն Ալին պետք է մեռներ, դուցե և նու արյունաքամ գետին տապալվեր հենց Բալթազարի ձեռքով: Բալթազարը մի բոպե անդամ չեր տատանվի իր ձեռքերն արյունոտել դազան ցեղապետի արյունով... և հետո այդ արյունոտ ձեռքերով Բալթազարը պետք է դրկեր Ալալիայի սքանչելի իրանը:

Կարո՞ղ եր այդ գրության հետ հաշտվել Ալալիան:

Բալթազարն որերով մտածում եր այս մասին: Բալթազարի սերը մաքուր եր դեպի գեղեցիկ Ալալիան, Ալալիան ոդի չափ անհրաժեշտություն եր դառել Բալթազարի համար, բայց ինչպե՞ս հաշտեցնել այս յերկու ծայրերը, վոր իրարից շատ հեռու եյին գտնվում:

Եատ հաճախ Բալթազարը մտածում եր կտրել իր բոլոր կապերը Ալալիայի հետ, մոռանալ նրան, չմտածել նրա գրյության մասին, հանել նրա ուրվականն իր մտա-

պատկերից, համոզել ինքն իրեն, ներշնչել, վոր մոռանա
Ալալիային: Յերբեմն նա սաստիկ զայրանում եր իր դեմ,
վոր այդպիսի կարեոր մոմենտում, յերբ ամբողջ Սահա-
րայի «լինել չլինելու» հարցն ե դրված, ինքը տարվել եր
Ալալիայի սիրով: Սակայն անցնում եյին առողջ մտա-
ծության ըստեները և կրկին Ալալիան տիրապետում եր
նրա սրտին:

— Ալալիա . . . — մըմնջում եր, հառաչելով Բալթաղարը
և անձնատուր լինում իր քաղցր յերազների շարանին:

Ալալիան ել իր հերթին տանջվում եր բառիս բուն ի-
մաստով. այդ մասին մանրամասն պատօմել եր Սյուզին:
Ալալիան սիրում եր Բալթաղարին, սիրում եր իր զգա-
ցումների ամբողջ բովանդակությամբ:

Ալալիան սիրում եր և լալիս . . . նա գիտեր անապա-
տի որենքները, գիտեր մահմեղական շարիաթի խօսու-
թյունը, սակայն Ալալիայի սերն այլիս չեր ճանաչում.
վոչ որենք, վոչ դորան կամ շարիաթ:

Արարական կեռ գաշյունի սարսափել Ալալիան վա-
գուց եր մոռացել, գազան հոր վրեժինդրության գաղա-
փարը նույնպես այլևս չեր ապդում Ալալիայի մտքերին:
Արերով Ալալիան մնում եր կանգնած այն լուսամուտի
առաջ, վորտեղից յերեսում եր Բալթաղարի վիլան: Նա-
րում եր նա, նայում և շնչում եր հեռու պարտեղի մեջ
ընէած վիլլայի ուղը:

Ալալիան ավըրում եր միայն Բալթաղարի համար:

Ել Զեմալը դեռ հույսը չեր կորցրել: Ծերունի իշ-
խան Բեն Կասըմը վերջին անդամ ահագին հարստու-
թյուն եր խոստացել իշխան Բեն Ալիին, վորպեազի վեր-
ջինս համաձայնի գեղեցիկ Ալալիային իր հանգուցյալ
յեղբոր տղային տալու: Սակայն իշխան Բեն Ալին մնաց
անդըրդվելի:

«Բայց ինչո՞ւ . . . »—ահա այս միտքն եր, վոր կը-
ծում եր Բալթաղարի ուղեղը:

Վերջապես յեկավ Մորիսի սուրհանդակը:

«Շեյխ Ռուֆուլամն այժմ գտել ե իր հավատաքիմ ընկերը, — զբում եր Մորիսը: — Դա ձեր ովազիսի ցեղապետ Բեն Ալին ե: Շեյխը ցեղապետին խոստացել ե ապօգա կրոնական կայսրության մեջ գտնվող Որանի նահանգը, իսկ ցեղապետը նրան խոստացել ե իր աղջկան: Շեյխը և Բեն Ալին վորոշել են նախ հարձակվել բերդի վրա, գրավել ե հետո միացյալ ուժերով դիմադրել մեղ:

«Պետք ե ոգտվել ընդհանուր հրամանառարկ տրամադրությունից և անմիջապես հարձակվել Շեյխի բանակի վրա: Յեթե զու կարողանաս Շեյխի բանակը ջախջախել, զրանով ապահոված կլինես մեր հաղթությունը Մարտկոյում: Մենք ուժեղ թափով կազմակերպվում ենք, բայց մեզ համար չափազանց դժվար կլինի կոմիլ յերկու ճակատում. հետևապես պետք ե միջից հանել կրոնապետին...»

— Ահա թե ինչու ցեղապետ Բեն Ալին մերժում և Ալալիային տալ իշխան Ել Զեմալին, — մտածեց Բալթոգարը, նամակը վերջացնելով: — Նա Ալալիային պահում է Շեյխ Ռուֆուլամի համար, վոր նրանից ստանա Որանի նահանգը:

Հետևյալ որը խորհրդի գահին մտածում Բալթազարը մանրամասն զեկուցեց իր ծրագիրը, պահանջելով անմիջապես դուրս գալ անապատ և ջախջախել Շեյխ Ռուֆուլամին: Մրագիրն ընդունվեց և գործողությունը հանձնարարվեց Բալթազարին:

Նույն գիշեր Բալթազարը յերկար խոսեց Բեն Ալիսի

հետ, վորոշելով ընկերների խորհրդակցություն հրավիրել:

Մութ գիշեր եր. այնպիսի գիշեր, վորի նմանը Սահարայում հաղվագյուտ ե լինում: Ամրոցի շուրջը համբքայի լեռով պտտում եյին «Հավատարիմ» պահապանները, մերթ ընդ մերթ իրենց սուլոցներով աղղարարելով քնած ցեղապետին, վոր ամրոցի շուրջը խաղաղ է: Բեն Արաւը յերկար փայտը ձեռքին, նույպես հսկում եր ամրոցին պահպանների հետ, իսկ Բեն իսմայիլը հսկում եր այն ճանապարհը, վորով Բալթազարը պետք ե դնար իշխանուհի Ալալիայի մոտ:

Մութ ու նեղ զետնափոր անցքերից անցնելով, վերջապես Բալթազարն իշխանուհու սենյակումն եր. Ալալիան այնքան եր հուզված և ուժասպառ, վոր հազիվ կարողացավ մի քանի քայլ անել և իրեն նետել Բալթազարի բազուկների մեջ:

... Յերկար ժամերն անցան ինչպես ըուպեներ, բայց Բալթազարը գեռ. վոչինչ չեր ասել Ալալիային: «Ասե՞լ թե վոչ, —մատածում եր Բալթազարը: —Թե՞ ավելի լավ ե թողնել խնդիրները լուծվեն իրենց բնական ուղիով: Ինչպես յերեւում եր, Ալալիան վոչ մի տեղեկություն չուներ իր փառամոլ հոր ծրագրերի մասին:

«Վոչ, չպետք ե ասել, —վճռեց Բալթազարը: —Յեթե հայրն իմանա, վոր աղջիկը գիտե իր գաղտնիքը, նա ընդունակ ե անմիջապես կապուել չքնաղ Ալալիային և գիշերով ուղարկել Շեյխին»:

Արշալույսը լացվում եր, յերբ Բալթազարը վերադարձավ իր վիլան և առաջին դործը յեղալ Մորիսին հայտնել Շեյխի վրա հարձակվելու մասին:

հետ, վորոշելով ընկերների խորհրդակցություն հրավիրել:

Մութ գիշեր եր. այնպիսի գիշեր, վորի նմանը Սահարայում հաղվագյուտ ե լինում: Ամրոցի շուրջը համբքայի լեռով պտտում եյին «Հավատարիմ» պահապանները, մերթ ընդ մերթ իրենց սուլոցներով աղղարարելով քնած ցեղապետին, վոր ամրոցի շուրջը խաղաղ է: Բեն Արաւը յերկար փայտը ձեռքին, նույպես հսկում եր ամրոցին պահպանների հետ, իսկ Բեն իսմայիլը հսկում եր այն ճանապարհը, վորով Բալթազարը պետք ե դնար իշխանուհի Ալալիայի մոտ:

Մութ ու նեղ զետնափոր անցքերից անցնելով, վերջապես Բալթազարն իշխանուհու սենյակումն եր. Ալալիան այնքան եր հուզված և ուժասպառ, վոր հազիվ կարողացավ մի քանի քայլ անել և իրեն նետել Բալթազարի բազուկների մեջ:

... Յերկար ժամերն անցան ինչպես ըուպեներ, բայց Բալթազարը գեռ. վոչինչ չեր ասել Ալալիային: «Ասե՞լ թե վոչ, —մատածում եր Բալթազարը: —Թե՞ ավելի լավ ե թողնել խնդիրները լուծվեն իրենց բնական ուղիով: Ինչպես յերեւում եր, Ալալիան վոչ մի տեղեկություն չուներ իր փառամոլ հոր ծրագրերի մասին:

«Վոչ, չպետք ե ասել, —վճռեց Բալթազարը: —Յեթե հայրն իմանա, վոր աղջիկը գիտե իր գաղտնիքը, նա ընդունակ ե անմիջապես կապուել չքնաղ Ալալիային և գիշերով ուղարկել Շեյխին»:

Արշալույսը լացվում եր, յերբ Բալթազարը վերադարձավ իր վիլան և առաջին դործը յեղալ Մորիսին հայտնել Շեյխի վրա հարձակվելու մասին:

Բանակը մեծ պատրաստության մեջ եր: Լցնում ելին չըի տիկերը, մաքրում ելին դաշտային թնդանոթները և սղանարաստում վրանները: Գումակի առաջին շարանն արդեն ճանապարհ եր ընկել. մեկնել եր և հետախույզ վաշտը: Բալթազարը պիտի մեկներ հետեւալ որը: Բեն Աբասը և Բեն Խամայիլը մհալու ելին ովազիսում, Հոկելու ցեղապետին: Բալթազարը մեկնելուց առաջ ընտրել եր ռազմահեղափոխական կոմիտե և գործը հանձնել նրանց: Նա վստահ եր, վոր իր բացակայությունը չի աղդի գործի ընթացքի վրա:

Բալթազարը բանակի դլուխա անցած, նոր եր դուրս յեկել ովազիսից, վոր հանկարծ նկատեց բարդի ծառերի տակ Ալալիային, իր նամականերով: Նա կանգնած բարձր ծառի տակ, արտառվաթոր աչքերը հառել եր Բալթազարին: Բալթազարը մի րոպե կորցրեց իրեն. բայց անմիջապես զապեց և իր ժպտուն հայացքը դարձրեց Ալալիային: Յերաժշտության նվազի տակ բանակն առաջ եր շարժվում, իսկ Բալթազարը հայացքը հառած Ալալիային՝ զնում եր բանակի առաջից:

Հանկարծ Ալալիան բարձրացրեց ձեռքը, Բալթազարին թվաց, վոր նա ամբողջ ուժով իրեն և կանչում, սահայն թույլ ճիչ լսվեց և Ալալիան գետին փռվեց...

Յերաժշտությունը նվազում եր, բանակն առաջ եր շարժվում և Բալթազարը դնում եր բանակի առաջից մերկացրած սուրը ձեռքին, իսկ հայացքը դեպի այն բարձր բարդին, վորի տակ ուշաթափ ընկած եր Ալալիան:

Բանակը մեծ պատրաստության մեջ եր: Լցնում ելին չըի տիկերը, մաքրում ելին դաշտային թնդանոթները և սղանարաստում վրանները: Գումակի առաջին շարանն արդեն ճանապարհ եր ընկել. մեկնել եր և հետախույզ վաշտը: Բալթազարը պիտի մեկներ հետեւալ որը: Բեն Աբասը և Բեն Խամայիլը մհալու ելին ովազիսում, Հոկելու ցեղապետին: Բալթազարը մեկնելուց առաջ ընտրել եր ռազմահեղափոխական կոմիտե և գործը հանձնել նրանց: Նա վստահ եր, վոր իր բացակայությունը չի աղդի գործի ընթացքի վրա:

Բալթազարը բանակի դլուխա անցած, նոր եր դուրս յեկել ովազիսից, վոր հանկարծ նկատեց բարդի ծառերի տակ Ալալիային, իր նախթիշաններով: Նա կանգնած բարձր ծառի տակ, արտառվաթոր աչքերը հառել եր Բալթազարին: Բալթազարը մի րոպե կորցրեց իրեն. բայց անմիջապես զապեց և իր ժպտուհ հայացքը դարձրեց Ալալիային: Յերաժշտության նվազի տակ բանակն առաջ եր շարժվում, իսկ Բալթազարը հայացքը հառած Ալալիային՝ զնում եր բանակի առաջից:

Հանկարծ Ալալիան բարձրացրեց ձեռքը, Բալթազարին թվաց, վոր նա ամբողջ ուժով իրեն և կանչում, սահայն թույլ ճիչ լսվեց և Ալալիան գետին փռվեց...

Յերաժշտությունը նվազում եր, բանակն առաջ եր շարժվում և Բալթազարը դնում եր բանակի առաջից մերկացրած սուրը ձեռքին, իսկ հայացքը դեպի այն բարձր բարդին, վորի տակ ուշաթափ ընկած եր Ալալիան:

Բանակը մեկնելուց հետո ցեղապետն իսկույն իր մոռ
կանչեց Աահարայի «գիտնականին»։ Բեն Ալին յերբեք
չեր կարող յերևակայել, վոր զորքն այդքան չուտ կարող
եր ճանողարհ ընկնել։ Նա նույնիսկ ժամանակ չունեցավ
այդ մասին նախորոք հայտնելու Շեյխին։

— Պետք ե անմիջապես լուր տալ Շեյխին, — առաջ
զգիտնականը» ցեղապետ Բեն Ալիին։

Նույն գիշեր սուրհանդակը Շեյխի անունով գրած
նամակը ծոցում, համբուրեց ցեղապետի ձեռքն ու ճանա-
պարհ ընկալի։ Բայց նա շատ հեռու չզնաց։ Բեն Արասի
մի աչքից խույս տալը դժվար եր։ Սուրհանդակի գիակը.
տաք ովազիսում խորը թաղելուց հետո, Բեն Արասը հան-
գիստ կերպով նամակը տեղավորեց իր ծոցում և յերկար
փայտի ծայրով փիսրուն ավազը փորփորելով, Ել Իսմա-
յիլի և յերեք այլ ընկերների հետ վերապարձան ովազիո։

Բեն Արասը պաշարել եր ցեղապետի ամրոցը. նու տ-
շալուրջ հետեւում եր բոլոր նրանց, ովքեր գնում և զա-
լիս եյին ցեղապետի մոտ։ Մի գիշեր շատ ուշ ժամա-
նակ, յերեք հոգի կամենում եյին ցեղապետի ամրոցը
ժամնել։ Պահակը հարցաքննում ե, բայց նրանք չեն պո-
տասխանում։ Բեն Արասը գլխի ընկնելով նրանց ովլ լի-
նելը, անմիջապես վորոշում ե ընդունել։

— Ցեղապետը քնած ե, — ասում ե նա նրանց, — բայց
ինձ պատվիրել ե, վոր յեթե դուք դաք, ձեզ հյուրասի-
րեմ և թաղցնեմ, մինչև ինքը ձեղ ընդունի։

— Բայց շատ կարենոր ե, մենք պետք ե նրան տես-
նենք հենց այս բոսելիս, — ասում են յեկվորները։

— Իսկ մեզ հրահանդել ե, վոր ինքը հիվանդ ե և ի-

Բանակը մեկնելուց հետո ցեղապետն իսկույն իր մոռ
կանչեց Աահարայի «գիտնականին»։ Բեն Ալին յերբեք
չեր կարող յերևակայել, վոր զորքն այդքան չուտ կարող
եր ճանողարհ ընկնել։ Նա նույնիսկ ժամանակ չունեցավ
այդ մասին նախորոք հայտնելու Շեյխին։

— Պետք ե անմիջապես լուր տալ Շեյխին, — առաջ
զգիտնականը» ցեղապետ Բեն Ալիին։

Նույն գիշեր սուրհանդակը Շեյխի անունով գրած
նամակը ծոցում, համբուրեց ցեղապետի ձեռքն ու ճանա-
պարհ ընկալի։ Բայց նա շատ հեռու չզնաց։ Բեն Արասի
մի աչքից խույս տալը դժվար եր։ Սուրհանդակի գիակը.
տաք ովազիսում խորը թաղելուց հետո, Բեն Արասը հան-
գիստ կերպով նամակը տեղավորեց իր ծոցում և յերկար
փայտի ծայրով փիսրուն ավազը փորփորելով, Ել Իսմա-
յիլի և յերեք այլ ընկերների հետ վերապարձան ովազիո։

Բեն Արասը պաշարել եր ցեղապետի ամրոցը. նու տ-
շալուրջ հետեւում եր բոլոր նրանց, ովքեր գնում և զա-
լիս եյին ցեղապետի մոտ։ Մի գիշեր շատ ուշ ժամա-
նակ, յերեք հոգի կամենում եյին ցեղապետի ամրոցը
ժամնել։ Պահակը հարցաքննում ե, բայց նրանք չեն պո-
տասխանում։ Բեն Արասը գլխի ընկնելով նրանց ովլ լի-
նելը, անմիջապես վորոշում ե ընդունել։

— Ցեղապետը քնած ե, — ասում ե նա նրանց, — բայց
ինձ պատվիրել ե, վոր յեթե դուք դաք, ձեզ հյուրասի-
րեմ և թաղցնեմ, մինչև ինքը ձեղ ընդունի։

— Բայց շատ կարենոր ե, մենք պետք ե նրան տես-
նենք հենց այս բոսելիս, — ասում են յեկվորները։

— Իսկ մեզ հրահանդել ե, վոր ինքը հիվանդ ե և ի-

բնն նեղություն չարվի պիշեր ժամանակ, այլ սպասել մինչև տռավիոտ։ Մենք արդեն ձեզ համար պատրաստել ենք ամեն ինչ. կարող եք գալ ինձ հետ, —հայտնեց մի աշխանկ Բեն Արասը, ուղիղ նայելով յեկվորներին։

Եեկվորները տատանվում եյին։

— Դուք շտապեցեք, շուտով լույսը կրացվի և շատ անհաճո բան կլինի, յեթե ընդհանուր հրամանատարի յրտեսները ձեզ անոնեն։

Լրահսների հետ հանդիպելու հեռանկարն, ըստ յերեվույթին, նրանց չեր ժպառում, ուստի նրանք տեղի տվիցին, և արդեն հավատացած Բեն Արասին, հետեւցին նրան։

Նույն որը հեթ պատղամավորներն անհայտացան և Բեն Արասը նրանց բերած կարեւոր դրությունները՝ Շեյխի կողմէց ցեղապետ Բեն Ալինն դրած՝ անհապաղ հասցրեց Բալթաղարին։ Իսկ ցեղապետ Բեն Ալին անհամրեց սպասում եր Շեյխ Ռւլ-Խուլամի հաղորդագրության, իր հետագա անելիքը վորոշելու համար։

Ալալիան հիվանդ եր։ Բալթազարի մենկնելու որը ուշաթափիվելուց հետո, նա անկողին եր ընկել և այրու չեր վեր կենում։

Սահաբայում կանանցը փակ և նույնիսկ բժիշկների համար, բայց այս անգամ ցեղապետը՝ Ռյուզիի և ուրիշների մնշման տակ, համաձայնվել եր բժշկի այցելության։

Սահաբայի բժշկի դեղերն իդուք եյին անցնում։

Ալալիայի միակ մխիթարությունն այդ լայնածավալ անսահմանության մեջ Այուզին եր, վորովհետեւ նա միայն Այուզիի հետ կարող եր աղատ խոսել Բալթաղարի մասին։

Աշխաթը վերջերս տարորինակ կերպով հանդիսաւ եր. վոչ մի բողոք և վիճ գոյություն չուներ։ Այդ հանգամանքը չափաղանց զարմացնում եր ընդհանուր հրամանատարին։

«Ի՞նչ և պատահել...»—շարունակ հարց եր տալիս ընդհանուր հրամանատարն ինքն իրեն։

բնն նեղություն չարվի պիշեր ժամանակ, այլ սպասել մինչև տռավիոտ։ Մենք արդեն ձեզ համար պատրաստել ենք ամեն ինչ. կարող եք գալ ինձ հետ, —հայտնեց մի աշխանկ Բեն Արասը, ուզիղ նայելով յեկվորներին։

Եեկվորները տատանվում եյին։

— Դուք շտապեցեք, շուտով լույսը կրացվի և շատ անհաճո բան կլինի, յեթե ընդհանուր հրամանատարի յրտեսները ձեզ անոնեն։

Լրահմների հետ հանդիպելու հեռանկարն, ըստ յերեվույթին, նրանց չեր ժպառում, ուստի նրանք տեղի տվիցին, և արդեն հավատացած Բեն Արասին, հետեւցին նրան։

Նույն որը հեթ պատղամավորներն անհայտացան և Բեն Արասը նրանց բերած կարեւոր դրությունները՝ Շեյխի կողմէց ցեղապետ Բեն Ալինն դրած՝ անհապաղ հասցրեց Բալթաղարին։ Իսկ ցեղապետ Բեն Ալին անհամրեց սպասում եր Շեյխ Ռւլ-Խուլամի հաղորդագրության, իր հետագա անելիքը վորոշելու համար։

Ալալիան հիվանդ եր։ Բալթազարի մենկնելու որը ուշաթափիվելուց հետո, նա անկողին եր ընկել և այրու չեր վեր կենում։

Սահաբայում կանանցը փակ և նույնիսկ բժիշկների համար, բայց այս անգամ ցեղապետը՝ Ռյուզիի և ուրիշների մնշման տակ, համաձայնվել եր բժշկի այցելության։

Սահաբայի բժշկի դեղերն իդուր եյին անցնում։

Ալալիայի միակ մխիթարությունն այդ լայնածավալ անսահմանության մեջ Այուզին եր, վորովհետեւ նա միայն Այուզիի հետ կարող եր աղատ խոսել Բալթաղարի մասին։

Աշխաթը վերջերս տարորինակ կերպով հանդիսաւ եր. վոչ մի բողոք և վիճ գոյություն չուներ։ Այդ հանգամանքը չափաղանց զարմացնում եր ընդհանուր հրամանատարին։

«Ի՞նչ և պատահել...»—շարունակ հարց եր տալիս ընդհանուր հրամանատարն ինքն իրեն։

Սահմանի արյունոտ պատմության մեջ յերբեք այսպիսի դեպք չեր յեղել, վոր Փրանսիացիք կռվի գուրս գային հայտնի կրոնապետի դեմ, վորը «սուրբ» ղորանը ձեռքին սըրազան պատերազմ եր հայտարարել և ժողովուրդն այսքան անտարբեր մնար այդ յերեւութիւ հանդիպ:

Յեղապետները մեկը մյուսից անկախ, աշխատում ելին ժողովրդի այդորինակ անտարբերությունը դեպի «սըրազան» պատերազմը, վերագրել այն անդուլ աշխատանքներին, վոր իրենք տարել են աշխաթներում, խորացնելով իրենց հավատարմությունը: Ընդհանուր հրամանատարը լուս եր այդ բոլորը, սակայն նա չեր հանդրատանում: Նա զգում եր, վոր ինչ-վոր մի բան ե կատարվում, վորի մասին չգիտե ինքը, չգիտեն նույնազետ չեղապետները:

Բալթազարի բանակն անապատում խթամատներ եղ գորսում, ամբացնում փշալարերն ու վրաններ բացում:

Եեյխ Ուլ-Խոլամը հանկարծակի յեր յեկել. նա յերբեք չեր սպասում, վոր թշնամին այդքան շուտափույթ անտպատ դուրս կդար:

Հետախույզ խումբը լեյտենանտ Ռիշի առաջնորդությամբ ուսումնասիրեց Եեյխի բանակի դիրքերը.

— Սկսենք, — ասաց լեյտենանտ Ռիշը :

— Սկսենք, — պատասխանեց Բալթազարը:

Կոխին սկսվեց: Վորոտացին դաշտային թնդանոթները: Եեյխի բանակն սկզբում շփոթվեց, բայց շուտով ուշքի գալով կատաղի կրակ բացեց: Եեյխի բանակի առաջին գունդն համարյա վոչնչացավ: Տաք ավաղի վրա թափված եյին հարյուրավոր վիրավորներ և սպանվածներ: Բայց մնացածները կովում եյին արտակարգ վողեփորությամբ:

— Մահամեդը ուսուլ: . . . — բացականչում եր կրոնապետ Հրամանատարը և նրան արձագանդում եր ամբողջ բանակը, վոնալով:

«Մահամեդը ուսուլ» . . . և գրոհում եյին, սակայն դեռ մի քանի քայլ չարած, հնձվածի պես վուվում եյին տաք ավաղի վրա: Յել շարունակ նորերն եյին գալիու սպանվածների տեղը բռնելու, կարմրած աշքերով ու կրօնական աղոթքներ մբմնջալով:

— Կրակ. . . — Հրամայում եր Բալթազարն իր բանակին: Դաշտային թնդանոթներն արյուն եյին փսխում:

Եեյխի բանակը գտնվում եր Բալթազարի թնդանոթների սակ. նա վոչ մի կերպ առաջ շարժվել չեր կա-

բող: Բայց կրոնապետ Շեյխը համառ եր և ինքնավըստահ:

Ահա դալիս են նոր խմբեր, առջևից բռնած զորանը և Մահմեդի կանաչ գրոշակը: Գալիս են նրանք հիպնոսված և վերացած, կրոնական աղոթքներ յերգելով: Գալիս են նրանք աչքերն հառած դեմքի յերկինք և անդգայցած: Գալիս են նրանք Մահմեդի անունը փառաբանելով:

Բալթաղարը դիտում եւ այդ մարդկային հզոր զանդվածը հեռադիտակը ձեռքին և յերբ մոտենում են նրանք, հրամայում ե.

— Կրակ...

Թնդանոթները կրկին վորոտում են, իրենց մահացունչ ճայնով դղրդացնելով անապատի անսահմանությունը:

Շեյխը պարտված ե. նա նահանջի նշան և տալիս: Թնդանոթները լուսում են: Շեյխը յետ և նահանջում և կարդի յերթում իր նոսրացած բանակը, նոր ճակատամարտի համար: Բալթաղարը նույնական դասավորում ե իր բանակը, հետախույզների միջոցով հետևելով Շեյխի պատրաստություններին:

Ուսավելով գիշերվա խավարից, Շեյխը կրկին հարձակողականի յերթում ավելի ստվար բանակով ու ավելի մեծ յեռանդով: Բայց իդուր:

Նորանը և Մահմեդը չեն կարողանում լուցնել վոչ թնդանոթները և վոչ ել գնդացիրները: Շեյխը հսկագունեց տալով, աշխատում եր Բալթաղարի թիկունքն անցնել, վորպեսզի կտրի նրա հաղորդակցությունն ընդհանուր բաղայի հետ:

Շեյխի ուժը թուլանում եր, յերբ նրանց ոգնության հասան իրենց կանայք, վորոնք առաջ եյին դալիս իրենց ամուսինների հետ, շարունակ վողեվորելով նրանց: Բալթաղարը մի բոպե չփոթվեց: Լեյտենանտ Բիշը նույնպես, տեսնելով կանանց բազմաթիվ խմբերը, մի բոսէն կանգ առավ: Բալթաղարի մեջ մի վայրկյան արթ-

նացավ մարդասիրությունը: Կանանց խնայելը և նման
հին բուրժուական լիրերավազմը մի բոլե շփոթեց Բալ-
թաղարին, բայց հիշեց Մորիսին, հիշեց, վոր Շելիսի
պարտությունից և կախված Մորիսի վարած հեղափո-
խական կոփովը և սթափվեց:

— Կրակ!... — բացականչեց Բալթազարը:

Կոիվը կատաղի յեր յերկու կողմից, զոհերի թիմին
անթիվ: Նրանք մեռնում եյին աննպատակ, բայց հե-
րոսարար:

Շելիսը չեր հուսահառվում. նա կրկնում եր հարձա-
կումները, մերթ աջ, մերթ ձախ թևի վրա, մերթ կենու-
րոնից:

Շեյխը մտածում եր զոհերի թվով թուլացնել Բալ-
թաղարի ռաժը:

Ուշ դիշեր եր: Շեյխի բանակը յետ նահանջեց: Բալ-
թաղարի թնդանոթները և գնդացիրները լուեցին: Տիրեց
խաղաղություն: Անապատը կրկին մատնվեց իր խոր-
հըրդավոր լուսթյան:

Յերեք որ եր՝ թշնամին լուռ եր: Անապատում, տաք
ավաղի վրա թափված դիակները տարրալուծվում եյին
և գարշահոտ եր կանգնած չորս բոլորը: Հարյուրավոր
վիրավորներ մնացել եյին անխնամ և նրանց աղեկառուր
ոգնության կանչեր մնում եյին անպատասխան:

Բանակները ճակատել եյին միմյանց դեմ և լուռ
սպասում եյին, ուշադիր զննելով միմյանց շարժումնե-
րը: Պատրաստվում եյին վճռական դրոհի:

Շեյխ Ուշիսլամի համար այդ կոփովն ամենից
վճռական եր, վորովհետև հաղթվելու դեպքում նա գի-
տեր, վոր կորցնելու յե ամեն ինչ. վոչ միայն իր ծրա-
դիրը, վոչ միայն թագավորությունը, այլ և իր կյան-
քը: Այսպես և Սահարայի որենքը. հաղթվողը ներում
չունի: Ուստի նա մանրամասն ուղմական նոր ծրագիր
եր մշակում ֆրանսիական բանակը չորս կողմից շրջա-
պատելու, վորպեսզի ամեն կողմից միաժամանակ գրո-
հելով, հարկադրի Բալթազարին անձնատուր լինելու:

Յեկ այն ժամանակ, յերբ Ֆրանսիական քանակում
լիտավորներին հավաքելու գործով եյին դրազված և
շտապ կարդի բերած դաշտային հիվանդանոց եյին փո-
խադրում նրանց, Շեյխ Ռուֆիալամը վերսկսեց իր հարձա-
կումը, այս ազամ չորս կողմից: Բալթազարը նույնպես
պատրաստ եր, ուսկայն յեթե պաշարողական դրությունը
յերկար տևեր, ջրի պաշարը չեր բավականացնի: Բայց
մյուս կողմից ել այդպիսի ցըված գրությամբ հակա-
դրոհի դիմել, նշանակում եր պատահականության
մատնիւ և Շեյխի հաղթության հնարավորություն-
ներն ավելացնել: Մնում եր սպասել, մինչև թշնամին
ավելի մոտ գտ, նեղացնելով ողակը, յերբ վճռական
հարձակումով հնարավոր կիմնի յետ չպրտել նրան և ճա-
նապարհ բացել դեպի ովաղիս և կապվելով բաղայի
հետ, ջուր և ողնական ուժ ստանալ: Այդ ծրագիրը լեց-
տենանտ Ռիշին թեպետ խելամիտ եր թվում, սակայն
ջրի պահասության պատճառով ապագան նրան ավելի
վատ դույներով եր պատկերանում:

Շեյխ Ռուֆիալամը հետզհետե սեղմում եր ողակը և
ավելի ու ավելի յեր մոտենում Բալթազարին: Շեյխի
բանակի մեջ պարզ նկատվում եր վոգենորություն և ու-
րախություն՝ մոտալուտ հաղթանակի համար:

Ֆրանսիական բանակի շրջապատվելու լուրը դադտ-
նի շըուկով պատում եր ովաղիսում: Լուրերը հասան
նաև Ալալիային, վորը դեռ չեր վեր կացել անկողնուց: Բալթազարի կյանքը վտանգված է, — այս միտքը խորը
տառապանք եր պատճառում Ալալիային և նա մեկը
մյուսից սոսկալի պատկերներ եր յերեակայում: Նրա
հուսահատությունը ծայրահեղության եր հասել:

— Տես, Այուղի, — ասաց մի որ Ալալիան ուսուցչու-
հուն, ցույց տալով մի փոքրիկ և գեղեցիկ դաշույն, —
յերպվում եմ այս դաշույնով, վոր յեթե. Բալթազարին
մի դժբախտություն պատահի, յես կպատռեմ սրանով իմ
սիրտը:

Իշխանի պալատում զանազան լուրեր եյին պատում
Շեյխի «փառահեղ» հաղթանակի մասին: Իշխանի պա-

լատը խրախնճանում եր մոտալուս այդ հաղթանակի պատվին։ Ալալիան ոտար եր այդ խրախնճանքին։ Ալալիային թվում եր, վոր իր հոր ամբոցը Բալթաղարի դիակի շուրջը պար ե բռնել և հրճվում ե, նայելով նրա անշունչ դիակին, վոր ընկած ե անոպատում։

Ալալիայի տանջանքներն առավել ևս մեծացան, յերբ նա Բալթաղարի հավատարիմ Բեն իսմայիլից իմացավ այն գաղտնիքը, վորը Բալթաղարը չկամեցավ հաղորդել նրան, գուցե չվստահելով նրան իշխանական հանդամանքների պատճառով։

Ալալիան այժմ դիտեր ամեն ինչ։ Նա այլևս կասկած չուներ, վոր Բալթաղարը Շեյխի դեմ կռվում եր իր պատճառով։

Բալթազարի բանակը պաշարված եր: Շեյխն ավելի
ու ավելի սեղմում եր ողակը: Լեյտենանտ Թիշը վաղոց
կորցրել եր հույսը:

Չուրն արդեն սպառվելու վրա յեր: Բալթազարը ևս
սկսեց անհանդստանալ, վորովհետեւ բոլոր փորձերը՝
սուրհանդակակ ուղարկել ովագիս, ապարդյուն անցան:
Մնում եր գործադրել վերջին յելքը՝ ամբողջ ուժով
վճռական գրոհի դիմել:

Յերկու կողմերը բաղխվեցին անզիջող ուժով:

Սոսկալի յեր կոփիլը: Աւել ճակատամարտում
խառնվել եր ամեն ինչ: Թնդանոթների և ձեռքի ռում-
բերի վորոտից, գնդացիրների ու հրացանների ճայ-
թյուններից, մեռնողների ու վիրավորների վերջին ճի-
շերից անապատը մի աննկարազգելի քառսի յեր փոխ-
վել, վորի մեջ գերիշտում եր միայն մի միտք, մի
ձգուում—սպանել, կոտորել, վոչնչացնել: Ֆանատիկ
ամբոխը «սրբազան» պատերազմի յերանություններից
և առազա թագավորի լիառատ խոստումներից վոգեոր-
ված, առաջ եր նետվում, ապավինած «ալահի ու դո-
րանի» պաշտպանության:

Բայց չոգնեցին վոչ զորանը և վոչ ել «սրբազան»
պատերազմի համար նրանց անձն եր անխոցելի: Ֆրան-
սիական թնդանոթներն ու ձեռքի ռումբերը, գնդացիր-
ների հետ միասին հնձում եյին նրանց:

Յերեկու կողմերն ել թուլանում եյին, սակայն ողա-
կը Բալթազարի բանակի համար թուլացել եր և լեյ-
տենանտ Թիշին հաջողվել եր թշնամու թիկունքն անց-
նել: Յերբ Թիշի ջոկատը մրրկային գրոհով հարվածեց

թիկունքից, Շեյխի բանակը ցնցվեց և ասես մի մանկական խաղաբուրդ խորտակվեց:

Շեյխի բանակը փախուստի դիմեց:

Սկսվեց անյերևակայելի խուճապ: Թրանսխական բանակը կրնկալոխ հետապնդում եր փախչողներին:

Կատաղած և հուսահատված ֆանատիկ բանակը փախչում եր առանց յետ նայելու, միմ յանց կրխկալով: Յեվ փախչող այդ ամբոխը կատարեց իր վերջին նախճիրը:

Հազիվ զսպելով իր արտասուքները, Բալթաղարը գրկախառնվեց իր հավատարիմ մի աչքանի Բեն Աբասի հետ...

Աննկարագրելի յեր Բալթաղարի բանակի վողեռորությունը. Բեն Աբասի բերած ջուրը փրկեց բանակը. Հաղթությունը լիակատար եր:

Բազմահազար աննպատակ զոհեր տալուց հետո, զայրացած խաժամուժը, իր կյանքը փրկելու համար, բրոնեց իր առաջնորդ Շեյխին, կտրեց նրա գլուխը և ինչան հաշտության, ուղարկեց Բալթաղարին:

Բանակի հաղթության լուրը հատուկ սուրհանդակով ովազիս հասավ: Ամբողջ ովազիսը թաղվել եր առատ կեր ու խումի մեջ: Յերեք որ ու յերեք դիշեր ընդհանուր հրամանատարի կարգադրությամբ տոնակատարություն եր տեղի ունենում ովազիսում:

Ամբողջ ովազիսը զարդարված եր գորգերով, ծաղկիկներով, մոմերով և դրոշակներով: Ովազիսը տոնում եր Բալթաղարի հաղթանակը:

Տոնում եր և Ալալիան... Բայց խորը վշտի և սպիտեց եր ցեղապետ Բեն Ալիի ամրոցը: Յեղապետն ու Սահարայի «գիտնականը» սարսափահար ելին:

Ուրախ եր Ալալիան, հպարտ և յերջանիկ. չկարայի լեռ ծեր Շեյխը, նրա գլուխն ընկած եր Բալթաղարի վոտքերի տակ:

Բալթաղարի առաջին գործը յեղավ սուրհանդակ ուղարկել Մորիսին հայտնելու Շեյխի բանակի ջախջախումը:

Մորիսի բանակը պատրաստ եր: Նա սպասում եր Բալթաղարի սուրհանդակին, ճանապարհվելու դեպի Մարոկո:

Եղմոնը Մորիսի մոտ եր, նրանք հավաքվել եյին մերջին անդամ ուսումնասիրելու դրությունը:

Բալթաղարից բաժանվելով, նա զնաց գուարեղների մոտ, զեկավարելու նրանց շարժումը: Դուարեղների շարժումը հաջող վերջավորություն եր ունեցել, Փրանսիական գաղութային բանակը դուրս եր չպրտվել դուարեղների սահմաններից:

Եղմոնն այդուղից անապատի միջով անցնում և Մարոկո:

Մարոկոն մեծ պատրաստություն եր տեսնում, աղստամբնելու խսպանացիների և Փրանսիացիների դեմ: Մանրամասն ծանոթանալով դրության հետ, Եղմոնը վերադարձավ Մորիսի մոտ, Մարոկոյի վրա արշավելու պատրաստություններն արագացնելու: Բայց Մարոկոյի վրա զնալու համար նրանք ճանապարհին ունեյին յերկու խոչոր խոչընդոտ. առաջինը կրօնապետ Շեյխ Ռէֆիսլամի Փանատիկ բանակն եր: Անհնար եր անցնել անապատն առանց ընդհարմելու Շեյխի հետ, իսկ Շեյխը հսկա բանակ ուներ: Այդ մեծ դժվարությունը պիտի վերացներ Բալթաղարը, վորը մեծ հաջողությամբ կատարնց և ճանապարհն այժմ տպատ եր: Սակայն մնում եր յերկրորդ խոչընդոտը. դա ովաղիսի բերդն եր: Հեղափոխական բանակը Մարոկոյի զնալու համար առանց Փրանսիացիների հետ կույի բռնվելու, չեր կարող անցնել:

Ճեղապետ Բեն Ալին կրկին փակվել եր իր ամրոցում. նա «հիվանդ» եր: Ընդհանուր հրամանատարն արդեն զիտեր, վոր անվերականդնելիորեն կորած ե ցե-

Դապետի ու երքը, և աշխաթն այլես մերժում ե յին-
թարկվել Բեն Ալիի հրամաններին: Բալթաղարը մտո-
ծում եր ցեղապետի գաղտնիքը բաց անել, մանավանդ,
վոր ընդհանուր հրամանատարը հաճախ աշխատում էր
այսպես թե այնպես արդարացնել ցեղապետին: Սակայն
Բալթաղարը հապաղում եր:

Ցեղապետը նոր ծրագիր ուներ. նա պարտվել էր,
վորովհետև Շեյս-Ռուֆիսլամն այլես գոյություն չու-
ներ, և իր «մեծ» հույսերը վոչնչացել եյին: Մնալ արդ-
արհամարհված դրության մեջ՝ նա հանդուրժել չեր
կարող:

Ցեղապետի մեջ արթնացավ մի գաղանացին ատե-
լություն դեսլի Բալթաղարը: Բալթաղարն եր պատճա-
ռը, վոր ինքն Ռազնի թագավոր չեր, Բալթաղարը յե-
ղավ պատճառը, վոր պարագից իր արքայական բարե-
կամը և նրա գլուխը կտրեցին:

Կատաղած ցեղապետը գիշեր ցերեկ այս մասին եր
խոսում և դառնագին գանգատվում իր բարեկամներին՝
բարձր մինարեյի վրա որեկան յերեք անդամ վոռնացող
մարաբույին և Սահարայի «գիտնականին»:

Բալթաղարի հաղթությունը պատճառ յեղավ, վոր
Սահարայի բոլոր ծայրերից զունդ-գունդ աշաները և
կայիդները գան բորջ, իրենց ուրախությունը հայտնե-
լու այդ փառահեղ հաղթության համար: Կարմիր ծի-
րանիներն ուսերին, ցեղապետներն անընդհատ զնում
եյին ու գալիս, բայց ցեղապետ Բեն Ալին իր մեծ դահ-
լիճից գուրս չեր գալիս:

Ցեղապետն իր դառն որերն եր վողբում, յերբ մի որ
մարաբուն շատ խորամանկ կերպով փափաց ցեղապե-
տի ականջին, վոր Ալալիսան մտերիմ հարաբերության
մեջ և Բալթաղարի հետ:

Ցեղապետը սաստիկ կատաղեց: Ցեղապետը մարա-
բույին կնության եր տվել իր նաժիշտներից մեկին: Մա-
րաբույի նոր կինն այդ գաղտնիքը հայտնել եր ամուս-
նուն, իսկ նա յել, առանց բոպե կորցնելու, շաապել եր
այդ «վոճիրը» բանալու:

Ցեղապետի, մարաբույի և Սահարայի «գլխանական»-ի կրօնական զգացմունքները խորը կերպով վիրավորված ենին:

Մի «գյալվուր», մի անհավատ քրիստոնյա ոլղծում և Մահմեդի «սուրբ» կրօնը: Այդ անհանդուրժելի յէ:

Ցեղապետը զորանի վրա, «գլխանականի» և մարաբույի ներկայությամբ, ուխտեց վրեժինողիր լինել թե Ալալիայից և թե Բալթազարից:

Ցեղապետը բարկությունից խեղդվում եր, նա հազիվ եր կարողանում չնչել. քաղցը շարրաթը և հաշիվ թանձը ծուխը չեյին աղդում:

Ցեղապետն իր մոռ կանչեց մարաբույի կնոջը և նրան յերկար հարցաքննեց Ալալիայի և Բալթազարի կազի մասին:

Մարաբույի կինը աղատմեց բոլորը: Ցեղապետը լոռմ եր կարմբած դեմքով և դուրս ընկած աչքերով:

— Սլավան միայն իր մահով կարող ե մաքրել այս արատն իմ ընտանիքից, —ասաց ցեղապետը թղթի մեջ փաթաթած մի փոշի տալով մարաբույի կնոջը:

— Դու այս թույնով պետք ե թունավորես Ալալիային: Նրա մահից հետո խօստանում եմ քեզ տալ Ալալիայի ամբողջ արդ ու դարդը, —ավելացրեց ցեղապետը խոժուած:

Մարաբույի կինը դուրս դնաց թույնը ձեռքին, ցեղապետի հրամանը կատարելու:

Ինն իսմայիլն ել դուրս յեկավ իր թաղստից և շտապեց ինն Արասի մոռ:

Նոր եր իր տունը հասել մարաբույի կինը, վոր նրան ձերբակալեցին թույնը ձեռքին...

Այդ նույն որը Բալթազարը ցեղապետի պետական դավաճանության բոլոր փաստերը զեկուցեց սպայակույտի նիստին:

Սպայակույտը վորոշեց անմիջապես հանել նրա վրայից կարմիր բուռնուաց և նրան զինվորական ատյանին հանձնել:

Յեղապետին կանչեցին բորջ։ Սպայակույտը լուս
նոտած եր սպասողական, յերք ներս մտավ ցեղապետ
Բեն Ալին կարմիր ծիրանին ուսերին։

Ընդհանուր հրամանատարը խիստ զայրացած, ցե-
ղապետին ցույց տվեց այն դրությունը, վոր նա գրել
եր Շեյխ Ուլ-Խուլամին։

Յեղապետը ցնցվեց։ Ընդհանուր հրամանատարը
վոտքի կանգնեց։ սպայակույտը հետևեց նրան։

— Հանուն Փրանսիական ժողովրդի և հանուն
Ֆրանսիական հանրապետության նախագահի, քնզ
դրկում եմ կարմիր ծիրանի կրելու իրավունքից, յև եմ
վերցնում քո բոլոր պատվանշանները և քեզ հանձնում
եմ զինվորական ատյանին, վորպես պետական դավա-
ճանի, — ասաց ընդհանուր հրամանատարը հանդիսա-
վոր։

Վոստիկաննապետն անմիջապես մոտեցավ ցեղապե-
տին և նրա ուսերից վերցրեց կարմիր ծիրանին։ Յեղա-
պետը գունատ եր, ինչպես դիմակ։ Նա հաղիսվ եր վոտքի
վրա կանգնել և վոչ մի բառ չարտասանեց։

— Տարեք, — ասաց հրամանատարը։

Զինված պահակը, շրջապատած ցեղապետին, ո-
վազիսի միջով տարալ բանտ, առանց բուռնուսի, ա-
ռանց պատվանշանների։ Յերբ անցնում եյին շուկայից,
ժողովուրդը հրճվանքից ցույց սարքեց և նույնիսկ փորձեց
խլել զինված պահակից կեղեքող և բռնակալ ցեղապե-
տին, վորպեսդի նրա դատավճիռն ինքը կարդա։ Զայ-
րացած ամրոխը քարեր եր նետում ցեղապետի վրա և
հայհոյում։

Հանկարծ ցեղապետն որորվեց, ճիչ արձակեց և իր
ամբողջ հասակով փուլեց ավագի վրա։

Յեղապետ Բեն Ալին մեռել եր...

Յեղապետի մահվան լուրը չտեսնված արագությամբ
տարածվեց ամբողջ անապատում։ Զրեշ-ցեղապետն այ-
լսո չկար, իսկ բանտի խուցերում փակված եյին Սահա-
րայի «դիտնականը», մարարուն և իր կինը, մեղաղը վե-
լով վորպես մեծ վոճիրի մեղսակիցներ։

Ալալիան գլխին դցած սև ու յերկար քողը, իշխան
Բեն Ալիի սուզն եր պահում: Ամբողջ որերով նա կանգա-
նած եր բարձր աշտարակի այն պատուհանի առաջ, վորո-
տեղից յերեւում եր Բալթաղարի վիլլան: Մենակ եր մնա-
ցել Ալալիան լայնածավալ Սահարայում:

Մենակ եր ու վորը: Յեվ նրա միակ յերջանկությու-
նը Բալթաղարն եր:

Մութ մի գիշեր Բալթաղարը նոր եր վերադարձել
ցեղասպետ Բեն Ալիի ապարանքից և պատրաստվում եր
անկողին մտնելու, վոր հանկարծ բաղխեցին իր դուռը:
Յերբ զուսը բաց արեց, յերեք անծանոթ արարներ ներս
մտան: Բալթաղարը շփոթված և զարմացած նայում եր
մերթ սրան, մերթ նրան:

— Մի՞թե այնքան փոխվել եմ, վոր չես ճանաչում, —
ասաց արարներից մեկը, հանելով կեղծ մազերը:

— Եղմո՞ն, — բացականչեց Բալթաղարը, գրկախառ-
նը վելով Եղմոնի հետ:

Մորիսն ուղարկել եր Եղմոնին տեսնվելու Բալթա-
ղարի հետ և այնտեղից Մարտիկիո գնալու: Եղմոնը և Բալ-
թաղարը նստած դեմ առ դեմ խօսեցին յերկար: Ամեն
ինչ պատրաստ եր: Բալթաղարը և Եղմոնը համաձայն
եյին բոլոր կետերում: Մորիսի բանակը կարող ե առաջ
շարժվել, Բալթաղարի բանակը կմիանա նրան:

Դեռ լույսը չբացված, Եղմոնը և Բալթաղարը կրկին
գրկախառնվեցին և Եղմոնն անմիջապես դուրս դնաց իր
ընկերներով ու անհայտացավ անսպատի անսահմանու-
թյան գրկում:

Հետևյալ որը Բալթազարը խորհրդակցեց կոմիտեյին
ընկերների հետ:

Յերկու որից խմբերը պետք է կենտրոնացած լինելին
վորոշված կետերում:

Վճռական բոպեները մոտենում եյին: Բալթազարը
վերջապես պետք է պատռեր կեղծիքի թանձր քողը և
հրապարակով պատերազմ՝ հայտարարեր իր «ցեղակից»
բուրժուազիային: Բեն Արասը՝ մի աչքը կազած, յեր-
կար փայտը ձեռքին, իր անբաժանելի ստվերի հետ, Բալ-
թազարի մոտ եյին: Բալթազարը տալիս է վերջին հրա-
հանգները: Ամեն ինչնախառնված է նաև Արալիայի
համար. և այդ դործը հանձնված է Բեն Խօմայիլին: Բեն
Խօմայիլը դուրս դնաց: Մանր և խորհրդավոր բոպեներ:
Բալթազարը և Բեն Արասը լուս կանգնած եյին զեմ տո-
ղեմ: Յերկուսն ել կարծենս անհամ բեր մի վորեն բանի
եյին սպասում: Բալթազարը նայեց Ժամացույցին: Ժամը
առավոտյան յերեքն եր: Անցավ մի քանի բոպեն և դուռը
բաղկնեցին: Բալթազարը ցնցվեց, նայեց Բեն Արասին:
Բեն Արասն ուսը բարձրացրեց, բուռնուան ուղղելով:

Բալթազարը կապեց ատրճանակը, վեցըքց հեռաղի-
տակը և փաթաթվելով բուռնուանի մեջ, նայեց շուրջը,
ստուգեց ամեն ինչ ու դառնալով Բեն Արասին, ասաց.

— Գնանք...

Լուս և հանգիստ դուրս յեկան վիլայից: Բալթա-
զարը պարտեզի մեջ մի բոպեն կանգ տռավ, նայեց զե-
ղեցիկ վիլային, վարդի ծառուղիներին և արագ քայլե-
րով դուրս դալով պարտեզից, անհայտացալ անապատի
անսահմանության մեջ, Բեն Արասի հետ...

Բալթազարի «դավաճանության» լուրը ցնցեց կենտ-
րոնական բերդը: Իրար յետևից հեռադրեր տեղացին
կենտրոնական կառավարության գրասենյակը:

Բերդի թնդանոթները վորոտում եյին. բանակը, ընդհանուր հրամանատարի ղեկավարությամբ, անապատում կռվում եր Մորիսի ապստամբ բանակի գեմ։ Բալթազարն իր բանակով շտապում եր Մորիսին ողնության։

Կոփը դեռ վճռական փուլին չեր հասել։ Յերկու կողմից ել կատաղի դիմագրում եյին։ Բերդի թնդանոթները վորոտում եյին իրենց ամբողջ ուժով, չափազանց մեծ զոհեր խլելով Մորիսի բանակից։

Բալթազարը մոտ ե. նա գրոհում ե ընդհանուր հրամանատարի բանակի վրա։ Կոփը սաստկանում ե։ Լեյտենանտ Ռիչն իր վաշտով շրջապատում ե Մորիսին։ Հանկարծ ահռելի մի պայթյուն... և փոշին ու ծուխը միախառնվում են միմյանց ու ծածկում յերկինքը։

Հրամանատարը կռվում եր Բալթազարի դեմ։ Հանկարծ հնչում ե Բալթազարի խիստ ձայնը։

— Առաջ...

Բալթազարի բանակը կատաղած վագրի պես վրա յերնկնում թշնամու բանակին։ Շփոթ ու իրարանցում թշնամու բանակում... .

Փախուսած...

Նահանջ...

Ընդհանուր հրամանատարի դիակն ընկած ե ավագի վրա... .

Բերդն ողն ե հանված, ֆրանսիական բանակը պարտված ե։ Կովից հետո Բալթազարն իր բանակը համախմբեց առաջ շարժվելու, սակայն Մորիսը չկար։

Մորիսը վիրավորված, դերի յեր ընկել լեյտենանտ

Ռիշի ձեռքը: Մի բողե շլոթվեց Բալթազարը, հարցական հայացքը դժելով նեն Արասի վրա:

— Մենք շարունակենք, իմ կապիտան, — ասաց նեն Արասը, յերկար փայտով տաք ախազր փորիչելով:

Վշտահար Բալթազարն իր վրեժինովիր հայացքը մի անգամ ել հառեց ողը հանդած բերդի փլատակներին. և հիշեց Մորիսի խոսքերը «Ֆրանսիա, յես վրեժինովիր կլինեմ քո դործած վոճիրների համար. Փրանսիական աշխատավորությունը յերկար չի հանդուրժի քո դաժան լուծը: Ֆրանսիա, դու արդեն մահամերձ ես և դու կմեռես, և քո ներկան իր ամբողջությամբ գերեզման կիջնի»:

Թիարեթի կայազորը շտապով հասալ խորտակված բերդը: Բայց Բալթազարն արդեն շատ հեռու յեր: Իսկ Մորիսը վիրավոր, պառկած եր Գաստոնի հիվանդանոցում:

Գաստոնը Մորիսի մանկական ընկերն եր. նա տխուր նստած եր մահվան դատապարտված իր ընկերոջ մահամեկալի մոտ: Պատրաստվում եյին Մորիսին ֆրանսիա տանելու: Ֆրանսիական բուրժուազիան ցանկություն եր հայտնել «դավաճան» Մորիսի դատավարությունը կտարել Փարիզում:

Վերջին ժամերն եյին... Գաստոնը լուռ դիտում եր Մորիսի հանդարտ դեմքը: Նրանք լուռ նայում եյին միշյանց, ասես ինչ-վոր բան եյին ասում...

— Դու պարտավոր ես, — ասաց Մորիսը մեղմ:

Գաստոնը ցնցվեց: Կայազորը ռազմական պատրաստությամբ սպասում եր հիվանդանոցի առաջ...

Մորիսը հենված Գաստոնի ուժեղ ուսին, դուրս յեկալ հիվանդանոցից: Դռան առաջ Գաստոնը կրկին դրկեց Մորիսին, համբուրեց ջերմադին, աննկատելի նրա ձեռքի մեջ սողացնելով փոքրիկ մի փաթեթ... Գաստոնը այլիս անկարող եր մնալ Մորիսի հետ. ներս վազեց և ընկալ Մորիսի դատարկ մահճակալի վրա, փակեց արցունքով լցված աչքերը:

Մորիսը դանդաղ և հանգիստ իջնում եր հիվանդա-

նոցի սանդուղքներից, զգուշությամբ գրապանում տեղափորելով ընկերոջից ստացած թույնը: Մորիսը գնում եր դանդաղ, բայց հաղարտ, չորս կողմից իրեն ուղղած հրայաններով շրջապատված... Յերկար ու տաղտկալի անապատը կարելով, կայազորը հասավ Բելաբեսի բորջը:

Մորիսին ձերբակալելու լուրը վայրկենապես տարածվեց «Յերկնային դրախտում»: Ալֆա քաղող բանվորները հուժիու ցույց կազմակերպեցին, բայց նրանք անզոր եյին մերկ ձեռքերով կայազորից խլելու Մորիսին:

Յերեկոյան ցույցը կրկնվեց, այս անգամ ավելի կատաղի ու համառ: Կայազորը զենքի դիմեց և ալֆայի թիւերի տակ բազմաթիվ վիրավորներ և սպանվածներ վտնեց:

Դեռ արշալույսը չբացված, կայազորը ճանպարհ ընկալ, ալֆայի դաշտերն արյունով ներկելուց հետո:

Ցնծում եր Փարիզը, ցնծում եյին Որանն ու Ալժիրը: «Դավաճան» Մորիսը ձերբակալված եր, նա շուտով կլինի Ալժիր և ապա Փարիզ: Որանի կայարանը յերկու կելումետք արամագծով շրջապատված եր զորքով:

Մորիսի գնացքն անցում եր... Մորիսն արդեն Ալժիր եր... Ամբողջ կայարանը շրջապատված եր, իսկ քաղաքի փողոցների անկյուններում ամրացրել եյին գնդացիրներ, ուժեղ դինվորական խմբերով:

Մորիսի քաղաքից ծածկված ավտոյով և զինվորական բանակով շրջապատված տանում են քաղաքի միջով:

— Ո՞ւոա՞... — կանչում եր ամեն կողմից խոնամած ամրություն և ծաղիկներ շպրտում Մորիսի ավտոյի վրա:

Կատաղած վոստիկանությունը հաղիվ եր զսպում իր պաղարյունությունը:

Նավհանգստում...

«Վիկտոր Հյուդո» զրահակիրը խարիսխը քաշած, սլատրաստ սպասում եր: Նավհանգստում զինվորական գրություն եր...

Մորիսը յերկու ժանդարմի ուղեկցությամբ առնդուղներով նավ և բարձրանում:

— Ո՛ւռա՛...

— Կեցցե՛ Մորիսը...

— Կորչի Փրանսիական բուրժուադիան... — թնդաց-
նում են բանվորները նախահանգիստը:

Վոստիականնությունը ձեռքը զնում և ատրճանակին
և աջ ու ձախ նայում ջղային:

— Ո՛ւռա՛...

— Կեցցե՛ Մորիսը...

— Կորչի Փրանսիական իմպերիալիզմը... — բացա-
կանչում և բազմությունն ամեն կողմից...

Պայթում են վոստիկանների ատրճանակները:

Պատասխանում և բանվորությունը...

«Հիկտոր Հյուգոն» սուլում և և դուրս սողում նեղ
նախահանգստից, ընդունելով ֆրանսիայի ուղղությու-
նը, իր յետևում թողնելով նախահանգստի մայթերի վրա
թուփած բանվորների դիակները:

Նավի վրա յերև. Փյուլետան: Նա վորոշել եր ան-
ողայնան հետեւել Մորիսին:

Մորիսը բանտարկված եր նավի յերկաթե խցում,
իսկ գոան առաջ կանգնած եր զինված պահակը:

Նավը դնում եր արագ բնթացքով. ծովը հանդիսա-
նում եր կապույտ ծովը, թաղված իր խորը վշտերի մեջ:
Փյուլետան սիրում եր Մորիսին, իսկ Մորիսը նույնիսկ
չգիտեր այդ: Փյուլետան այլիս հույսի նշույլ անդամ
չուներ, վոր Մորիսը կիրքկվի. Մորիսը դատապարտված
եր գնդականարության, նա պետք ե մեռներ և յերբեք
չեր իմանա Փյուլետայի սիրո մասին...

Փյուլետան հենված ճաղերին, տեսնում եր ծովի ան-
սահմանությունը և մաքով թռչում Փարիզ: Ահա Մորի-
սին ինցնում են Լիոնի կայաբանում: Փարիզի կայա-
զորը նըան շրջապատած, տանում և բանտ, իսկ այնտե-
ղից՝ զինվորական ատյան:

Նիստը բացվում ե. մի խումբ ծերացած, հնացած և
գունաված ծերունիներ գրավում են դատավլորների

բաղկաթուները, նախորոք Մորիսի մահվան դատավճիռը կայացրած:

Թղթերի մեջ թաղված, ակնոցների տակից նայում և շուրջը հասարակական մեղադրողը: Ահա խոսում են նաև Ֆրանսիայի ամրող «մեղքերը», սկսած մեծ հեղափոխությունից մինչև այսոր, բարդում և Մորիսի վրա:

Ահա և Մորիսը. լուրջ ու անտարբեր նոտած մեղապարտի աթոռին, շրջապատված դինված պահակով: Թատապաշտպանը մի քանի անկապ խոսքեր և մի անփառունակ պաշտպանողական և արտասանում... Դատավորներն անցնում են խորհրդակցության դահլիճը, «վեճելու» Մորիսի մեղքերի կշռի մասին: Լոկ ձեւականություն... Ահա նրանք դուրս յեկան և կարգում են անողոք դատավճիռը.

— Գնդակահարել...

Տանում են Մորիսին շրջապատած...

— Ա՛խ, Մորիս, Մորիս... — սարսափահար ճշաց ժյուլետան և ուշաթափ ընկապ նավի տախտակամածի վրա...

Նավը ալժնում եր իր ամբողջ թափով և յերկաթե ամբոցն առաջ եր շարժվում, ինչպես առշեղի փոքր կտորը ծավի վրա...

Արշալույսը բացվում եր: Կարմիր հօրիզոնը միախառնվել եր ծովի կապույտին և սուացել մի չքնաղ վրայն:

Նավը արթնանում ե: Սկսվում է շարժում, յեռուղեն: Մեծ զգուշությամբ բաց են անում Մորիսի յերկաթե բանափ զուրը և սարսափած յետ նահանջում: Մորիսը մեռած եր... Ներս ե մտնում նավապետը:

Մահը վավերացնում են բժիշկները:

Մեռած...

Թունավորված...

Ծեվ մի նամակ սեղանի վրա: Նավապետը բացում է նամակը իր կաթինետում և կարգում հետեւյալը: «Պահանջում եմ արեւելքի ջրերում իմ դիակը ծովը նետեք:

Անհծում եմ այն հողը, վար Ֆրանսիա յե կոչվում։ Ապրել
եմ ազատության համար և մեռնում եմ ազատության
համար։ Մորիս։

Հրամանատարը նամակի բովանդակությունը հեռ-
ուագրով հայտնում է Փարիզ և ոտանում է լակոնական
պատասխան՝ «Հարգել»...

Ուշ գիշեր եր, նավը թափվել եր խորը քնի մեջ։
Հրամանատարական կազմը հավաքվել եր զբահակրի յե-
տելիք մասում։ Ճաղերի վրա թեք դիրքով ամրացված եր
մի լայն տախտակ։ Ծովային զինվորները շրջապատել
ելին տախտակը, հրացաններն ուղղող բանած։ Բերում են
Մորիսի դիակը բրեղենտի տուրքակի մեջ, դնում են թեք
տախտակի վրա, վոսքերին ահագին ծանրություններ
կազելով։ Փողերն հնչում են, նավը մի ակնթարթ կանոց
և տոնում։ Կրկին հնչում են փողերը, հրամանատարը
դիմով նշան և տալիս։ Բարձրացնում են տախտակը և
Մորիսի դիակը սահելով։ Չուրն և ընկնում...

Գալիս և ժյուլետան հերարձակ, սև քողը ուսերին։
Ծովի ուժեղ քամին ծածանում և ու քողը, ինչպես մի
ազատամբ դրոշտկ։ Նավն ընդունում և իր ընթացքը,
իսկ ժյուլետան ճանկելով ումուր բանած զրահակրի ճա-
ղերը, հայսացքը հառել և այն կետին, ուր ծանր ար-
ճիճը վոտքերից կապած, խորասուղվեց։ Մորիսի
դիակը...

Փշում և ուժգին քամին և իրրե սպո բողոքի դրոշակ,
ծածանում և ժյուլետայի ուսերին դցած սև քողը...

4МС 2 п-50 ЧМФ-

891.99
F-24

Г.П.Б. в Ленгрэ
А. 1938 г.
Акт № 229

СТ. БАГДАСАРЯН
В СТРАНЕ ЖАЖДУЩИХ
ГИЭ ССР. Армения Эривань



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027102

A 4
27102